# ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

## Հօտփի եպսկոպոս հիւրանոցի ի Ս. Վլաս եւ քահ. Լեւոնեան հայ վարժարանի

Վիեննա 1961

ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ

# ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ Ի ՎԻԵՆՆԱ

ՀԱՏՈՐ ԺԱ.

ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ
ՀՌՈՄԻ ՀԱՅՈՑ ՀԻՒՐԱՆՈՑԻ Ի Ս. ՎԼԱՍ
ԵՒ ՔԱՀ. ԼԵՒՈՆԵԱՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՆԻ

HAUPT-KATALOG

DER

# ARMENISCHEN HANDSCHRIFTEN

HERAUSGEGEBEN VON DER

WIENER MECHITHARISTEN-CONGREGATION

BAND XI.

KATALOG DER ARMENISCHEN HANDSCHRIFTEN
DES ARMENISCHEN HOSPIZES ZUM HL. BLASIUS IN ROM
UND DES PONT. LEONIANO COLLEGIO ARMENO, ROMA

091(=91.99)
Ա 38

ՑՈՒՑԱԿ

# ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

ՀՌՈՄԻ ՀԱՅՈՑ ՀԻՒՐԱՆՈՑԻ Ի Ս. ՎԼԱՍ
ԵՒ ՔԱՀ. ԼԵՒՈՆԵԱՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՆԻ

ԿԱԶՄԵՑ

Հ. ՆԵՐՍԷՍ Վ. ԱԿԻՆԵԱՆ

ՎԻԵՆՆԱ 1961

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

---

KATALOG

DER

# ARMENISCHEN HANDSCHRIFTEN

DES ARMENISCHEN HOSPIZES ZUM HL. BLASIUS IN ROM
UND DES PONT. LEONIANO COLLEGIO ARMENO, ROMA

VON

P. NERSES AKINIAN

WIEN 1961

MECHITHARISTEN-BUCHDRUCKEREI

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ Ի ՀՌՈՄ

# KATALOG DER ARMENISCHEN HANDSCHRIFTEN DES ARMENISCHEN HOSPIZES ZUM HL. BLASIUS IN ROM

Papst Pius V. (1566—1572) hatte den Armeniern die Kirche zur hl. Maria von Ägypten samt den umliegenden Hausern als Hospiz geschenkt. Lange Jahre beherbergte dasselbe nicht nur armenische Wallfahrer wie 1611 unter anderem den Priester Simeon aus Polen, der in seiner Reisebeschreibung darüber berichtet, sondern auch Heimatvertriebene und Fluchtlinge, vor allem wahrend der Katholikenverfolgungen in der Turkei im 18. und 19. Jahrhundert. Zu dieser Zeit haben viele armenische Bischofe, Priester u. a. hier die sichere Zuflucht gefunden und beschaftigten sich wissenschaftlich vor allem mit Übersetzungen oder Abschreiben der mitgebrachten alten Handschriften. Nach deren Tod blieb alles als Eigentum dieser Kirche. Die noch erhaltenen Handschriften mit arabischen und lateinischen Zahlen beweisen, daß dieselben hie und da katalogisiert wurden. Von diesen Katalogen ist nichts auf uns gekommen.

Als zu Beginn dieses Jahrhunderts die Gemeindeverwaltung von Rom die Kirche zur hl. Maria von Ägypten und das Hospiz gekauft hat, wurden deren bewegliche Güter in der Kirche zum hl. Blasius und in dem anschließenden Haus untergebracht. Diese armenischen Handschriften, 66 an der Zahl, habe ich im Mai-Juni 1936 nach dem Inhalt geordnet, neuerlich numeriert und katalogisiert.

In dieser Ausgabe sind die Handschriften nach der Neunumerierung angeführt, die alte Signatur steht daneben.

### ABKÜRZUNGEN

Schr. = Schreiber, O. = Ort, D. = Datum, s. = Jahrhundert, Min. = Miniatur.

1/3 Teile aus dem Alten Testament. Schr., O. u. D. unbekannt, s. 15

2/40 Die Prophetien des Jeremias und Daniels. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

3/19 Evangeliar (in türkischer Sprache). Schr., O. u. D. unbekannt, s. 18. (lückenhaft).

4/36 Das Lektionarium der polnischen Armenier. Schr. wahrscheinlich Sargis aus Tokat, O. Rom (?), s. 18.

5/2 Kurzgefaßtes Lektionarium. Schr., O. u. D. unbekannt, s. 18. (?).

6/10 Lektionarium-Direktorium. Schr., O. u. D. unbekannt, s. 18. Zum Schluß: „Jacobus Nigazzenus Armenus sacerdos“ ist vielleicht der Name des Schreibers?

7/18 Meßbuch. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

8/58 Meßbuch. Schr., O. u. D. unbekannt, vor 1682.

9 52 Die Lieder des Karsamstag. Schr., O. u. D. unbekannt, s. 17. (?).

10 15 Breviarium des Dominikanerordens. Schr. Zacharias Khoškašinetzi, O. Florenz, D. 1570.

11 16 Das romische Rituale. Schr., O. u. D. unbekannt, s. 18. (?).

12 23 Das Rituale der polnischen Armenier. Schr. Ohan Cerik, O. Elisabethopol, D. 1768.

13 46 Das romische Rituale. Schr. u. O. unbekannt, D. nach 1772.

14 22 Die Rangstufen des Vardapets. Schr. u. O unbekannt, s. 18. 19.

15 11 Das griechische Martyrologium. Schr. Stephanos (Sohn des Priesters Husik), O. unbekannt, wahrsch. Argelan, D 1238.

16 34 Lesebuch aus dem Vater-(Einsiedler)-leben. Schr. Asar aus Sebaste, O. u. D. unbekannt, s. 17.

17 4 Kommentare zu Daniel und zur Apokalypse des Cornelius a Lapide. Schr. Stephanos, O. Konstantinopel, D. 1750—1752.

18 14 Die Theologie des hl. Thomas v. Aquin Schr., O. u. D. unbekannt, s. 18.

19 33 Theologie (Verfasser unbekannt). Schr., O. u. D. unbekannt, s. 18.

20 43 Die Pforten der Philosophie von Clemens Galanus. Schr. M. G., O. Lemberg, D. 1675.

21 42 Kurzgefaßte Disputationen uber die Metaphysik von Clemens Galanus. Schr. Zacharias Sunetzi, O. Lemberg, D. 1663.

22 28 Medulla theologica von Ludovicus Parisiensis (Abelly?), ubersetzt vom Vardapet Petrus aus Tiflis. Schr. u. O. unbekannt, D. 1724—1744.

23 5 Medulla theologica von Ludovicus Abelly, ubersetzt von Gregor Priester Bałinean aus Achalzich. Schr. Gregor Pr. Bałinean, O. Rom, D. 1778.

24 55 Philosophica (Porphyr, Sokrates usw.). Schr., O. u. D. unbekannt, s. 17. (?).

25 37 Die Annalen des Mathaus aus Urha (Urfa). Schr., O. u. D. unbekannt, s. 17.

26 25 Die Chronik des Fr. Martini, ubersetzt von Nerses Palianentz 1348 in Avignon. Schr. Sahethdji Sargis Bischof aus Eudokia, O. Rom (?), D. 1723.

27 41 Die Chronik des Michael des Syrers. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

28 56 Auslese aus den Lamentationen des Gregor von Narek. Schr., O. u. D. unbekannt, s. 18.—19., Min.

29 38 Ein Sammelwerk von den armenischen Kirchenlehrern. Schr. Michael Sanasean, O. Erzerum (?), D. vor 1808 (siehe Nr. 37).

30 26 Die Geschichte der Entdeckung Amerikas. Schr. Johannes Kesaratzi, O. Jerusalem, D. 1753.

31 6 Das Werk des Arztes Amırdowlat: Fur die Unwissenden unbrauchbar. Schr. Sahethdji. O. Jerusalem und Rom, D. 1724.

32 51 Die Rhetorik Mechithars von Sebaste. Schr. Gregor Kesaratzi, O. Cäsarea (?), D. 1766.

33 24 Ein Sammelwerk geistlichen und weltlichen Inhalts. Schr., O. u. D. unbekannt, s. 14.

34 65 Die Geschichte der Kupferstadt. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

35 13 Die Geschichte des Pontianus (in türkischer Sprache). Schr. u. O. unbekannt, D. 1798.

36 12 Des Priesters Hakob Arabean's Licht des Glaubens. Schr. Hakob Arabean, O. unbekannt, D. 1769—1774.

37 32 Des Vardapets Michael Sanosean aus Erzerum Wahrheitswaffe. Schr. Mich. Sanosean, O. Kutaia. D. 1808.

38 52 Des Vardapets Johannes aus Erzerum Schild des Glaubens. Schr. unbekannt, O. Konstantinopel, D 1745.

39 48 Zitatenbuch. Schr. u. O. unbekannt, D. 1733.

40/64 Disputation mit den Armeniern. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

41/8 Katechismus und kurzgefaßte Theologie Mechithars von Sebaste. Schr. Bischof Hakob, O. Rom (?), D. vor 1728

42/21 Über die Sakramente der Kirche. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

43/27 Fragen und Antworten aus der Lehre der katholischen Kirche. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

44/20 Übung des Glaubensbekenntnisses. Schr. u. O. unbekannt. D. 1860.

45/44 Das Glaubensbekenntnis der armenischen Kirche. Schr., O. u. D. unbekannt, nach 1780.

46/57 Glaubensbekenntnis (in turkischer Sprache). Schr., O. u. D. unbekannt, s. 18.—19.

47/1 Die Predigtsammlung des Vardapets Khatschatur aus Erzerum. Schr. Hakob aus Konstantinopel, Bischof von Adana, O. Rom (?), D. 1728.

48/39 Predigtsammlung. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

49/45 Die Predigtsammlung des Gregors aus Tathew. Schr., O. u. D. unbekannt, s. 16.—17.

50/7 Des Giovanni Bona De sacrificio missae. Schr. Bischof Vrthanes, O. Rom, D. 1744.

51/29 Von den Nachlassigkeiten in der Zelebration der Messe. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

52/54 Die Pforte zu Gottes Barmherzigkeit Schr., O. unbekannt, D. 1702—1731.

53/17 Schone Betrachtungen. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

54/47 Geistliche Exerzitien. Schr. u. O. unbekannt, D. vor 1758.

55/49 Das Sühne- oder große Jubeljahr. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

56/60 Gebetbuch. Schr., O. u. D. unbekannt s. 19., Min.

57/61 Gebetbuch. Schr. Dominikus Priester (?), O. unbekannt, D. vor 1682.

58/66 Betrachtungsbüchlein Schr. der Priester Ohan, O. Giurgiov (Gheorgheni). D. 1729

59/67 Gebetbuchlein. Schr. Hakob aus Konstantinopel, Bischof von Adana, O. Rom, D. 1727.

60/59 Gebetbuch. Schr., O. u. D. unbekannt, s. 17.

61—62 62—63 Gebetbuch (in turkischer Sprache). Schr. u. O. unbekannt, D. 1810

63/30 Kalendarium. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

64/31 Kalendarium. Schr. Ohanes Sohn Cirik's, O. Elisabethopolis, Stadt der Armenier, D. 1768 (siehe Nr. 63).

65/53 Ephemeriden. Schr. u. O. unbekannt, D. vor 1731.

66/9 Breviarium Romanum. Schr., O. u. D. unbekannt, s. 17.—18.

67/35 Latein-armenisches Worterbuch. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

# KATALOG DER ARMENISCHEN HANDSCHRIFTEN DES PONT. LEONIANO COLLEGIO ARMENO, ROMA

Das armenische papstliche Kollegium von Rom (Pont. Leoniano Collegio Armeno) wurde von Leo XIII. mit dem Breve „Benigna hominum parens" vom 1. Marz 1883 gegründet und mit dem anschließenden Haus die herrliche Kirche San Nicola da Tolentino zur Verfügung gestellt.

Das Kollegium hat eine kleine Bibliothek, bestehend aus armenischen und fremdsprachigen Druckwerken. Darunter fand ich 1936 46 armenische Handschriften, die ich nach dem Inhalt geordnet, neuerlich numeriert und katalogisiert habe.

In dieser Ausgabe sind die Handschriften, wie in der vorhergehenden, nach dem Inhalt und nach der Neunumerierung angeführt, mit der alten Signatur nebenan.

## ABKÜRZUNGEN

Schr. = Schreiber, O. = Ort, D. = Datum, s. = Jahrhundert, Min. = Miniatur.

1/7 Tetraevangeliar. Schr. Anton, O. Keli, D. 1371, Min.

2/6 Tetraevangeliar. Schr. Timotheus, Sohn des Nater, O. Krim, D. 1384, Min.

3/1 Jerusalem, Lectionarium, Schr. Timotheus, Priester, O. Perugia, D. 1302, Min.

4/2 Lectionarium nach dem armenischen und byzantinischen Kalendarium Schr. Gregor, O. Erzingan (Kapos-Kloster), D. 1230, Min.

5/29 Rituale. Schr. unbekannt, O. Tathew, D. 1683, Min

6/22 Canon der Benediktion des Chrismas und der Priesterweihe. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

7/41 Hymnarium. Schr., O. u. D. unbekannt, s. 14./15., Min.

8/46 Hymnarium. Schr. Johannes Bischof, O. u. D. unbekannt, s. 14./15., Min.

9/13 Des Katholikos Johannes Geschichte Armeniens. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

10/17 Des Katholikos Johannes Geschichte Armeniens. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

11/16 Des Andreas Casareers Kommentar zur Apokalypse. Schr. Manuk, O. Konstantinopel, D. 1796, Min.

12/15 Des Nerses von Lambron Betrachtungen Schr. Johannes Priester Kyrłean (Kyrełean), O. Trapezunt, D. 1826.

13/28 Die Gebrauche der Hebraer. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

14/14 Die Chronik der Kirche von Trapezunt (die Handschrift ist lückenhaft), D. 1828.

15/3 Theologische Diskussionen über die Kirche. Schr., O. u. D. unbekannt, s. 18./19.

16/4 Des Stephanos Daštetzi's Widerlegung der Schrift „Glocke der Wahrheit" des Johannes aus Djulfa. Schr. unbekannt, O. Ardvin, D. 1838.

17/5 Von den göttlichen absoluten Vollkommenheiten. Schr. Melkon Łalphalcean, O. Ardvin (?), D. unbekannt, s. 18./19.

18/8 Theologie von Charmes. Schr. u. O. unbekannt, D. 1782.

19/9, 20/10, 21/11 Allgemeine Theologie des P. Thomas Kapuziners. Schr. P. Georg Srabian, O. Trapezunt, D. 1823—1824.

22/12 Der offenkundige Beweis. Schr. u. O. unbekannt, D. 1815.

23/18 Der Spiegel des Einflusses zur Widerlegung der irrigen Schrift des Srmakesch Manuel. Schr., O. u. D. unbekannt.

24/26 Zum Gebrauch der Beichtväter. Schr. Johannes Priester Kyrełean, O. Trapezunt, D. 1825.

25/27 Stephanos Roška's Moraltheologie. Schr. unbekannt, O. Stanislawow, D. 1728.

26/39 Moraltheologische Fragen. Schr. Johannes Priester Kyrełean, O. Satalia, D. 1829.

27/31 Der Römische Katechismus. Schr., O. u. D. unbekannt.

28/37 Erklärung der christlichen Lehre. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

29/43 Beweis des Primats des römischen Papstes. Schr. Johannes Priester Kyrełean, O. Trapezunt, D. 1824.

30/44 Beschreibung der vier letzten Dinge. Schr. Johannes, Priester Kyrelean, O. Trapezunt, D. 1825.

31/42 Spiegel der Heiligenleben. Schr., O. u. D. unbekannt, um 1850.

32/19 Fastenpredigten. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

33/20 Predigtbuch. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

34/30 Beweise gegen die Häresien. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

35/40 Geistlicher Garten (in türkischer Sprache). Schr. H. E. N., O. Konstantinopel, D. 1827.

36/23 Gebetbuch. Schr., O. u. D. unbekannt, vor 1728.

37/24 Gebetbuch. Schr., O. u. D. unbekannt, s. 18.

38/38 Haza kitab (türkisch). Schr., O. u. D. unbekannt, s. 19.

39/45 Gesangbuch (kirchliches). Schr., O. unbekannt, D. 1704.

40/32 Gartenbuch. Schr. Joh. Pr. Kyrełean, O. Trapezunt, D. 1850.

41, 42, 43/33—35 Kurze erbauliche Erzählungen. Schr. Joh. Pr. Kyrełean, O. Trapezunt, D. 1840—1841.

44/36 Eine erbauliche Geschichte. Schr., O. u. D. wahrscheinlich wie oben (Nr. 41).

45/25 Das Wörterbuch (eines gewissen) Jeremias. Schr. Minas Schoruthetzi Barukiazian, O. Adrianopel, D. 1724.

46/21 Naturhistorisches und industrielles Wörterbuch. Schr., O. u. D. unbekannt, s. 19.

Պիոս Ե. Քահանայապետ (1566—1572) շնորհած էր Հայոց Ս. Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցին եւ քովի տուները իբրեւ Հիւրանոց։ Երկար տարիներ ծառայեց ան պանդուխտ եւ տարագիր Հայերուն իբրեւ Հիւրանոց. 1611ին կ'օթեւանին այս տեղ Զաքարիա Վանեցի եւ Սիմէոն Լեհացի։ Վերջինս կը գրէ իր Ուղեգրութեան մէջ. «Հայոց եկեղեցւոյ անունն Սանթա Մարիա Էճիզիաքա, որ է Մարիամ Եգիպտացի» (էջ 130). «Եւ եկեղեցին Հայոց քարէ մեծ եւ տան տան քարէ ունէր վրան բնատուրաց. այլ եւ զարդարանք եպիսկոպոսաց, քահանայից եւ այլ կրօնաւորաց, տօշակ, անկողին» (էջ 92)։ Ապաստան գտած էին հոն յատկապէս ԺԸ. դարուն, երբ կաթողիկեայք կը հալածուէին օսմանեան պետութեան մէջ, բազմաթիւ եպիսկոպոսներ։ Կային անոնց մէջ գրագէտներ, որոնք բերած էին իրենց հետ ձեռագիրներ. կային նաեւ ուսումնականներ, որոնք կամ թարգմանութիւններով զբաղած էին եւ կամ կը պարապէին օրինակութեամբ։ Անոնց ձեռքէն ելած գիրքերը սեփականութիւնն կ'ըլլան Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցւոյն։ Այսպէս տակաւ առ տակաւ կազմուեցաւ Գրադարան մը, ձեռագիր եւ տպագիր մատեաններու։

Այժմ մեզի պահուած ձեռագիրներու կողքին դուրսը կամ ներսը կը նկատուին արտաքին, լատինական թուահամարներ, որոնք ցոյց կու տան, թէ ձեռագիրները մէկէ աւելի անգամներ համարագրուած եւ ցուցակագրուած են։ Այս ցուցակները մեզի չեն հասած։

Դարուս սկիզբը Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցին եւ Հիւրանոցը գնեց Հռոմի քաղաքապետութիւնը։ Եկեղեցւոյ եւ Հիւրանոցի շարժական գոյքերը փոխադրուեցան Հայոց Ս. Վլասի եկեղեցւոյ եւ անոր յարակից տան մէջ. անոնց հետ նաեւ Գրադարանը ձեռագիր եւ տպագիր գրքերով։

Այս տեղ, ի Ս. Վլաս, գտայ 1936. մայիս–յունիս 66 հայերէն ձեռագիր։ Դասաւորեցի զանոնք մեծութեան կարգով, համարագրեցի եւ ցուցակագրեցի։

Այս ցուցակն է, զոր կը հրատարակեմ, զատորոշած ըստ բովանդակութեան։

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱԽՏԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ

| Նոր- թիւ | Հին- թիւ | Մեծութիւն | Գիր | Ժամ. | Գրիչ | Տեղի | Բովանդակութիւն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 32,7 × 22,8 | բոլոր | ԺԵ դ | — | — | Մասունք հին Կտակարանին |
| 2 | 40 | 19 × 14,2 | նոտր | ԺԸ | — | — | Մարգարէութիւնք Երեմեայ և Դանիէլի։ |
| 3 | 19 | 22,7 × 16 | նոտր | ԺԸ | — | — | Աւետարան տաճկերէն |
| 4 | 36 | 20,2 × 17,7 | նոտր. բոլ. | ԺԸ | Սարգիս Թոխաթեցի? | Հռոմ՞ | Ճաշոց Լեհահայոց |
| 5 | 2 | 34 × 22,5 | նոտր | ԺԸ | — | — | Ճաշոց համառօտ |
| 6 | 10 | 26 × 20,2 | բոլոր | ԺԸ | — | — | Ճաշոց և Տօնացոյց |
| 7 | 18 | 23 × 16 | հին շղագիր | ԺԸ | — | — | Խորհրդատետր |
| 8 | 58 | 13 × 8 | նոտր | ԺԷ | — | — | Խորհրդատետր |
| 9 | 19 | 16,3 × 13,2 | նոտր | ԺԷ | — | — | Տաղք Աւագ շաբաթու։ |
| 10 | 15 | 22,5 × 16,4 | բոլոր | 1570 | Զաքարիա Խաչկաշինեցի | Փլորենտիա | Ժամագիրք կարգին Դոմինիկեանց |
| 11 | 16 | 22 × 16 | բոլոր | ԺԸ | — | — | Մաշտոց Հռոմէական |
| 12 | 23 | 21,3 × 16,5 | բոլոր | 1768 | Ոհան Մէրիկ | Էլիզապէթպոլ. | Մաշտոց Լեհահայոց |
| 13 | 46 | 17,5 × 12,2 | բոլոր | 1772 էն առաջ | — | — | Մաշտոց Լեհահայոց |
| 14 | 22 | 21,5 × 14 | բոլոր | ԺԸ | — | — | Աստիճան Վարդապետութեան |
| 15 | 11 | 25,7 × 18 | բոլոր | 1238՞ | Ստեփանոս (Տէր Յովհաննէսի որդի) | (Արզնկա՞ն) | Յայսմաւուրք Յունական. |
| 16 | 34 | 19,6 × 15 | բոլոր | ԺԷ | Աստր Սեբաստացի | | Վարք Հարանց Ծաղկաքաղ |
| 17 | 4 | 32,4 × 21,3 | նոտր | 1750 | Ստեփանոս | Կ. Պոլիս | Կոռնելիոսի Մեկն. Դանիէլի և Յայտնութեան։ |
| 18 | 14 | 23,4 × 17 | նոտր | ԺԸ | — | — | Աստուածաբանութիւն Ս. Թովմայի։ |
| 19 | 33 | 20 × 13,5 | նոտր | ԺԸ | — | — | Աստուածաբանութիւն |
| 20 | 43 | 18,7 × 15 | շղագիր | 1675 | M. G. | Լեմբերգ | Կղ. Գալանոսի Դրունք փիլիսոփայութեան |
| 21 | 42 | 19 × 13 | նոտր | 1663 | Զաքարիա Սիւնեցի. | Լեմբերգ | Կղ. Գալ. Համառօտ Վեհար. Մեթաֆիզիկային |
| 22 | 28 | 20,3 × 14,5 | նոտր | 1744 | | | Ուղ և ծուծ Աստուածաբանական, Թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի |
| 23 | 5 | 27,2 × 19,5 | նոտր | 1778 | Գրիգոր Բաղիշեան | Հռոմ | Ուղ և ծուծ աստուածաբանական. Թարգմ. Գ. Բաղիշեանի. |
| 24 | 55 | 14,7 × 10,3 | նոտր | ԺԷ | — | — | Ժողովածոյք փիլիսոփ. |
| 25 | 37 | 15 × 10 | նոտր | ԺԷ | — | — | Մատթ. Ուռհայեցւոյ Տարեգրութիւն. |
| 26 | 25 | 16 × 10,5 | նոտր | 1723 | Սարգիս Սահէթճի եպ. | Հռոմ՞ | Մարգինի Գաւազանագիրք |
| 27 | 41 | 19 × 12,7 | նոտր | ԺԸ | — | — | Միքայէլի Ասորւոյ Ժամանակագրութիւն |
| 28 | 56 | 14,5 × 9 | նոտր | ԺԸ | — | — | Քաղուածք յՂղթերցութեանց Գր. Նարեկացւոյ |
| 29 | 38 | 20 × 14 | նոտր | 1808 էն յառաջ | — | Կարին | Ժողովածոյք |
| 30 | 26 | 20,7 × 15,5 | նոտր | 1753 | Յովհ. Կեսարացի | Երուսաղէմ | Գառամ գիւտի Ամերիկոյ |
| 31 | 6 | 27,2 × 16,5 | նոտր | 1724 | Սարգիս եպ. Սահէթճի. | Էջմ. և Հռոմ | Ամիրտոմլաթի Անգիտաց Անպէտ. |
| 32 | 51 | 16 × 10,2 | նոտր | 1766 | Գրիգոր Կեսարացի | Կեսարիա՞ | Ճարտասանութիւն Արիւթ. Սեբաստացւոյ |
| 33 | 24 | 21,5 × 14,5 | բոլոր | ԺԴ | — | — | Ժողովածոյք. |
| 34 | 65 | 25,2 × 18,3 | բոլոր | ԺԸ | — | — | Գառամ. Գղնձէ քաղաքի. |
| 35 | 13 | 10,5 × 8 | նոտր | 1798 | — | — | Գառամ. Փանցիանոսի, տաճկերէն. |
| 36 | 12 | 25,2 × 18,8 | նոտր | 1769/74 | — | — | Յակոբայ Արապեան Լոյս Հաւատոյ |
| 37 | 32 | 20,7 × 14,5 | նոտր | 1808 | Միք. Սանոսեան | Կաստրնա | Մէք. Վ. Սանոսեանի Զէն ճշմարտութեան |
| 38 | 50 | 10,8 × 10 | նոտր | 1745 | — | Կ. Պոլիս | Յովհ. Վ.ի Երզրումցւոյ Վահան Հաւատոյ։ |

| Նոր-րի· | Հին-րի· | Մեծութիւն | Գիր | Ժամ· | Գրիչ | Տեղի | Բովանդակութիւն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | 24 | 16,4 × 11 | նոտր | 1733 | — | — | Գիրք Վկայութեանց |
| 40 | 46 | 11,3 × 8,5 | նոտր | ԺԸ | — | — | Վերծանութիւն ընդ Հայս |
| 41 | 61 | 25,2 × 18 | նոտր | 1728 էն յառաջ | Յակոբ եպ· | Հռոմ | Քրիստոնէական [illegible] եւ [illegible] [illegible]։ |
| 42 | 24 | 21,3 × 15 | նոտր | ԺԸ | — | — | Յաղագս Խորհրդոց եկեղեցւոյ։ |
| 43 | 27 | 21 × 13 | նոտր | ԺԸ | — | — | Հարցմունք եւ պատասխանիք։ |
| 44 | 20 | 22 × 16 | շղագիր | 1860 | — | — | Հրաւանք դաւանութեան [illegible]։ |
| 45 | 44 | 19,2 × 11,5 | նոտր | 1780էն ետքը | — | — | Դաւանութիւն Հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց։ |
| 46 | 57 | 14 × 10 | նոտր | ԺԹ | — | — | Դաւանութիւն Հաւատոյ տանկերէն։ |
| 47 | 1 | 37 × 24 | նոտր | 1728 | | Հռոմ | Քարոզգիրք [illegible] Կարնեցւոյ։ |
| 48 | 39 | 19,5 × 14,3 | նոտր | ԺԸ | — | — | Քարոզք։ |
| 49 | 45 | 18,3 × 13,5 | բոլորգիր | ԺԷ | — | — | Քարոզք Գրիգոր Տաթեւացւոյ. |
| 50 | 7 | 26,3 × 19 | նոտր | 1744 | | Հռոմ | Յովհ· Թէոդ· [illegible] [illegible]ութեան պատարագի։ |
| 51 | 29 | 20,7 × 14,2 | նոտր | ԺԸ | — | — | Յաղագս դաւանութեանց |
| 52 | 54 | 15 × 10 | նոտր | 1702 | — | — | Դուռն ողորմութեան Աստուծոյ |
| 53 | 17 | 22,2 × 15,7 | նոտր | ԺԸ | — | — | [illegible] [illegible] |
| 54 | 47 | 17,5 × 12 | նոտր | 1758 էն յառաջ | — | — | [illegible] [illegible] |
| 55 | 49 | 16,8 × 10,2 | նոտր | ԺԸ | — | — | [illegible] [illegible]թեան [illegible]։ |
| 56 | 60 | 11,7 × 7,5 | նոտր | ԺԹ | — | — | Աղօթագիրք |
| 57 | 61 | 11,2 × 7,4 | նոտր | 1682 էն յառաջ | | — | Աղօթագիրք |
| 58 | 66 | 9,7 × 7,3 | նոտր | 1729 | Տէր Օհան | Ճուրճով | Գրքոյկ որ կոչի ժամանակեան |
| 59 | 67 | 10 × 6 | նոտր | 1727 | — | — | Աղօթամատոյց։ |
| 60 | 59 | 12,4 × 9 | նոտր | ԺԷ | — | — | Աղօթագիրք |
| 61 | 62 | 11,3 × 9 | նոտր | 1810 | — | — | Ջերմեռանդ աւանդ[illegible]։ |
| 62 | 63 | 11,3 × 9 | նոտր | 1810 | Տէր Օհան | Ճուրճով | Ջերմեռանդ աւանդ[illegible] |
| 63 | 30 | | նոտր | ԺԸ | | | Տօնացոյց։ |
| 64 | 31 | 21,3 × 16 | նոտր | 1768 | Օհաննէս որդի [illegible] | Էլիզաբեթ քաղաք | Տօնացոյց։ |
| 65 | 53 | 15,6 × 10,2 | նոտր | 1731 էն յառաջ | — | | [illegible] |
| 66 | 9 | 26 × 19 | նոտր | ԺԷ-ԺԸ | — | — | Համառօտ [illegible] |
| 67 | 35 | 20,6 × 14,6 | | ԺԹ | — | — | Համբերանք [illegible] [illegible] [illegible]։ |

## 1.

## ՄԱՍՈՒՆՔ ՀՆՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Թ. 3: — ԺԵ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 94: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32.7 × 22.8 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ՝ թղ. 6բ—7բ, 54բ—55բ, 93—94: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ԳԻՐ՝ բոլորգիր մէտ շղագրի: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ կարմիր (այսպէս թղ. 1ա. ալլուր կարմրագիրի տեղիք դատարկ թողուած): — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ: Կողին ներսի կողմը՝ «Մարիամայ Եգիպտացոյ Թ. 5» Պահպանակ թղթի վրայ.

*Մատեանս է* Գիրք Թագաւորութեանց Ա. եւ Բ. Բանք Ժողովողին եւ Երգ Երգոց:

1. *Թղ. 1ա. Նախադրութիւն թագաւորութեանցն. — Գլուխք Ա. Թագաւորութեանն (Հմմտ. Զօհրապեան, Աստուածաշունչ, Բ., 1—4):*

2. *Թղ. 4բ. Յառաջաբան նախակարգեալ Թագաւորութեանցս (Յերոնիմեայ). Վասն ի յերկուս գիրս առ ի Հեբրայեցւոցս...:*

3. *Թղ. 8ա—54ա. (Ա. Թագաւորութիւն):*

4. *Թղ. 56ա—73բ. (Բ. Թագաւորութիւն. թերի ձգուած):*

5. *Թղ. 76ա—87ա (Բանք Ժողովողին):*

6. *Թղ. 87բ—92բ (Երգ Երգոց):*

*Ձեռագրիս գրութիւնը չէ աւարտած:*

*Թղ. 92բ. ստոր ձեռքէ.* 1605 (?). La sigta Aurelia Gabia de Abagan donv. yl pa. lib(r)o alla chiesa di Sta. Maria Egitziada.

## 2.

## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՄԻԱՅԻ ԵՒ ԴԱՆԻԷԼԻ

Թ. 40: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 125: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19 × 14.2 հմ.: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ մագաղաթ: — ԿԱԶՄ՝ մագաղաթ, որուն ներսի կողին վրայ լատիներէն շղագիր գրութիւն: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտր: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ թղ. 5բ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐ եւ ԾԱՂԿԱԳԻՐՆԵՐ՝ կան — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ: — ԿՈՂԻՆ ՆԵՐՍԸ՝ Մարիամ Եգիպտացուն. 45:

*Մատեանս է Մարգարէութիւնք Երեմիայի եւ Դանիէլի:*

1. *Թղ. 1բ—79ա. Նախադրութիւն Երեմիայի մարգարէին. — Գլուխք Երեմիայ մարգարէի. — Գիրք Երեմիայ մարգարէի:*

2. *Թղ. 79ա. Ի թագաւորութենէ է այս բանքս:*

3. *Թղ. 81ա. Թուղթ Բարուքայ: Որդ սրբոյն Երեմիա մարգարէի:*

4. *Թղ. 93ա. Մահ Երեմիա մարգարէի:*

5. *Թղ. 94ա—124. Նախադրութիւն. Գլուխք եւ Մարգարէութիւն Դանիէլի:*

6. *Թղ. 125ա (այլ գրչէ). Քարոզ ապա*

ուրբաթի. Պաւղոսի որ ասէ. կտակ յետ մահու: Սովորութիւն է յորժամ մեռանի... (կ՚աւարտի թղ. 125բ) եւ համբուրեաց զնա: Թէրի կը մնայ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Թղ. 1ա. Յիշատակ է այս գիրքս տեառն Յակոբայ Բիւզանդիացւոյ. եւ Աստանօ եպիսկոպոսի թվին Փրկչին ՌՉԻԸին (1728) ապրիլի ժԵին:

## 3.

## ԱՒԵՏԱՐԱՆ ՏԱՃԿԵՐԷՆ

Թ. 19: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 12: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22.7 × 16 հմ.: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ կարմիր. գլուխ 1—8. շարունակութիւնը՝ դատարկ թողուած: — ԳՐԻՉ, ՏԵՂ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ:

*Մատեանս է Տաճկերէն Աւետարան. այժմ կը սկսի ԻԸ. համարին կէսէն. «ահլար տուհեա՛յի միրասիտէլեր...»: Վերջ՝ համար ձ. «վէ քիմ սատիգի սատկըրնես մինէ գապուլ իտէր...»:*

## 4.

## ՃԱՇՈՑ ԼԵՀԱՀԱՅՈՑ

Թ. 36: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 74: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20.2 × 14.7 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ թղ. 44ա²—բ. 74: — ԳԻՐ՝ թղ. 3—18, 40—73ա նոտր. 1բ—2, 19—39 բոլորգիր: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ գունաւոր 3ա. 19ա: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐ՝ կան: Թղ. 19—38 ունին ոսկեզօծ գլխագիրներ: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ԽՐԱՏԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ հաւանօրէն Սարգիս Թոխաթեցի: — ՏԵՂԻ՝ Հռո՞մ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԸ. դար:

*Մատեանս է ճաշոց Լեհահայոց:*

1. *Թղ. 1ա. Օտար գրչէ չորս ժամամուտք. «Ի տաճարի սրբոց: Առաքեալք: Միածին Որդի: Որ ըստ ամենայն:*

2. *Թղ. 1բ—2բ. Բոլորգիր. Ցանկ գրոցս:*

3. *Թղ. 3ա. Ցաւուր ծրագալուցի տօնի Յայտնութեանն Քրիստոսի: Աղօթք. Աստուած որ զգիշերս զայս սուրբ ճշմարիտ լուսոյն ճառագայթիւք պայծառացուցեր...: Սղմ.: Ո որ նստիս ի քերովբէս: Հռոմայեցւոց. Պօղոս ծառայ...: Այլ. Ասաց Տէր ցտէր իմ...: Աւետ. ըստ Մատթ.: Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս...:*

*Յաւուր տօնի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Աղօթք. Շնորհեա ամենակարող Աստուած...: Սղմ. Տէր ասաց ցիս: Փ. ընդէ՞ր խռովեցան...: Պօղոսի առաք. ի Տիտոսի թղթոյն. Սիրելիք, քանզի երեւեցաւ...: Այլ. Այսօր ծնաւ...: Աւետ. ըստ Ղուկ. Եւ եղեւ ընդ աւուրսն այնոսիկ...:*

4. *Թղ. 8ա. Տեառնընդառաջին օրհնութիւն Մոմին. Ասէ քահանայն միջակ ձայնիւ. Տէր ընդ ձեզ. Պխ. Եւ ընդ հոգւոյդ քում: Աղօթեսցուք. Ամենակարող մշտնջենաւոր Աստուած...:*

5. *Թղ. 18ա. Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է խորհրդաբար զգեստաւորել...:*

6. *Թղ. 19ա—39բ. Կը յաջորդէ, բոլորգիր այլ գրչէ, ոսկեզօծ թղթի վրայ, Պատարագամատոյցը ըստ սովորական օրինակին:*

7. *Թղ. 21ա—25բ. «Ժամամուտք կարգաւ»:*

8. *Թղ. 39ա. «Եւ զկնի պատարագին եթէ յօժարեսցի քահանայն ասասցէ զաղօթս.*

*Օրհնեալ Քրիստոս որդի Աստուծոյ...:*

*Այլ աղօթք: Սուրբ Երրորդութիւն, ընկալ զպատարագս...:*

*Ննջեցելոց. Սուրբ Երրորդութիւն, ըն-*

կայ զպատարագս վասն հոգւոյ ծառայի ր....։

(Այլ նօրագոյն գրչէ). Ազօթք զկնի հաղորդութեան. Ով Տէր իմ Յիսուս Քրիստոս, հաց կենդանի....

9. Թղ. 40ա. Նոյն. Ս. Ամբրոսիոսի ժողթանք նախապատրաստականք առ սրբագործ սուրբ պատարագն. ի Կիրակէ աւուրն. Մայրագոյն քահանայ...։

10. Թղ. 43. Ազօթք զկնի պատարագին ասելի. Երկիր պագանեմ քեզ...։

11. Թղ. 43բ. Ազօթք նախ քան զՊատարագն. Գրիգորիսէ ԺԴ. վեհապետէ հռոմէական չնորհեալ... յիւնից ամաց զներողութիւն։ Ես կամիմ հաշակել....

12. Թղ. 45ա(—69ա գրուած է թղ. 18րի գրչով).

Յաւուր հրաշալի Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. Ազօթք Աստուած որ յայսմ աւուր...։

13. Թղ. 63բ. Պատարագ ուխտի չարաթն ի բուն։

14. Թղ. 64բ. Ի յիշատակ ամենայն ննջեցելոց։

15. Թղ. 65ա. Ներկայ ննջեցելոց։

16. Թղ. 65բ. Ի տարելից ննջեցելոց։

17. Թղ. 65բ. Հաւասար ննջեցելոց։

18. Թղ. 66ա. Պատարագ յաղագս խաղաղութեան։

19. Թղ. 66բ. Պատարագ ընդդէմ տարաժամ մահուան։

20. Թղ. 67ա. Պատարագ վասն հիւանդաց։

21. Թղ. 67բ. Պատարագ ուխտաւորաց։

22. Թղ. 68ա. Պատարագ յղ. թողութեան մեղաց։

23. Թղ. 68բ. Պատարագ ի ժամանակի հեծելութեան։

24. Թղ. 68բ. Պատարագ յղ. ամենից հարկաւորութեան մերոց։

25. Թղ. 69ա. Պատարագ վասն նոր փեսայի եւ հարսին։

26. Թղ. 70ա—73ա այլ նօրագիր գրչէ միասին. Աւետարանք Յարութեան։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 2բ. Յիշատակ է այս խորհրդատետրս տեառն Սարգիս եպիսկոպոսին Թոխաթեցւոյ. ով որ պատարագէ կամ օրինակէ, զմեռոզրեալն յիշէ. թվին Փրկչին ՌՉԼԱ (1731) օգոստոսի ԺԸին փոխեցաւ առ Աստուած. Սուրբ Մարիամ Եգիպտացոյ Եկեղեցոյն*։

Կողին Ա. երեսին վրայ փակցուած պիտակն՝ «ԺՋ. Տօնացոյց ձեռագիր նոր եւ Պատարագամատոյց հնագիր կազմեալ ի միասին, Սարգսի Թոխաթեցւոյ»։

Կողին Բ. երեսը. «Մարիամ Եգիպտացուն 46»։

* Սա էր Սարգիս Վ. Սանկթի Գոստաբեան, եպիսկոպոս Բեթղեհեմի, հայրենեօք Թոխաթցի։ Իր կենսագրութիւնը տուած է Հ. Գ. Գալէմքեարեան. Կենսագրութիւններ, Վիեննա 1915, էջ 64—99 և 316—319.

## 5.

## ՃԱՇՈՑ ՀԱՄԱՌՕՏ

Թ. 2: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 88: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34 × 22.5 հմ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԳԻՐ՝ նոտր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր։ — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ (ԺԸ. դա՞ր) անծանօթ։

Մատեանս է Համառօտ ճաշոց:

Սկիզբը զետեղուած է «Խորհրդատետր պատարագին Հայոց, տպ. Հռոմ 1677. որուն շարունակեալ մասերը զետեղուած են ընդ մէջ 33 եւ 66 թղթերու» (թղ. 34—43). Նոյնպէս «Սպասաւորութիւն Պատարագի, տպ. Հռոմ 1677, ի վերջ գրոցս (թղ. 76—86)։

Թղ. 2ա—4ա. Ժամանակ։

Թղ. 4բ—33բ, 44—75. Ընթերցուածք Հին եւ Նոր Կտակարաններէ ըստ աւուր պատշաճի։

Թղ. 66ա—66բ. Յանկ տօնից։

## 6.

## ԺԱՄՈՑ — ՏՕՆԱՑՈՅՑ

Թ. 10 : — ԺԸ. դար :

ԹՈՒՂԹ՝ 30 : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26 × 20,2 հմ. : — ՆԻՒԹ՝ թուղթ : — ԿԱԶՄ՝ առանց կողի : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ : — ԴԱՏԱՐԿ՝ 30 : — ԳԻՐ՝ բոլորգիր : — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ :

*Մատեանս է ժամու սաղմոսք եւ փոխք բոլոր տարիս : — Ծրագալոյց Ծննդեան . ի յաւուրն Ծննդեան , ի Ծրագալոյց Յայտնութեան եւ ի Յայտնութեան աւուրն . Աղմ . Տէր առաց զիս . . . :*

*Թղ. 15ա. Ցանկ ժամու Սաղմոսաց :*

*Թղ. 17ա. Տօնացոյց ըստ բոլոր տարիս միայն ժամու գրեանց եւ Աւետարանից :*

*Թղ. 26բ. Օրհնութիւն ջրոյ. Օգնութիւն մեզ յանուն Տեառն . . . :*

*Թղ. 28ա. Օրհնութիւն կնոջ զկնի քառասուն աւուրց որդէծնութեան : Նախ սրսկեսցէ զնա օրհնեալ ջրով . . . :*

*Թղ. 29ա. Օրհնութիւն Վարդարանաց կամ պսակաց . Օգնութիւն մեզ յանուանէ Տեառն . . . :*

*Թղ. 29բ. Օրհնութիւն պատկերի . Օգնութիւն մեզ . . . :*

*Թղ. 29բ.* Jacobus Nigazzenus Armenus sacerdos *Գրչի՞ն անունը :*

## 7.

## ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Թ. 18 : — ԺԸ. դար :

ԹՈՒՂԹ՝ 8 : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23 × 16 հմ. : — ՆԻՒԹ՝ թուղթ : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ : — ԿԱԶՄ՝ առանց կողի : — ԳԻՐ՝ [illegible] շղագիր : — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ :

*Մատեանս է՝* Կարգ պատարագի *ըստ ծիսի Հայոց ուղղափառաց եկեղեց ի Լէհաստան եւ ի Հունգարիոյ, է այս, որ հետեւի :*

*Քահանայն պատրաստեալ սպասաւորօքն հանդերձ գայ առաջի սուրբ սեղանոյն . . . : Եւ հասնի մինչեւ Յիշեանները . կ'աւարտի «Յիշեա Տէր եւ ողորմեա եւ զԹա հանգուցելոցն , հանգո՛ զնոսին ||| :*

## 8.

## ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Թ. 58 : — ԺԷ. դար :

ԹՈՒՂԹ՝ 86 : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13 × 8 հմ. : — ՆԻՒԹ՝ թուղթ : — ԿԱԶՄ՝ կաշի : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ : Դատարկ՝ 83բ—86 : — ԳԻՐ՝ նօտր : — ԽՈՐԱԳԻՐ՝ կարմիր . — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ (1682են յառաջ) անծանօթ :

*Մատեանս է* խորհրդատետր . *ուր կան .*

1. *Թղ. 2ա. Աղօթք առ Հայր Աստուած . Տէր Աստուած իմ անհելի (!) յէութեան երբեակ անձնաւորութիւն . . . :*

2. *Թղ. 5ա. Աղօթք առ Հօր Երրորդութեանն Աստուծոյ . Անսկիզբն Հայր աստուածութիւն տէր ամենակալ . . . :*

3. *Թղ. 6բ. Աղօթք առ Հոգին սուրբ : Որ անքննելոյ ես յէութեան . . . .*

4. *Թղ. 8ա. Աղօթք առ բանն Հօր Որդին Աստուծոյ : Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս Աստուած ճշմարիտ . . . :*

5. *Թղ. 10բ. Ողջոյն քեզ Մարիամ . . . :*

6. *Թղ. 11ա. Աղօթք առ տնօրէնութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերում : Հոգի Աստուծոյ սրբեա զիս . . . :*

7. *Թղ. 11բ. Աղօթք առ սուրբ Աստուածածինն սրբուհու կուսին Մարիամու : Ով*

սրբուհի Կոյս Մարիամ մայր Քրիստոսի քաղցրացուցանել թագուհի...։

8. Թղ. 14բ. Աղերսանք եւ մաղթանք առ պաշտպան հրեշտակն. Ի խորոց սրտէ իմմէ ի բոլորէ մտաց իմո...։

9. Թղ. 17բ—83ա. Պատարագամատոյց. Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել...։

ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Թղ. 1ա. Աստուածաշունչն, Քրիստոնական վարդապետութիւնն, ժամագիրքն գնեցի Ալիկունա մէ մոչլ (մարչիլ)ուակէս. Տումարտեարն ԲՃԼԻ. Գարտէց հոգեւորն ԱՃԼԻ. այլ գիր 1682 նոյեմբերի 11. երդումն զոր երդուաւ. Անուն Հօր... եթէ այրումն հրոյ անկանիցիմ եւ այլ ոչ եւս առնիցիմ այս բանս։

Թղ. 1բ. Libretto di diverse orationi manoscritto in lingua armena è lasciato alla n⁽ʳ⁾a chiesa dal P. Dom.co sacerdote Armeno l'anno 1688

## 9.

## ՏԱՂՔ ԱՒԱԳ ՇԱԲԱԹՈՒ

Թ. 52: — ԺԷ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 19: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16.3 × 13.2 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ թղթեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտր: — ԿԻՍԱԽՈՐԱՆ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ՝ Թ. 1ա: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ մասամբ կարմիր եւ մասամբ սեւագիր: Կողին եյեսը պզագիր հին նկար մը Յիսուսի: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ (ԺԷ՞. դար) անծանօթ:

Մատեանս է Աւագ շաբաթու տաղեր.

1. Թղ. 1ա—5բ. Մաղկազարդի երեկոյեան ժամերգութիւնն եւ Դռնբացի կանոն:

2. Թղ. 6ա. Աւագ շաբաթուն ասա. Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր... Մեղեդիք Բշ. — Շբ. աւուրց, խազագրեալ

3. Թղ. 6բ. Տաղ Մեծի Բշի առաւօտուն. Անդ ի մէջ դրախտին երեք անձինք էին... (խազագրեալ):

4. Թղ. 7ա. Տաղ Բշի հասարակի ասա. Բարերար եւ մարդասէր փրկիչ ցուցար...։

5. Թղ. 7բ. Տաղ Մեծի Գշի առաւօտուն. Որք ընկալայք ի գործ զքանքար տէրունական....

6. — Տաղ Գշի հասարակի ժամու. Քեզ ով տէր Յիսուս...:

7. Թղ. 8ա. Տաղ մեծի Դշի առաւօտուն. Գառն անարատ պատարագ, որ զմեղս բառնաս աշխարհիս...։

8. Թղ. 8բ. Տաղ Դշի հասարակի. Որ վասն մեր յերկնից յերկիր երեւեցար...։

9. Թղ. 9ա. Տաղ Մեծի աւագ Եշի առաւօտուն. Սկիզբն համայնից արարածոց գոյից էին...։

10. Թղ. 9բ. Տաղ Եշի պատարագին. Հասեալ հրեղինացրն հաւագեալ կային...։

11. Թղ. 10ա. Այլ տաղ Մեծի Եշին. Ընդ երեկոյս հասեալ ժամուն...։

12. Թղ. 10բ. Տաղ Մեծի Ուրբաթի առաւօտուն. Մարաւեցաւ տէրն ի Յաչին...։

13. — Աստուածածին Կոյսն Մարիամ կացեալ առ խաչ(ին) իւրոյ Միածնի...։

14. Թղ. 11բ. Քրիստոս փառաց թագաւոր եկիր ի խաչ ելանել...։

15. Թղ. 12ա. Տաղ Մեծի Շաբաթի Թաղման տեառն. Այսօր է շաբաթ եւ լռութիւն...։

16. Թղ. 12բ. Աշակերտ տեառն Յովսէփ հաւատարիմ...։

17. — Տաղ... յոյժ լաւ. Անզգամնեկ կուսին գնի ի կոյս գերեզմանի...։

18. Թղ. 13բ. Քարոզ Զատկի, զոր ասացեալ է սրբոյն Բարսղի Կեսարացւոյ. Ժողովեալքս ի տաճար փառաց...։

19. Թղ. 15բ. Մեսեդի Աւետեաց սուրբ կոյս Մարիամ Աստուածածնին. Որ է աւետեաց, ուրախութեան հնչումն...։

20. Թղ. 16բ. Տաղ աւետեաց սուրբ Աստուածածնին։ Աւետիս քեզ Մարիամ, զոր Գաբրիէլ սկզբնաւորեաց... (տունք Ա—Ք):

21. Թղ. 17բ. Տաղ Բաղդասարեայ գալստեան տեառն ի տաճարն. Այսօր ցնծայ Երուսաղէմ...:

22. Թղ. 18բ. Այլ տաղ Տեառնընդառաջին: Քրիստոս փառաց Թագաւոր այսօր եկեալ ընծայումն:

Այս բոլոր տաղերը խազագրուած են:

23. Թղ. 19բ. Զարտուղ:

10.

## ԺԱՄԱԳԻՐՔ ԿԱՐԳԻՆ ԴՈՄԻՆԻԿԵԱՆՑ

Թ. 15: — 1570:

ԹՈՒՂԹ՝ 393: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22.5 × 16.4 սմ: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ. Սերմին կողերու վրայ կպցուած լատինագիր մագաղաթներ, կ'երեւան revlarum ի մասեր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Դատարկ՝ 1—12, 19բ, 203, 385—393: — ԳԻՐ՝ բոլորգիր-շղագիր-խոշորագիր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ Զաքարիա Խոշկաշինեցի: — ՏԵՂԻ՝ Փլորենտիա: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1570:

*Մատեանս է* ժամագիրք Կարգին Դոմինիկեանց:

1. Թղ. 13—19ա. *Տօնացոյց եւ Զատկացոյց*:

2. Թղ. 20ա—202բ. *Ժամագիրք բոլոր տարւոյ ըստ կարգին Քարոզողաց եղբարցն Դոմինիկոսի: Որ է սկիզբն առաջի Կիրակէի նախատօն Ծննդեան տեառն որ կոչի ըստ Հռոմայեցոցն Գալուստ...*:

3. Թղ. 204ա. *Կանոն Վիճիլի Անդրէի առաքելոյն*:

4. Թղ. 362ա. *Կանոն Հասարակաց. ժամեր Համօրէն առաքելոց միոյ կամ բազմաց*:

5. Թղ. 376ա. *Աղօթք Ննջեցելոց*:

6. Թղ. 379ա. *Լիթանիա (Համօրէն սրբոց)*:

1. *Յիշատակարան թարգմանչին*. Թղ. 381բ—382ա. *Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն սրբոյ: Արդ ի յամի Ծննդեան Փրկչին մերոյ հազարերորդի երեք հարիւրերորդի Ж-երորդի թարգմանեցաւ ժամագիրքս բոլոր տարւոյն, որ կոչի Պրէվիար, ի լատին բարբառոյս ի հայս. կարգեալ ըստ սովորութեան կարգին Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի, ձեռամբ Տէր Պետրոսի ազգաւ լատին եւ աշխարհաւ Արագոնացի, ի Կարգէ Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի. ի Վէրին վանքս Քռնոյ. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որոյ առաջնորդ եւ հոգաբարձու էր Յոհան վարդապետն, որ մականուն կոչի Քռնեցի. յորոյ անունն շինեցին զսուրբ ուխտս աստուածասէր եւ պարկեշտ պարոն Գորգն եւ ամուսինն իւր Թիկին Էլթին. եւ (օ)րբոյ եղբօրն ինքնայօժար կամօք նուիրեցին զվանքս Կարգին Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի տուրք յաւիտենական: Արդ վերոյ ասացեալ վարդապետն Յոհան եղեւ պատճառ բազում բարութեան, զի ժողովեաց աստ բազում վարդապետք ի Լատինացոց եւ ի Հայոց, տածելով զամենեսեան ըստ հոգոյ եւ ըստ մարմնոյ. եւ թարգմանեաց եւ թարգմանել գիրս բազումս ողջչափս եւ լուսաւորիչս: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ եղեւ հաւատարիմ յլրտեան Ճեռու Նաւեայ, մտանելով յերկիրն աւետեաց, այսինքն ի Միաբանութիւն սուրբ եկեղեցւոյն Հռոմայ. եւ երբ ազգիս Հայոց զփրկական համբաւն եւ առաջնորդեաց արժանաւորացն մտանել ի Հնազանդութիւն գերաթրական աթոռոյն Հռոմայ, որ է մուտ եւ դուռն երկնից արքայութեանն. որում եւ մեզ արժանաւորեսցէ Քրիստոս, որ է օրհնեալ ի յամենայն արարածոց. ամէն, եղիցի, ամէն:*

2. Թղ. 82ա—բ. *Փառք եւ գոհութիւն ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգոյն սրբոյ եռանձնեայ տէրութեանն, եռաչափեալ եւ մի աստուածութեանն, որոյ քննելն յանդգնութիւն է. հաւատալն բարեպաշտութիւն եւ տեսանելն կեանք յաւիտենական. այժմ եւ հանապազ ի յաւիտեանս ամենայն յաւիտենից. ամէն:*

*Արդ զի ըստ սրբոց վարդապետաց նշան սիրոյն Աստուծոյ է սիրել զգիրս սուրբս:*

Զի սիրովքն Աստուծոյ ոչ հեշտանան ի բանսն, ուր ոչ յիշեալ լինի անուն Աստուծոյ, զի հրաժարեալք ի յերկրաւորացս եւ ի սիրոյ սորին, զմինն խնդրեալ ի տեառնէ, պարտին բոլորով սրտիւ զնոյն աղաչել եւ միով ակամ(բ)ք անփոփոխ նա(յ)իլ ի [illegible] խոստմունս սիրելոյն. ամէն:

Արդ գրեցաւ գիրքս ձեռամբ Ֆր. Զաքարիայի Խօչկաշինեցի ի յաստուածապահ քաղաքս Փլօրէնցիայ ընդ հովանեաւ սուրբ Մարկոս աւետարանչին. ի վիքարութեան Ֆր. Սամբրիսի. ի Ջանար(ա)լութեան ընթանուր Կարգիս Հայր Վինչէնսոսի նայ եւ յորդորմամբ եւ օգնականութեամբ Նորա Ֆր. Բենարտոսի մեր խոստովանողհայր եւ համեմատ եւ Ֆր. Ջվան Պատիստին. չատ օգնէց. բարերա(ր)ն Աստուած բարի հատուցանէ:

Եւ ամենայն խոնարհութեամբ աղաչեմք զամենեսին, որք հանդիպիք յայսմ [եւ] եւ օգտիք որ ինչ կերպիւ եւ իցէ, յողորմութիւն խնդրեցէք ի յամենաստ պարգեւողէն ամենայն բարեաց, վասն իմ եւ վասն ձեր աշաչողացդ (ա՛յսպէս): Արդ գրեցաք ի յաստուածային տասս, ի ժամանակի ձմերային եւ ամարային: Ապայ ես էի տկար մա(ր)մնով եւ վատ աչօք եւ մխուր սրտօք գրեցաք գիշերն եւ ցերէկն. եւ ոչ ուն(է)ի ընկեր համեմատելի. էի միայն: Արդ անմղադիր լերուք ի սղալութեան եւ խոչորութեան գրոյս. այլ ոչ էի գրեալ այսպիսի գիրս: Իսկ եմ ես ի յետին եւ անարժան կրանաւոր. արդ աղաչեմք հարցդ եւ եղբարցդ կրանաւորաց, ընդանեացդ եւ սիրելեացդ եւ արեան մերձաւորացդ: Իսկ յորժամ յիշատակէք եւ ընթեռնուք զայս աստուածայշունչ աղօթարանս եւ ընթերցմունս, սակաւ ողորմի ա(սա)ցէք Ֆր. Զաքարիս. զի որք յիշելով յիշեսցէ. Քրիստոս Աստուած կեանս յաւիտենականս զնոյ յիւէ իւր արքայութիւնն. ամէն. Դարձեալ յիշատակ ինձ եւ ի(մ) ծնողացն, իմ հայր Նուրիջանին եւ մայր իմ Դուլշատին. ամէն:

Արդ շնորհօքն Աստուծոյ գրեցաք ի յամի մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ռ.Շ.Հ. (1570) ի փառս Քրիստոսի. ամէն:

Թղ. 361բ. Զֆր. Զաքարիէս յիշել ցուք (ձեռ. «յիշել ցք» պատճէններով):

Թղ. 1ա. Breviarum Romanum. Բրեւիար Ռոմանի.

Ես Փրայ

Բրէվիր հերէն (հայերէ՛ն). Մարիամ Եգիպտ(ա)ցուն Nr 18:

Լատիներէն Abc մեծ եւ փոքր:

Թղ. 1բ. Ֆրայ Անդրէաս, Կարգէն Քարոզողաց, ի աշխարէն Փէրսիանոյ, ի գաւառէն Նախջուանոյ, ի քաղաքէն Ճահկոյ. ի վանքէն սուրբ Ափանոյ:

(Այլ գրով.) Ես Փր. Մաթէոսս ա որ պարոն Մարքար Թոռէտ: Ի Թուի. թվին ՌՈԼ (1630) մարդ(եղութեան) տեառն.

(Այլ գրէ). Դոնայ Հիփոլիթայ դէ Կարգինաս: որ ինձման (*):

Թղ. 12բ. Breviario Romano conforme al rito Domcano in lingua Armena della casa di Sta. Maria Egiptiaca.

Ըստամբօլայ պատրիարքի հանգեաւ (ի) Քրիստոս սանդալ Մարիամա չիփցիաքնումն, մայիսի Իէ. ժԲ սայհաթումն թվին ՌՈԼԴ (1634) *:

Կողին վրայ փակցուած է պիտակ մը.

Թ.

Ժամագիրք Կարգին Դոմինիկեանց թարգմանեալ ի Ֆրա Պետրոսէ Արագոնացւոյ յամին 1340 ի վանս Քռնոյ. Անհարթ գրչութիւն ընդօրինակեալ ի Փլորենտիա ձեռամբ Զաքարիայ Խօչկաշինեցւոյ յամին 1570:

---

* Հանգուցեալ պատրիարքն է Ցովհաննէս [illegible] որ 1600—1628 տարիներուն երեք անգամ պատրիարք ընտրուած էր ի Կոստանդնուպոլիս: Սա 1632ին վերջերը Հռոմ տեղափոխուեցաւ, եւ հոն վախճանեցաւ, ինչպէս անանուն յիշատակագիրս կը վկայէ, Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցւոյն Հիւրանոցին մէջ 1634. մայիս 27ին, ժամը 12ին. Իր մասին անդրադարձ տեղեկութիւններ տես Հ. Գրիգորիս Գալէմքեարեան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու. [illegible] Վիեննա 1915. էջ 1—41. 300—306:

## 11.

## ՄԱՇՏՈՑ ՀՌՈՄԷԱԿԱՆ

Թ. 16: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 83: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22 × 16 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ՝ թղ. 73բ, 83ա: — ԳԻՐ՝ Նօտր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ (ԺԸ°. դար) անծանօթ:

*Մատեանս է Մաշտոց հռոմէական:*

1. Թղ. 1. *Խորհուրդ վերջին օծման, որ է եօթանց խորհրդոց մինն: Գոյ խորհուրդ վերջին օծման. քանզի այսպէս ուսուցանէ ընդհանրական եկեղեցին Քրիստոսի...:*

2. Թղ. 3ա. *Կարգ օծանելոյ զհիւանդն: Պատրաստեսցէ առ հիւանդն սեղանիկ մի...*

3. Թղ. 8ա. *Օրհնութիւն Աղի եւ Ջրոյ:*

4. Թղ. 10ա. *Օրհնութիւն Մոմեղինաց տեառնընդառաջի:*

5. Թղ. 12ա. *Օրհնութիւն Մոխրոյ պահոց առաջի(ն) չորեքշաբաթի...:*

6. Թղ. 13ա. *Օրհնութիւն Արմաւենեաց աւուր ծաղկազարդի:*

7. Թղ. 16բ. *Օրհնութիւն Ռօզարաց:*

8. Թղ. 17բ. *Օրհնութիւն Ոսկւոյ, զմռոյ եւ խնկոյ ի տօնի Յայտնութեանն Տեառն:*

9. Թղ. 18բ. *Օրհնութիւն կխարդ եւ բզէ ծխանելոյ:*

10. Թղ. 18բ. *Օրհնութիւն խոտոց, ծաղկանց եւ պտղոց ի տօնի Վերափոխման...:*

11. Թղ. 21ա. *Օրհնութիւն Նորոց պտղոց:*

12. Թղ. 21ա. *Օրհնութիւն գարւոյ կամ ուլաֆի ի տօնի Ս. Ստեփաննոսի Նախավկային:*

13. Թղ. 21բ. *Օրհնութիւն Գինւոյ եւ այլոց ըմպելեաց ի տօնի Ս. Յոհաննու աւետարանչին:*

14. Թղ. 22բ. *Օրհնութիւն հացի եւ ջրոյ ի տօնի սրբուհւոյն Ագաթեայ ընդդէմ վտանգին հրոյ.*

15. Թղ. 23բ. *Օրհնութիւն Կաթեղինաց:*

16. Թղ. 24ա. *Օրհնութիւն Հացի:*

17. Թղ. 24ա. *Օրհնութիւն վասն հիւանդաց:*

18. Թղ. 24բ. *Օրհնութիւն Ձուոց:*

19. Թղ. 24բ. *Օրհնութիւն Գառին զատկականի:*

20. Թղ. 25ա. *Օրհնութիւն Նոր տան հիմոյ:*

21. Թղ. 25ա. *Օրհնութիւն Նորոյ տան:*

22. Թղ. 25բ. *Օրհնութիւն Առագաստի:*

23. Թղ. 26ա. *Օրհնութիւն Նորոյ Նաւի:*

24. Թղ. 26բ. *Օրհնութիւն Մոմեղինաց:*

25. Թղ. 27ա. *Օրհնութիւն առ ամենայն կերլիս:*

26. Թղ. 27բ. *Օրհնութիւն Նորոյ Խաչի.*

27. Թղ. 28ա. *Օրհնութիւն Պատկերաց ամենայն սրբոց:*

28. Թղ. 29ա. *Կարգ բանադրելոյ եւ արձակելոյ:*

29. Թղ. 37ա. *Կարգ վերահաստատութեան ուրացողի կամ հերձուածողի կամ հերետիկոսի.*

30. Թղ. 42բ—66ա. *Կարգ առնելոյ զսինոտս:*

31. Թղ. 66բ—79ա. *Յաղագս պակասութեանց, որք առհանդիպին ի մատուցման սրբոյ պատարագին:*

32. Թղ. 80ա—բ. *Ցանկ գրոցս:*

33. Թղ. 81բ—83ա. *Կերպ արարողութեան դնելոյ զսրբազնութիւն ի վերայ սեղանոյ:*

## 12.

## ՄԱՇՏՈՑ ԼԻՀԱՀԱՑՈՑ

Թ. 23: — 1768:

ԹՈՒՂԹ՝ 170 (էջագրուած): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21.3 × 16.5: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. Դատարկ՝ թղ. 170: — ԳԻՐ՝ Նօտր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՀԱՏՈՒԱԾՈՑ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ պարզ: — ԳՐԻՉ՝ Օհան Մէլիք: — ՏԵՂԻ՝ Էլիզապէթոպոլ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1768:

*Մատեանս է* Մաշտոց Լեհահայոց։

1. *Թղ. 1ա. Շրջաբերական «Յոհաննէս Տօբիաս Աւգուստինովիչ» արքեպիսկոպոսին Լեհաստանի Հայոց, որով կը յայտարարուի թէ Մաշտոցը նոր խմբագրութեան ենթարկուած եւ ճոխացած է, եւ կը յանձնարարուի ի գործածութիւն. Կը հաստատէ արքեպիսկոպոսը. «Զոր (զՄաշտոցս) ի ձեռն աստուածաբանից մերոց, եւս առաւել պատուելի տեառն Ստեփաննոսի Ստեփանեան աստուածաբանութեան վարդապետին զհին ձեռագիր Մաշտոցս ընդ միմեանս բաղդատելով, եւ իբր զանհուն սխալութիւնս, որք ոչ միայն ընդդէմ իմացման աղօթիցն, այլ եւ ընդդէմ իսկ ուղղափառ հաւատոյս մերում, ախտեալք էին սրբագրել, եւ զբրագրեալսն կարգաւ յօրինել, նաեւ զհարկաւոր խրատսն իւրաքանչիւր խորհրդոցն, եւ արարողութեանցն յառաջ դնել, եւ որ ինչ պակասէր ի մեր Մաշտոցն, ի Հռոմէականէն հետեւելով շաւղաց, Նախորդացն մերոց առեալն առաջրել ջանացաք։ Արդ զի եկեղեցեաց մերոց հոգաբարձու բարօխքն, ի բաց թողեալք զայլ Մաշտոցս, այսու միայն, զոր մեք յԱրհիական հեղինակութեամբ մերով ստիպձեցաք, եւ հաստատեցաք, այսուհետեւ վարեսցին զխեղճ մտաց նոցին ծանուցանելով պարտաւորեմք։*

*Գրեցաւ յարքիական պալատն մեր ի Լէօփոլիս, յամի Տեառն 1728, ապրիլի ամսոյ ԺԵ»։*

2. *Էջ* 2—14. *Համառօտ խրատք յաղագս այնոցիկ, զորս ի պաշտել զասւբ խորհուրդս հասարակաբար պահել պարտ է։*

3. *Էջ* 14. *Կարգ մկրտութեան տղայոց։*

4. *Էջ* 336—338. *Կանոն հանդերձ օրհնելոյ։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. *Էջ* 338. *«Զգծագրողս մի մոռանար միով Հայր մերիւ, եւ Ողջոյնիւ յիշել. ով յարգելի սուրբ քահանայ. զի եւ դու յիշեալ լինիս ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. Աւարտեցաւ Մաշտոցս զայս ՌՄԺԷ եւ Ըերորդի, տասն եւ վեցերորդ աւուրն յունիսի. Եւ գրեցաւ ձեռամբ անպիտան ծառայի՝ Օհան Մէրիկի կոչեցելոյս, ի տոհմէ Քոսայ Սահակեան. Փառք Փրկչին եւ յիշատակ գրչին.* 1768, 16 *աւուրն յունիսի։*

## 13.

## ՄԱՇՏՈՑ ՀՌՈՄԷԱԿԱՆ

Թ. 46: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 259 (էջահամարք 484). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17.5 × 12.2 սմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Դատարկ՝ թղ. 1—4, 5բ, 258բ—259: — ԳԻՐ՝ Նոտր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ կարմիր: Թղ. 5ա զարդարուն ճակատ, մէջը «Մաշտոց»: — ԳՐԻՉ եւ Տեղի՝ անծանօթ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1772էն ետքը:

*Մատեանս է* Մաշտոց հռոմէական։

1. *Թղ. 6ա. Յաղագս այնց իրաց, որք պարտին հասարակապէս պահիլ ի մատակարարութեան խորհրդոց։ Եւ զի ոչինչ այնչափ սրբազոյն, ոչինչ այնչափ շահաւետագոյն...։*

2. *Թղ. 8բ. Յաղագս օրինապէս մատակարարելոյ զխորհուրդն Մկրտութեան։ Սուրբ Մկրտութիւնն դուռն քրիստոնէական օրինաց...։*

3. *Թղ. 17բ. Կարգ Մկրտութեան։*

4. *Թղ. 31բ. Կարգ դրոշմի։ Քահանայն ի պատրաստի ունելով զպիտակ կնիքսն...։*

5. *Թղ. 35ա. Կարգ հրչակելոյ զխորհուրդ Ամուսնութեան։*

6. *Թղ. 50բ. Կանոն եւ Կարգ Տղայաթաղին։*

7. *Թղ. 65բ. Կարգ Աշխարհականաթաղին։*

8. *Թղ. 96ա. Կարգ օրհնելոյ զգերեզմանն։*

9. *Թղ. 103ա. Կարգ այցարարութեան հիւանդաց։*

10. Թղ. 115ա. Կարգ հաղորդելոյ զհիւանդն:

11. Թղ. 119ա. Կարգ խորհրդոյ Վերջին օծման: Խորհուրդն Վերջին օծման որ կացուցաւ ի Քրիստոսէ...

12. Թղ. 121բ. Կարգ օծանելոյ զհիւանդս:

13. Թղ. 128ա. Իշխանութիւն տալոյ գլխակատար ներողութիւն հոգւորաց (Կոնդակ Կղեմէս ԺԴ.ի, յամէ 5 ապրիլ 1772):

14. Թղ. 133բ. Կարգ օծնելոյ հիւանդին. Յորժամ ծանրանայ հիւանդութիւնն:

15. Թղ. 136ա. Կարգ յանձնարարութեան հոգւոց:

16. Թղ. 149ա. Նշանք ճանաչելոյ զմերձակայ մահն հիւանդին:

17. Թղ. 150բ. Յաղագս Թաղման:

18. Թղ. 153ա. Յաղագս խորհրդոյ Պսակին.

19. Թղ. 156ա. Յաղագս խորհրդոյ Ապաշխարութեան.

20. Թղ. 166ա. Կարգ օրհնութեանց (Ջրոյ), Տան, Աւազանի, Հացի, Նոր պտղոց, Ջրոյ խաչի):

21. Թղ. 182բ. Վասն Երաշտի

22. Թղ. 183բ. Օրհնութիւն գժուար տղայաբերութեան կնոջ զկնի որդեծնութեան.

23. Թղ. 186ա. Օրհնութիւն Մամեղինաց, Մոխրոց, Ոստոց, Վարդարանաց կամ Պսակաց:

24. Թղ. 197ա. Օրհնութիւն ի ժանտամահու անասնոց. Հիւանդացեալ Մանկանց, Գերեզմանաց:

25. Թղ. 202բ. Մաղթանք ընդդէմ Թռչնոց:

26. Թղ. 210բ. Կարգ օրհնելոյ զգերեզմանս տղայոց:

27. Թղ. 218ա. Կարգ հաշտարարութեան պղծեալ եկեղեցւոյ:

28. Թղ. 223բ. Կարգ օրհնութեան քահանայական զգեստուց: Սկի օրհնելոյ.

29. Թղ. 225ա. Կարգ երդմնեցուցութեան դիւահարաց:

30. Թղ. 243—248ա. Կերպ գրելոյ ի մատեանս զորս պարտին ունել հոգաբարձուքն:

31. Թղ. 248բ. Մաղթանք ամենայն Սրբոց (Լիթանեայք):

32. Թղ. 255ա. Ցանկ:

## 14.

## ԱՍՏԻՃԱՆՔ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Թ. 22: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 153: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,5 × 14 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: Դատարկ՝ թղ. 2բ—9բ, 18ա, 72ա, 80ա—150ա, 151բ—153բ: — ԳԻՐ՝ Նոտր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ՝ անծանօթ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԸ./ԺԹ. դար:

Մատեանս է՝ Աստիճանք վարդապետութեան:

1. Թղ. 10ա. Ա. աստիճան՝ ընդերձմունքս այս փոքր գաւազան տալոյ: Յաղագս մասնաւոր վարդապետութեան իշխանութիւն շնորհելոյ:

2. Թղ. 18բ. Յոհաննու պիտակ աշակերտի Գրիգորի Խամեծի արարեալ պչարագրութիւն կարգաց ԺԴ. աստիճան վարդապետաց ի յուսաւոր բանից աստուածարան մարգարէին Եսայեա լուսաւոր մտօք եւ մեկնողօրէն իմն ուսութեամբն կարգաւորեալ: — Ա. աստիճան յաղագս գաւազան տալոյ աշակերտեալ ապաստորաց բանին: Զարգարեն զգաւազանն... (Ա.—Ժ. աստիճանք):

3. Թղ. 72բ. Կանոն Մոնոցուն Հերակարութեան. Եպիսկոպոսացն եւ սրբոց լերինն եւ Պաղեստ(ա)ին, արանց եւ կանանց, որք զկուսութիւն անձն առնուն, կարգն այս է: Ածեն զնուիրեալն ի դուռն եկեղեցւոյն...:

4. Թղ. 78ա—79բ. Օրհնութիւն սկոյ եւ մաղզմանի:

5. *Թղ. 150բ—151ր. Հայրի յօժմանիլէ այս է. Որ չատ զօրութիւն ունի...*

ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. *Թղ. 1ա. Սիմէօն արքեպիսկոպոս Գագաւորոյ.*

2. *Թղ. 1ր. Յօրեյեան Ն ամ է... Ամիոք Թուրքի.*

3. *Այլ գրով. Անդրէաս եպիսկոպոս բարեխօսէ վասն առաւինացաւի.*

4. *Թղ. 2ա. Այլ եւ այլ փէերք ի սուրբ Գրոց:*

5. *Առաջին կողի ներսի կողմը. Մարիամ Եգիպտացուն Թ. 17:*

15

# ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ ՅՈՒՆԱԿԱՆ

Թ. 11: ԺԳ. դար (1238°):

ԹՈՒՂԹՔ՝ 363: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25.7 × 18 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Ձեռագիրս նորոգուած է. հին օրինակի մէջէն տեղ տեղ թուղթեր ինկած ըլլալով. Նորոգողը լրացուցած է պակաս թուղթերը նոր օրինակութեամբ. Նոտրագիր Ա.Ժ.Մ կը պակսին ընդ մէջ 215/16 բանի մը թուղթեր. — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ԳԻՐ՝ բոլորգիր. Նորոգուած տեղերը նոտր–շղագիր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր: — ԳՐԻՉ՝ Ստեփաննոս (տէր Յուսկան որդի): — ՏԵՂԻ՝ անծանօթ. հաւանօրէն Արգելան. — ԺԱՄԱՆԱԿ՝ 1238: Առաջին կողի ներսի կողմը. «Սբյ Մարիմ. եգիպտ. Ս (?)»:

*Մատեանս է* Յունական Յայսմաւուրք: *Կը սկսի Թղ. 1ա. Սեպտեմբերի Ա. Սիմէօնի Սիւնակեցոյն ի Մատրանն ի (Հ)ալպ: — Նրանելի Սիմէօն էր ի քաղաքէն Անտիոքայ...*

*Կ'աւարտի Թղ. 363ա. Աւգ. ԼԱ. Գիւտ պատուական գօտւոյն ամենասրբուհոյն Աստուածածնին, որ է Կ. Պօլիս յեկեղեցոջ Ս. Աստուածածնին Մարիամու, որ կոչի Խալկոպրատիա: Եւ յայսմ աւուր վկայութիւն սրբուհոյն Փոտինիա, որ Թարգմանի Լուսեղէն: Կիւն Սամարացի, յորմէ Քրիստոս գՋուրն խնդրեաց... (վերջ Թղ. 364ա):*

*Ձեռագրիս վերջը, որ նորագոյն է, որ եւ է հին կամ նոր յիշատակարան կը պակսի: Բնագրին մէջ կան հետեւեալ յիշատակագրութիւնները հին գրչէն.*

1. *Թղ. 48ր. Քրիստոս Աստուած ողորմեա Ստեփաննոսի գրչիս եւ Պետրոսի եւ ծնողաց իւրոց.*

2. *Թղ. 94ր. Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի գրոյս... եւ Պետրոսի եւ ծնողաց իւրոց... Եւ ինձ բազմամեղի Ստեփաննոսի գծողի սորա...*

3. *Թղ. 125ր. Վերջացեալս ի գրչաց ստացող սորա զՍտեփաննոս բազմամեղս. յազաւթս յիշել... (Քրիստոս Աստուած) կեցոյ զՊետրոս եւ զծնողս իւր եւ զՅովհաննէս քահանայ որ զաւրինակն պարգեւեաց...*

4. *Թղ. 258ր. Բարեխաւսութեամբ Թադէոսի... բժշկիս զախտս եւ զցաւս մարմնոյ եւ հոգւոյ Պետրոսի եւ Մարինէ եւ ծնողաց իւրոց եւ զմերս եւ զամենեցուն:*

*Այսպիսի մանր յիշատակագրութիւններ Թղ. 49ր, 101ր, 155ր, 178ա, 210ա, 234ա, 243ա, 264ր, 296ա, 330ր:*

5. *Այլ նորագոյն գրչէ. Թղ. 74ա. ընդ նմին եւ զստացող սոր(ա) զՍտեփաննոս գինեծախն արժանի արարէք երկնից արքայութեան, տես նաեւ 94ր, 155ր, 234ա.*

*Ուշագրութեան արժանի է Դեկտ. Ս (Թղ. 99ր) յուշագիրս. «Եւ յայսմ աւուր յիշատակ է սուրբ եւ երիցս երանեալ հաւր մերոյ վարդապետաց վարդապետին Գրիգորի. Թվ. ՈՁԷ» (1238):*

*Նկատի առնելով որ ձեռագրիս գրիչն «Ստեփաննոս» կը կոչուի, կրնանք ըսնիկա Տէր Յուսկան համանուն որդւոյն հետ նոյնացնել, եւ այս Գրիգոր վարդապետը նկատել Գրիգոր վարդապետ վկայասէր, առաջնորդ Խաչքարու լեռան Ս. Սահակայ վանից, որ ունէր բազմաթիւ աշակերտներ, որոնք խստակրօն ճգնաւորներ էին. սա կոչուած է «հրեղէն լեզու» (1239ին): Ասոր աշակերտած պիտի ըլլայ Ստեփաննոս: Տես Պատմութիւն տէր Յուսկան, էջ 218: Աճառեան, Անձնանուններու Բառարան, Ա., էջ 574:*

*Հ. Մ. Աւգերեան, որ տեսած է ձեռագիրս, կ'անուանէ զայն «Յայսմաւուրք Հայոց*

րատ Յունաց ամսոյն. եւ կը դրէ «զպայսպիսի յանակերպ հայերէն Ցայսմաւուրս ունիմք ի ձեռին՝ մի եւեթ օրինակ՝ բոլորգիր հին, ուրեք ուրեք նորոգեալ եւ կարկատեալ նոտր գրչութեամբ, յայտ է թէ հայելով յայլ օրինակ համանման» (Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւնք սրբոց, Վենետիկ 1814, հատոր ԺԱ, էջ ՀԲ—ՀԳ)։

## 16.

## ՏԱՂԿԱՔԱՂ ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑԷՆ

Թ. 34: ԺԷ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 41։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10.6 × 15 սմ.։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ դեղնագոյն կաշեպատ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԳԻՐ՝ բոլոր-շղագիր։ — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ կարմիր։ — ԳՐԻՉ՝ Ասար Սեբաստացի։ — ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ։

*Մատեանս է* Տաղկաքաղ Հարանց Վարքէն:

1. *Թղ. 1ա. Նախադրութիւն պատմաբանութեան սուրբ Հարանցն: Որ էրն ի սկզբանէ. . . :*

2. *Թղ. 1բ. Վարք եւ խրատք երանելի հարցն: Եհարց ումն ցհայրն Անտոնիոս եւ ասէ. Զինչ պահեցից որով հաճոյ եղէց Աստուծոյ. . . :*

3. *Թղ. 6ա. Հարցին ընդ հայրն Մակար, թէ որպէս պարտ է կրօնաւորի կեալ ի սենեկի իւրում. . . :*

4. *Թղ. 40ա—41բ. Ի բանից սուրբ հօրն Նիլոսի համառօտիւք: Լաւ է յստակ խորհրդով ննջել. . . :*

*ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ.* 1. *Թղ. 41բ. Եւ գիտելի է եղբարք, զի մեք ծայրաքաղ արարեալ գիրքս եւ զվարս սուրբ հարցն եւ համառօտաբար ժողովեցաք զսակաւս ի բազմաց, իբրեւ զծաղիկս ի բուրաստանաց դեղ ցաւալից կենաց, եւ իբրեւ զհատ ցորենոյ սերմանել ի սիրտս աստուածասէր անձանց յառաւել բազմապատիկ պտուղ. եւ կամ խթան ընդոստուցիչ ի քնոյ երազական կենաց. որք զարթնուն սովաւ եւ զգաստանան: Եւ թէ այսու ոչ բաւականասջիք, ի բուն ընթասջիք Պատմութիւն ի Վարս Հարանց: Քանզի կար մեր այսչափ էր. զի բատ ան եւ զօրութիւն իւր: Այլ զաշխատողս ի մայ, զյոգնամեղ եւ զանիմաստ ծառայս Ասար Ս(ե)բ(ա)ստ(ա)ցիս յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք:*

2. *Թղ. 1ա. Ստորեւ այլ գրչէ նոտր խոշորագիր. Ցիշատակ է այս գիրքս տեառն Յակոբայ Կոստանդնուպօլսեցոյն եւ Աստանօ եպիսկոպոս կոչեցելոյն՝ եկեղեցւոյն սուրբ Մարիամ Եգիպտացոյն, թվին ՌՁԻԸին, ապրիլի ԺԵին:*

3. *Ա. Կողին ներսը. Մարիամ Եգիպտացոյ* 39:

*Ասար Սեբաստացի բժիշկը ծաղկած է ԺԷ. դարու առաջին քառորդին.*

## 17.

## ԿՈՌՆԵԼԻՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԴԱՆԻԷԼԻ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Թ. 4: 1750:

ԹՈՒՂԹՔ՝ 541։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,4 × 21,3 սմ։ — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՆԻՒԹ՝ ազնիւ թուղթ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ։ Դատարկ թղ. 1—7, 251բ—252բ, 540բ—541բ։ — ԳԻՐ՝ նոտր։ — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ կարմիր։ — ԳՐԻՉ՝ Ստեփաննոս։ — ՏԵՂԻ՝ Կ. Պոլիս։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1750—1752։

*Մատեանս է Կոռնելիոս Ալապիտէի Մեկնութիւնք Դանիէլի Մարգարէութեանց եւ Յովհաննու Յայտնութեան:*

1. *Թղ. 8—257ա. Մեկնութիւն ի Դանիէլ մարգարէն:*

*Թղ. 257ա. Ցիշատակարան «Թարգմա-*

*նել տուողի գրքոյս։ Կամօք եւ արդեամբք Ղազարոս վարդապետին եւ արքեպիսկոպոսին Պոնտոսի տուք ողորմին։ Նաեւ թարգմանչին սորա Ղուկաս վարդապետին Խարբերթացւոյ։*

*Իսկ այժմ վերստին գաղափարեցեալ եղեւ ձեռամբ Ստեփաննոս քարտուղարի Կոստանդնուպօլսեցւոյ յամի տեառն* 1752, *օգոստոսի* 17:

2. *Թղ.* 273ա—540ա. *(Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու). Յառաջաբանութիւն հեղինակի գրքոյս...*

**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ.** *Թղ.* 540ա. *Թարգմանեցեալ եղեւ գիրքս այս Տեառն մեկնութեան սրբոյն Յոհաննու աւետարանչին ի ներ Թուականիս Հայոց ՌՃՁԸ եւ յամի տեառն* 1739, *ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ, հրամանաւ ջանիւ, հոգաբարձութեամբ եւ արդեամբ եւ տիր(՟) օժանդակութեամբ տեառն Յոհաննու բանիբուն եւ աստուածաբան յոգներախտ վարդապետի Բաղիշեցւոյ արհիեպիսկոպոսի եւ պատրիարգի արքայանիստ քաղաքիս Կոստանդնուպոլսոյ, ի Ղուկասու Վ.-է Խարբերդացւոյ։ Ի փառս եւ ի յօգուտ մերազնեայց եւ ի պատիւ ամենասրբոյ Երրորդութեան.*

*Գթութեամբ եւ յաջողութեամբ ամենազօրին Աստուծոյ օրինակեցաւ գիրքս այս ազնիւ Մեկնութեան Տեառն սրբոյն Յոհաննու աւետարանչին ի թուականիս Հայոց ՌՃՂԹ* (1750) *եւ ի յամսեանն ապր(ի)լի Ը. որ էր սոյն օրս Ծաղկազարդ Հայոց. ի յառաջին օրինակէն օրինակեցաք։ Եւ վերջապէս փառք ամենասրբոյ Երրորդութեան յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Ի Կոստանդնուպոլիս։*

## 18.

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԹՈՄԱՅԻ

Թ. 14: ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 368: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23.4 × 17 հմ.: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: Դատարկ թղ. 1—5, 11բ, 365—368: — ԳԻՐ՝ նոտր-շղագիր: — ԽՈՐԱԳԻՐՔ, ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ (ԺԸ. դար) անծանօթ:

*Մատեան է Թոմայի Ագուինացւոյ համառօտ Աստուածաբանութեան Բ. մասին Բ. մասը։*

*Թղ.* 6—11ա. *Ցանկ խնդրոց եւ պրակաց առաջնոյ գրքոյն երկրորդի երկրորդի մասին լիակատար աստուածաբանութեան Ս. Թոմայի Ագուինացւոյ.*

*Թղ.* 12ա—364բ. *Երկրորդի երկրորդի մասին համառօտի աստուածաբանութեան հրեշտակային վարդապետի սրբոյն Թոմայի Ագուինացւոյ. — Գիրք Ա. Յառաջաբանութիւն. Յետ համարականի մտածութեան զառաքինութեանց եւ զմոլութեանց... հարկաւոր է մտածել զիւրաքանչիւրոց յատկապէս... (Ա—ԾԶ խնդիրք).*

## 19.

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թ. 33: ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 223 (էջք 446), — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20 × 13.5 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — ԳԻՐ՝ նոտր-շղագիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ:

*Մատեան է* Աստուածաբանութիւն, *անծանօթ հեղինակէ։*

1. *Թղ.* 1. *Խնդիր Ա. Թէ զինչ է Աստուածաբանութիւն։ Աստուածաբանութիւնն ըստ իւր նշանակութեանն համառակապէս առեալ է վարդապետութիւն ի վերայ Աստուծոյ... (Ա.—Դ. խնդիրք).*

2. *Թղ.* 4ա. *Ընձեռեալ Ա. Յաղագս*

հաւատոյ: Որովհետեւ հաւատն է առաջնորդ սրբազան վարդապետութեան Աստուծոյ․․․:
3. Թղ. 189ա. Ընծեռուած Ե. Ցաղագս վերանորոգման մարդկային սեռի ի ձեռն նեյմարմնութեան Բանին Աստուծոյ: Կ՚աւարտի Ե գլուխ Բ պրակով, որ Թերի կը մնայ:

## 20.

## ԿՂԵՄԷՍ ԳԱԼԱՆՈՍԻ ԴՐՈՒՆՔ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

Թ. 43: 1675:

ԹՈՒՂԹ՝ 230: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18.7 × 15 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ առանց կողերու: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Դատարկ՝ 35բ—36բ, 146բ—147բ, 159բ: — ԳԻՐ՝ շղագիր: — ԳՐԻՉ՝ M. G.: — ՏԵՂԻ՝ Լեմբերգ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1675

Մատեանս է Կղեմէս Գալանոսի Դրունք փիլիսոփայութեան (տպագիր, էջ 128—202) եւ Մետաֆիզիկա (Համարնաբանութիւն):

Թղ. 1ա. Իմաստասիրական վիճաբանութիւնք ոմանք, որք պատկանին առ գիտութիւն Մետաֆիզիկային, որ թարգմանի Համարնաբանութիւն:

Ցոյժ ի յերկար տարածիւր բանն, եթէ կամէաք մի ըստ միոջէ տեսանել եւ քննել զամենայն վիճաբանութիւնս Համարնաբանութեան․․․:

Ցաղագս ճշմարտութեան եւ սուտութեան ներգործութեանց մտաց Ե. վիճաբանութիւն. թէ որ իցէ սա․․․: (Ե. եւ Զ. վիճաբանութիւն 1ա—35ա):

2. Թղ. 37ա. Իմաստասիրական Վիճաբանութիւնք Փիզիկային գիտութեան, որ թարգմանի Բնաբանութիւն. շարակարգեալ ի կարգէ Թէատինեաց Կղեմէս աստուածաբան վարդապետէ: — Ցաղագս արարիեալ էնթակայի Բնաբանութեան եւ յաղագս Սկզբանց բնական իրաց: Ա. Վիճաբանութիւն. Թէ զինչ իցէ արարիեալ էնթակայ Բնաբանութեան․․․ (Ա—Թ. վիճաբանութիւն):

Թղ. 145բ. Վերջ Ա. մասին Փիզիկային:

3. Թղ. 148ա—230բ. Ցաղագս Աշխարհի. Ա—Դ. վիճաբանութիւն, Դ. վիճաբանութեան Զ. խնդրին վերջին մասը կը պակսի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 146ա. Կատարեցաւ Ա. մասն Բնաբանութեանս Թվին Հայոց ՌՃԻԵ (1676) մայիսի ԼԱ. օրն շաբաթ. ի հայրապետութեան տեառն Կղէմէնս տասներորդին, կաթողիկոսութեան տեառն Յակոբայ. արհիեպիսկոպոսութեան Լովայ քաղաքին տեառն Նիկողայոսին Թորոսեից. եւ Թագաւորութեան Յոհաննու Երրորդին. ի փառս ամենամաքուր Կուսին Մարեմայ, սրբոյն Գրիգորի Հայաստանեաց Լուսաւորչին եւ ամենայն սրբոց. ի Հայրապետական Դպրատանս Լովայ:

Թղ. 145բ. Ցամի մարմնացելոյ բանին ՌՈՀԵ յունիսի Ժ. M. G.:

Կայ այս տեղ պատկեր մը. Մագիի կոկոններ, վրան սիրտ մը:

## 21.

## ԿՂԵՄԷՍ ԳԱԼԱՆՈՍԻ ՀԱՄԱՌՕՏ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՄԵԹԱՖԻՍԻԿԱՅԻՆ

Թ. 42: 1673:

ԹՈՒՂԹ՝ 409: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19 × 13 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ [illegible]: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, Դատարկ՝ ինչ 57բ, 103բ, 186ա—187բ, 259բ, 300—302, 406—409: — ԳԻՐ՝ Նոտր: — ԳՐԻՉ՝ Զաքարիա Սիւնեցի: — ՏԵՂԻ՝ Լեմբերգ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1673: Ա. կողին [illegible] Մարիամայ Եղիպտացոյ:

Մատեանս է «Համառօտ վիճաբանութիւնք Մեթաֆիսիկային, որ պատկանի առ գիտութիւնն Համարնաբանութեան եւ Աստուածաբանութեան»:

Թղ. 1ա—57ա. Ցաղագս ճշմարտութեան եւ սուտութեան ներգործութեանց մտաց.

*Ե. վիճաբանութիւնք. թէ ո՞ր իցէ սա։ Ա. խնդիրք. Ոչ ասացի Ա. վիճաբանութիւնք, այլ հինգերորդ. վասն զի զայլ չորս առաջադրեալն վիճաբանութիւնս... յառաջ բերաք ի միւս տպագրեալ հատորին...* (նկատի ունի Զ. վիճաբանութիւնն):

Թղ. 58ա—298բ. *Իմաստասիրական Վիճաբանութիւնք Փիսիկային գիտութեանց, որ թարգմանի Բնաբանութիւն*: — *Ցաղագս տարրկեալ ենթակայի...* (Ա.—Դ. վիճաբանութիւնք):

Թղ. 29ա. է. գլ. *Ցաղագս խորհրդոյ Պասկին*. Թղ. 298բ. «*ԺԳ. Հարցումն. Միթէ Հայոց կաթողիկոս կարո՞ղ իցէ նորել ի վերայ արգելմանցն, որք խափանեն զպսակն եկեղեցական օրինօք*»։ Ցառաջ կը բերուի Սմբատ թագաւորի դէպքը:

Թղ. 303ա. *Գիրք ընդհանուր յարութեան ամենայն մարդկան եւ գալստեանն Քրիստոսի: Աւէ առաքեալն. Ցինքնին տէր հրամանաւ ի ձայն հրեշտակապետի...*:

Թղ. 316ա. *Քարոզ զ. է. չափ մահ(ագ)ու մեղացն։ Եւ նշան երեւեցաւ յերկինս...*

Թղ. 368բ—374բ. (*Քարոզ ի բանն*) *Հայր մեր որ: Քան զայլ աղօթսն գերագանց է բազում պատճառաւ...*:

Թղ. 375ա—405բ. Այլ գրչէ զանազան խառն նիւթեր. կը յիշեմ։

Թղ. 375ա. *Ցաղագս բնութեան, թէ զի՞նչ է բնութիւն*:

Թղ. 395բ. *Ցաղագս անձին: Զի՞նչ է անձն...*:

Վերջ թղ. 406ա. ուր կ'րսուի այլ գրչէ «*Պակաս շատ կայ*»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ. 1. Թղ. 406ա. *Աւարտեցաւ շարադրութիւնս, որոյ առաջին մասն շարադրութիւն է փիլիսոփայութեան. երկրորդ քարոզ յաղագս ընդհանուր յարութեանն եւ գալստեանն Քրիստոսի. երրորդ* (կ'աւելցնէ այլ գրիչ) *յաղագս Է. խորհուրդ եկեղեցւոյ. երրորդ յաղագս ընդհանր. եկեղեցւոյ. յաղագս բնութեան եւ անձին: Համառօտ շարադրութիւնս շարադրեցաւ ի ձեռն Սիւնեցի Զաքարիա բանասիրի ի թվականութեանս հայկազեան տոհմին ՌՃԻԲ ի Հռոմ .Ի.*:

2. Թղ. 185բ. *Աւարտեցաւ թվին ՌՃԺԲ օգոստոսի Գ*:

3. Թղ. 2բ. *Ես Խարբ(երդ)ցի տէր Ղուկաս ձեռնադրեցա քահանայ ի յՒստամպօլցւոյ Ցարութիւն եպիսկոպոսէ ի քաղաքն մեծն Հռոմ ի յեկեղեցւոջն Սանթա Մարիա Զիցիաքա, այս ինքն ի յեկեղեցւոջն Մարիամ յեգիպտացւոյն*։

*Անձառ անհաս ստեղծող գոյութեանց...* (3 տող):

4. Թղ. 3բ. *Գիրքս այս է եկեղեցւոյն սրբուհւոյն Մարիամու Եգիպտացւոյ իջեւանի Հայոց ազգի որ ի Հռոմ քաղաքի. աշխատասիրեալ Սիւնեցի Զաքարիայ շարադրել զգիրքս յամի Հայոց թուականի* 1122. ՌՃԻԲ։

5. Թղ. 409բ. Դեղագիր մը. *Աւէն րժիշկք եթէ ոք առնու զկաթ խոզին...* Եւ այլ անպէտ մանունք զանազան գրիչներէ:

## 22.

# ՈՒՂ ԵՒ ԾՈՒԾ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ՊԵՏՐՈՍԻ ԹԻՖԼԻՍԵՑՒՈՅ

Թ. 28: 1744:

ԹՈՒՂԹՔ՝ 480 (իրականում 482)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,3 × 14,3 սմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ սպիտակ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: Դատարկ՝ էջ 1—4, 940—956: — ԳԻՐ՝ Նոտր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ եւ ՏԵՂԻ՝ անյայտ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ընդ մէջ 1724—1744 տարիներում

*Մատեանս է* Ուղ եւ ծուծ աստուածաբանական... *շարադրեալ ի Լուդովիկոս աստուածաբան վարդապետէ Փարիզեցւոյ, եւ ի լատինականէ թարգմանեցեալ ի հայկական բարբառ ի Պետրոսէ Վ.է Թիֆլիսեցւոյ,*

խնդրանօք եւ ծախիւք Յարութիւն յոգնայարգ վարդապետի եւ գերամեծար եպիսկոպոսի Կոստանդինուպօլսեցւոյ . . . ի Վէնետիկ քաղաքի Թվին Փրկչին մերոյ 1724:

Էջ 3 Յառաջաբան. էջ 7 ընծայուած Ա. Յաղագս սրբազնութեանց:

Էջ 933—939 (այլ գրչէ). Ցանկ գրոց:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. էջ 932. Գիրքս այս որ կոչի Ուղղ եւ Ծուծ աստուածաբանութեան, եղաւ յիշատակ ի յեկեղեցին սրբուհւոյ Մարիամու Եգիպտացւոյն, հաստատութեամբ ձեռաց տեառն Վրթանէս արքեպիսկոպոսի եւ ձեռնադրողի ի Հռոմ, ի յառաջուածոյ տեառն Գրիգորի Վ. Անդրիանուպօլսեցւոյ, որ փոխեցաւ ի հանդերձեալն եւ եթող գիրքս զայս, զոր ուրեմն ոչ ոք կարէ փոխել ի տեղւոյն թարց (երեք բառ ջնջուած) մահու չափ մեղաց, որպիսի եթէ իցէ պատճառաւ: Ի թւին Փրկչին 1744. եւ ի յօգոստոսի 28:

Ա. կողին Ներքս՝ «Մարիամ Եգիպտացոյն. 26»:

Կողին վրայ. Ի: Ուղ եւ ծուծ աստուածաբանութեան. ձեռագիր Վրթանէսի եպ.ի յամին 1744:

23.

# ՈՒՂԵՂ ԵՒ ԾՈՒԾ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԴՈՎԻԿՈՍԻ ԱԲԵԼԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ Գ. ԲԱՂԻՆԵԱՆԻ

Թ. 5: 1778:

ԹՈՒՂԹՔ՝ 412: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 27.2 × 19.5 սմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Դատարկ՝ 1բ: — ԿԱԶՄ՝ կիսակաշի: — ԳԻՐ՝ Նոտրշղագիր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ Գրիգոր Եպ. Բաղինեան: — ՏԵՂԻ՝ Հռոմ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1778: Կողին Ներսի դիմ. Di S. Biagio degli Armeni.

Մատեանս է «Ուղեղ եւ ծուծ աստուածաբանութեան ըստ սահմանադրութեան աստուածաշունչ գրոց եւ սրբազան ժողովոց կանոնաց ծայրագոյն քահանայապետից, նաեւ ըստ մտաց սրբոց հարանց եւ վարդապետաց մեկնաբանեալ . . . Շարադրեալ ի Լուդովիկոսէ Աբելէ եպիսկոպոսէ Ռոութինայ եւ աստուածաբան վարդապետէ Փարիզեցւոյ: Եւ աշխատասիրութեամբ ի լատինականէ ի հայկական բարբառ յեղաշրջեալ ի Գրիգորէ Բաղինեան անարժան քահանայէ Ախցխացւոյ յամի փրկութեան մերում 1778, ի վեհանիստ սուրբ քաղաքն Հռոմ, ընդ հովանեաւ Ս. Մարիամու Եգիպտացւոյն»:

1. Թղ. 3ա. Առ քահանայն յաւիտենից, հովուապետն հովուաց, եպիսկոպոսն հոգւոց, ճշմարիտն Աստուած եւ Որդին ճշմարտին Աստուծոյ: — Արժանի ես, Տէր, առնուլ զգիրքս . . . :

2. Թղ. 4ա. Առաջաբանութիւն. յորում պարզաբանի թէ զինչ է նպատակ գրքոյս այսորիկ եւ զի՞նչ դիտումն հեղինակին . . . :

3. Թղ. 7ա—16բ. Ցանկ ընթերցուածոց գլխոց եւ պրակաց Ա. մասին:

4. Թղ. 17ա—371. Խնդիրք նախերգանականք յաղագս նորին աստուածաբանութեան . . . :

5. Թղ. 371բ. Ազգարարութիւն եպիսկոպոսաց Գաղղիացւոց առ Ծայրագոյն քահանայապետն Իննովկենտիոս 10երորդ . . . :

6. Թղ. 374բ. Նամակ պատասխանական սրբազան Տեառն մերոյ Իննով. Ժ. պապին առ համօրէն արհիեպիսկոպոսունս Գաղղիոյ:

7. Թղ. 375ա—393ա. Թուղթք արհիեպիսկոպոսաց Գաղղիոյ առ Իննովկենտիոսն Ժ.:

8. Թղ. 393բ—412բ. Ցանկ մոլորութեանց . . . որք ուր ուրեք ի յայս Ա. մասին . . . հերքին:

## 24.

## ԽՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ

Թ. 55: — ԺԷ՞. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 22: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14.7 × 10.3 հմ.: — ՆԻՒԹ՝ 1—9 մագաղաթ. 10—22 թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — ԳԻՐ՝ Բոլոր: — ԳՐԻՉ՝ տեղ եւ ժամանակ անծանօթ: Կողքին վրայ «Մարխամ Եղիպտացւոյ» 108:

*Մատեանս է ժողովածոյք. որ կան.*

1. *Թղ. 1—9. Ներածութիւն Պորփիւրի. Եղղր Հարկաւորի...: Թերակատար. Կ՚աւարտի «աւելի ունի գրանականն եւ զմակկանացուն |||»:*

2. *Թղ. 10ա (այլ գրչէ խազար նոտագիր). սկիզբը պակաս. Կ՚աւարտի. շրջագածոյնի. բառ հոլովի տրականն... ամէն:*

3. *Թղ. 10ա. Սոկրատէս իմաստասէր. Սկիզբն գիտութեան ողխաութիւն գիտութեան...: Վջ. Զի՞նչ է սահման. սաստ է որ (ս՛յայմս) յերկինս:*

4. *Թղ. 11ա—22բ. Սահման Հերմիսա Եռամեծի առ Ասկղ(ի)ոպոս. Աստուած խմանալի աշխարհ, աշխարհ զգալի Աստուած...: Վջ. գոր արիի սաէ չըջագաստոյ:*

Հրտ. Յ. Մանանդեան, Բանբեր, 3 (1956) 298—313:

## 25.

## ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻՈՅ

### ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ

Թ. 37: — ԺԷ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 244: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19.2 × 14.5 հմ.: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ 15 × 10: ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: Դատարկ՝ ա—բ, 147բ—148բ: — ԳԻՐ՝ Բոլոր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր. զարդագրերու համար տեղ թողուած եւ չգրուած. — ԳՐԻՉ. ՏԵՂ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: Կողքին նիշը նիշ թիւ «ԺԷ»:

*Մատեանս է ժողովածոյք, որ կան.*

1. *Թղ. 2ա. (Մեծարգոյ Երիցու). Պատմութիւն Ս. Ներսէսի Հայրապետին Հայոց: (Յե)ւթն եւ ի տասն ամի Տրդատա նստաւ յաթոռ Սուրբ առաքելոյն Թադէոսի լուսաւորիչն Հայոց սուրբ Գրիգոր...:*

Հրտ. Սոփերք Հայկականք. Զ. (1853), էջ 9—124:

2. 52ա. *(Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն. խորագրի համար տեղ թողուած). Իսկ ընդ յաւուրսն ընդ այնոսիկ եւ ի յամին ՆԱ. եղեւ սով սաստիկ ի բազում տեղիս...: Վջ. 146բ. դարձեալ ի թմբկանութեանս Հայոց ի յամս ՇՁԶ. ...եւ խաղացին անթիւ եւ անհամար բազմութեամբ ի վերայ զօրացն Փռանկին. եւ յորժամ |||:*

Հրտ. Մատթ. Ուռհայեցի. Երուսաղէմ, 1869, էջ 1—313, —. 18:

3. *Թղ. 147ա. (Յանկեր նոտարագիր). Յանկ առաջնոց քարոզի(ց)ս (Ա.—ԺԹ. քարոզ. զանազան գրիչներէ).*

*Թղ. 149ա—160բ (Երկսին մաքուր նոտր-շղագիր).*

ա. *Թղ. 149ա. Քարոզ ի բանն որ ասէ. Այր մի գործեաց ընթրիս...: Վարդապետք ասեն թէ որ ինչ լաւագոյն...*

բ. *Թղ. 155բ. Վասն ապաշխարութեան ասենք, թէ ո՞րքան յաւակութիւն ունի: Նախ թէ յետ ջուրն հաւատացեալն՝ համառօտ...:*

գ. *Թղ. 156բ. Յաղագս արբեցութեան: Սաղ Պաւղոս յնմեւ. Մի արբէ գինի յորում գեխութիւն է...*

*Թղ. 158բ. (Վասն) Լուսաւորչաց. Վեց կարգ են լուսաւոր աստեղաց. առաջինն է մգատեսակ...:*

դ. *Թղ. 159բ. Նորին տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի քարոզ ի բանն Աչ պիտոյ (է) ընէրք այլ՞: Արդ որպէս պիտոյ է յայտ...*

Ե. Թղ. 162բ. Նորին Գրիգորի քարոզ ի բանն Սաղմոսին որ ասէ. Մարդ ի պատուի էր: Նախ տեսանելի է զինչ էր պատիւ մարդոյն....:

Զ. Թղ. 169բ. Վասն կատարածի աւուրն: Իսկ թէ յետ սատակման Նեռինն զինչ լինիցի մինչ ի դատաստանի օրն....:

Է. Թղ. 175ա. Նորին Գրիգորի եռամեծի քարոզ վասն մահու. ի բանն Սաղմ. որ ասէ. Մարդոյ որպէս խոտոյ են.... Մահկանացու կեանքն մարդոյս....:

Ը. Թղ. 184բ. Նորին քարոզ տանջանաց եւ խրատուց եւ մարտիրոսաց եւ հաղորդի եւս. ի բանն Սաղմ. Զայս խոնարհ առնէ եւ զսոյն բարձր.... Կրկին են գործք մարդկան....:

Թ. Թղ. 189ա. Տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի Հոգենորոգ վարդապետի քարոզ ի բանս Երգոց Երգոյն. (Կ)ալարուք աղուեսունս փոքունս.... Ամենայն աստուածային բանք....:

Ժ. Թղ. 196ա. Նորին Մատթէոս Վ.ի Քարոզ ի բանն. Այր մի իջանէր.... Գիտելի է զի սքանչանալ պարտ է ընդ կարգաւորութիւն առակաւոր բանիս....:

ԺԱ. Թղ. 200ա. Նորին Մատթէոս Վ.ի քարոզ ի բանն Ով ոք ի ձէնջ մարդ, որ ունիցի բարեկամս.... Այս առակ եւ դատաւորին միապէս խրատեն....:

ԺԲ. Թղ. 205ա. Նորին Մատթէոս Վ.ի քարոզ ի բանն. Առն որում մեծատան եռուն անդք.... Բարերարն մեր եւ ազատիչն յամենայն անօրէնութեանց Յիսուս....:

ԺԳ. Թղ. 209ա. Նորին (Գր. Տաթեւ.) քարոզ.. ի բան առակին որ ասէ. Զորս են որ փոքր են յաշխարհի եւ իմաստնագոյն՝ մրջիւն, ճագար.... Յամենահրաշ գործոց արարչական խնամոցն....

ԺԴ. Թղ. 213ա. Նորին դարձեալ ի նոյն խորհուրդ, Քարոզ վասն առաջնորդաց հարց եւ հետեւողաց ի բանն Առակին որ ասէ. Երեք են որ գնան չքնին.... Նախ պարտ է գիտել, զի սուրբ գիրք չորիւք իմն մեկնութեամբ բացորոշի....:

ԺԵ. Թղ. 216բ. Նորին Մատթէոս Վ.ի քարոզ սուրբ առաքելոյն. Դուք էք լոյս ի վերայ բանիս այսօրիկ բազում ինչ հանգիտանալի է....

ԺԶ. Թղ. 223բ. Նորին Մատթէոս Վ.ի քարոզ մահու. (Ի)մաստութիւն յիս.... Նախ զի իմաստութիւն գիտասջուք....:

ԺԷ. Թղ. 228բ. Քարոզ վասն մահու ի բանն Յոբայ որ ասէ. Մահ մարդոյ հանգիստ: Արդ կամիմ այժմ որպէս եւ է խօ(կ) կարօղութիւն մարդոյ, ընդել զնկարութիւն սրտի իմոյ....

ԺԸ. Թղ. 236բ Նորին (Գր. Տաթեւ.) դարձեալ վասն միաբանից եւ կրօնաւորաց ի բանն որ ասէ ի Պրակս առաքելոց. Եւ ամենայն ինչ նոցա հասարակաց....: Եթէ զինչ չափ եւ աւգուտ է միաբան եղբայրութեանց....:

ԺԹ. Թղ. 238բ. Դարձեալ խրատ կրօնաւորոց եթէ զինչ հարկաւոր է յանապատ բնակողաց, զինչ պիտանացու: Ասեմք Նախ եթէ այն է հարկաւոր առանց որոյ ոչ է ինչ....:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Թղ. 2ա. ի Գրիգոր վարդապետէ Այնեցւոյ ի միաբանէն Երուսաղէմայ յիշատակ հիւրանոցի Հռոմայ յօգուտ. ամի տեառն 1797:

3. Թղ. 243բ. Երկու կնիք. Ք(րիստոս)Ի Ա(ստուծո)Յ ԵՒ ՄՕՐՆ ԾՌ. ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՍՄԵՑ. ՌՄ Գ. ԹՎ. 1754.

## Է

## Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴՊՏ ՌԲՃԳ.

Թղ. 244ա—244բ. Փառք... Զայս պայմայ գիրքս որ ասին Հայվաճենց Տիմէ տղան Սահակն, Կարապետենց Յարութիւնն իւրեանց մայրերուն խատրէ եւ Ֆումարին հոգուն, որ բատացան զայս ի հալալ յինչիցն եւ եդին ի Կամա գաւղայ ի գուռն սուրբ Աստուածածնայ (*):

1. Թղ. 1բ. Գրիգոր վարդապետին է Կամիցւոյ Երուսաղէմի միաբանի. ի վերջն վասն հերետիկոսական չարադրութեանն թարց հրամանի ոչ ընթերցցի:

## 26.

# ՖՐ. ՄԱՐԴԻՆԻ ԳԱՒԱԶԱՆԱԳԻՐՔ

(Թ. 25) — 1723։

ԹՈՒՂԹՔ՝ 200 (էջագրեալ)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20·5 × 14·5 հմ.։ — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ 16 × 10·5։ ՆԻՒԹ՝ թուղթ։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԿԱԶՄ՝ կաշի։ — ԳԻՐ՝ Նոտր.։ — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ պալ.գ. Թղ. 1ա։ — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՒ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ կարմիր։ — ԳՐԻՉ՝ Սահէրթեի Սարգիս եպ. Եւդոկիացի։ — ՏԵՂԻ՝ Հռոմ (*)։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1723։ — Հին թիւ ԺԳ։

*Մատեանս է* Գիրք գաւազանաց փր. Մարդինի։

*Էջ 1. Սկսանի գիրքս պատմութեանց, որ կոչի ըստ Հայոց Գիրք Գաւազանաց, որ պատմէ զծայրագոյն քահանայապետացն, նա եւս զԿայսերացն Հռոմայ զկարգ ժամա(նակա)գրութեան նոցին եւ զեղեալսն ի նոցանէ եւ առ նոքօք գիրս նորայոյնս եւ զարմանալիս, զոր շարադրեալ է զգիրքս զայս Փրադր Մարդինոսն ի կարգէ քարոզողացն. եւ թարգմանեցի զսոյնս ի լատին գրոց ի հայումս ես տրուպս Ներսէս Պալիանենց կոչեալ, գաւառաւ Կիւլիկեցի, Արւեցի գոլով։ Եւ կարգաւոր եւ աստիճանաւ զանոնիկոս քահանայ, թէպէտ եւ անարժան իսկ։*

*Արդ եղեւ թարգմանութիւն գրոցս ի բազում տեղիս եւ ի գաւառս, յայլ եւ յայլ ժամանակս։ Իսկ ի սրբասնեալ պաղատս Հռոմայ, ուր այժմ համահաւաքի ի Վինիունս (Աւինիոն) կոչեալ քաղաքի յամի մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՅԽԸ* (1348), *ի քահանայապետութեան տեառն Կղէմէնդոսի վեցերորդի յամի նորին քահանայապետութեանն եօթներորդի, զթարգմանեալս յամանս տեղիս ի մի եղեալ եւ կարգաւորեալ սրբաքերել սկսանիմ ըստ կարգի։ Նա եւս ի մտի եղեալ է իմ, զի որքան եւ կարացից եւ գտից զպատմութիւնս հայկազեանցն եւ զհայրապետացն եւ զթագաւորացն Հայոց գրել իսկ. եթէ ի չարս գրոց եւ եթէ ի վերջքն որպէս եւ գիտեսցի, թէ կարացից գտանել։*

1. *Էջ* 2—470. *Գիրք գաւազանաց Փր. Մարդինի։ Հեղինակին նպատակն է տալ Հռոմայ կայսերաց եւ Քահանայապետներու պատմութիւնը. ուստի կը պատմէ էջ* 2—60 *նախաքրիստոնէական շրջանի Հռոմէական պատմութիւնը. ապա էջ* 61 *կը յայտարարէ. «Աստ բաժանի կարգ գրոցս. վասն զի գրեմք զՔահանայապետսն յաջակողմն, իսկ զինքնակալսն ի ձախն։ Սկսանիմք այսուհետեւ ճառել զծայրագոյն քահանայապետացն». ուստի էջ* 62—464 *Կայսերք եւ* 63—465. *Քահանայապետք։ Էջ* 467—468 *Այսոքիկ են ինքնակալք որ եւ Կայսերք։* 469—470. *Պատերազմողք հմտագոյնք։*

2. *Էջ* 471—493. *(Ներսէս Պալիանցիի Թագաւորք եւ կաթողիկոսք Հայոց)։ Էջ* 471. *«Արդ վասն զի գիրքս առաջակայ գաւազանաց կամ ժամանակագրաց կոչեալ մինչեւ ցայս վայր ի գրոց լատին ի հայ թարգմանեցաւ ինեւ փծուն Ներսէսիւ Պալիանցի կոչեալ ի Կիլիկիոյ գաւառէն. պարտ վարկայ վերջոյ ինքնակալութեանն Հռոմայեցւոցն եւ տէրութեանն լատինացոցն՝ զիշխանութենէն եւ զթագաւորութենէն Հայոց համառօտաբար շարադրել։ Նաեւ զհայրապետացն իսկ յիւրում տեղին։*

*Հայկազնեան թագաւորք ըստ Խորենացւոյ (էջ* 473—485)։

*Արշակունի թագաւորք. Մարզպանք. Բագրատունիք եւ Ռուբինեանք (էջ* 485—489)։

*Կաթողիկոսք Հայոց, Ս. Գրիգոր Լուսաւորչէն մինչեւ Գր. Անաւարզեցի (էջ* 491—493)։

3. *Էջ* 495—508. *«Ժամանակագրութիւնք ԳՃ եւ մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան պատմութեանց հայ, ֆռանկ եւ ասորի. շարադրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսայ. եւ արար զայս բանք ի թվին Հայոց ԷՃԽԵ եւ յամի մարդեղութեան Տեառն ՌՄՂԶ* (1296)։

*Ի թվականիս Հայոց ԵՃԻԷ եւ յամի Տեառն ՌՀԶ* (1076) *Գագիկ թագաւորն Հայոց սպանաւ...։ Վջ. եւ բարձաւ թագաւորութիւնն ի Տանէն Կիլիկեցոց ՊԾԻԳ»* (1374)։

1. Էջ 509—511. Մարգարէութիւնն Սիբիլլեա (Սիբիլեա) հեթանոս մարգարէուհւոյն վասն Քրիստոսի ծննդեանն եւ մկրտութեանն, զոր երանելին Օգոստինոս ի մէջ բերելով ի ճառս ծննդեանն Քրիստոսի ընդդէմ Հրէից եւ հեթանոսաց։

Զինչ արդեօք Սիբիլլեա մարգարէանալով զՔրիստոսէ նախաձայնեաց ի մէջ բերցուք... Վե. գաւառուրին ամենեցուն նշան ...։

5. Էջ 519. (Յաւելուած թարգմանչէն) Քաշունեացագիտաց Ոսկեանս Զ. (1378). տես ԺԲ. ... Պոնիփացիոս Թ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ. Էջ 520. Փառք համագոյ եւ սուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ յաւիտենականին, որ ետ տկարիս կարողութիւն հասանել ի յաւարտ գրքիս, որ կոչի Դաւազանագիրք։ Արդ ես Սարգիս եպիսկոպոս Եւդոկիացի, որ եմ իսկ Սաչէթձի, գրեցի զսա ձեռամբ իմով ի մեծին Հռոմ քաղաքի։ Արդ հանդիպողք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղաւոր գրիչս Սարգիս վարդապետ եւ զծնողսն իմ. եւ զձեզ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն։

Գրեցաւ թվին Քրիստոսի ՌԵԾԳ. եւ Հայոց ՌՃՀԲ. եւ ըստ տոմարի Փռանկաց դեկտեմբերի ԻԷ. եւ Հայոց ԺԶ։

2. Այլ գրով. Եկեղեցւոյն սրբոյն Մարիամու Եղիպտացւոյն թվին Քրիստոսի ՌՉԼԱ օգոստոսի ԺԸին։

3. Էջ 511. Վասն սուրբ ծննդեան քո, Տէր իմ Յիսուս Քրիստոս. վասն սուրբ չարչարանաց խաչի եւ մահու քո, յարութեան քո, եւ ահեղ գալստեանդ քո, ողորմեա զմեղաւոր ծառայս քո զՍարգիս եպիսկոպոս կոչեցեալ Եւդոկիացի եւ Սաչէթձի բարեխօսութեամբ Սրբուհւոյ Մօր քո եւ Կուսի. ամէն։

4. Էջ 511

Զգնի Յայտնութեան Տեառն տօնին
Գիտ զգուշին զաւաղին.
Եւ Թուեալ անուն զաւուրս գտանին,
Տուր կիրակէն հետադային.
Իսկ յայնմ յորմէ մինչ յոր զատկին
Ալէլուեան արտաքսեալին.
Մայրութիւնն եւս գտանին,
Սուրբ կանոնք իսկ արդեալին։

5. Ա. կողին ներքո. «25 Մարիամ Եգիպտացւոյ» (կողին գույքը՝ «ԺԳ»)։

## 27.

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐՒՈՅ

Թ. 41։ — ԺԸ. դար։

ԹԵՐԹՔ՝ 21. — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19 × 12.7։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ԿԱԶՄ՝ մագաղաթ, ձեռքի կողմը լատինագիր գրուած։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԳԻՐ՝ նօտրգրագիր։ — ԿՈՂԱԶՈՐԱՆ, թղ. 1ա. — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր։ — ԳՐԻՉ. ՏԵՂԻ. ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ. — ՆՈՐԻՆ ՎՐԱՅ ՀԻՆ ԹԻՒ՝ ԼԴ։

Մասնաւոր է (թղ. 1ա—21բ) Տեառն Միքայէլի պատրիարքի Ասորւոց համառօտ ժամանակագրութիւնը քաղուածոյ արարեալ, յաւելից պատմագրաց ի վարդն բանաւորաց, սկսեալ յաշխարհի արարչութենէն մինչեւ յետին ասուրս Թէոդորոսի.

Եւ այլ յաւելուածք, ատենաւորեալք եւ պատմուածականք. կարգաւորեալ գիրսի եւ ժամանակաց եւ հռովմէական փոխաւոր թագաւորաց..., եւ թղ. 21բ. Զի՞նչ է ատաւածն քո եւ ամ նման է եւ որ գերպիս կերպարան ունի։

Հրտ. Միքայէլ Ասորւոյ Ժամանակագրութիւն. Երուսաղէմ 1870, էջ 1—63, տ. 17.

Այլ գրչէ. Համրանք աշխարհի ըստ Մաքսմին? արքային որդւոյ Դաւթի։ Եւ ապա. օրինակութիւնք ընդհատուած, մէկ ու կէս սիւնակ դատարկ։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Թղ. 21բ. Յիշատակ է այս գիրքս տեառն Յակոբայ Կոստանդնուպոլսեցւոյն եւ Աստուծոյ եղբ. կոչեցելոյն՝ եկեղեցւոյ սուրբ Մարիամ Եգիպտացւոյն թվին ՌՉԻԸին, ապրիլի ԺԵին։

## 28.

## ՔԱՂՈՒԱԾՔ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ ՄՂԵՐԳՈՒԹԵԱՆՑ

Թ. 36: — ԺԶ.—ԺԹ. դար:

ԹԻՒՂԹՔ՝ 166: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14·5 × 9: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ խառնածարտոնոց: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ՊԱՏԱՌԿ՝ 1, 81—84, 146—166: — ԳԻՐ՝ մանր նօտրագիր: — ԿՈՂԱՊԱՐԱՆ՝ թղ. 2ա: — Կան ՄՂՂԱԿԱԳՐԵՐ, մեծ մը դատար բոլորուած: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ անյայտ:

*Պարունակէ 1. (Թղ. 2ա—85) Քաղուածք ի Նարեկ գրոց. գլ. Է—Թ. ԺԹ. Ի. ԻԵ. ԻԶ. Լ. ԼԲ. ԼԳ. ԿԶ. Խ. ԿԵ. ՀԳ. ՀԵ. ՀԹ. ՁԱ. ՁԲ. Ղ. ԽԴ. ՀԶ. ԻԶ:*

2. *Թղ. 85—110. Ցիշատակարանութիւն պատմութեան ամենայն նշանի սատուածեան խաչին... Ընդ ասացս ժամանակաց...*

3. *Թղ. 110ա—122. Ասանաւոր (Աստուած)ային անուն համծարցն... (Ա—Ք տանեկաւ):*

3. *Թղ. 122—145 Գանձեր խիլիկ...*

*Հմտ. Գրիգորի Նարեկացւոյ Մատենագրութիւնք. Վենետիկ 1840, էջ 371—421:*

## 29.

## ԺՈՂՈՎԱԾՈՅՔ

Թ. 38: — ԺԶ. դար:

ԹԻՒՂԹՔ՝ 47: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20 × 14 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ թղթակազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նօտր: — ԳՐԻՉ՝ Միքայէլ Սեմեսեան: — ՏԵՂԻ՝ Կարին: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1808են յառաջ (տե՛ս Թ. 37): — ՀԻՆ ԹԻՒ՝ ԼԹ:

*Պարունակէ ժողովածոյք, ուր կան*

1. *Թղ. 1ա. Թուղթ ընդհանրական առաքելոյ տեառն մերոյ սրբոյն Ներսէսի սրբազան կաթողիկոսին Հայոց առ հասարակ ամենայն հաւատացելոյն ի Քրիստոս. կարգ եւ կանոնք հաւատոյ եւ դաւանութեան (բաժանեալ ժ գլխոց): Ներսէս ծառայ Յիսուսի Քրիստոսի... Գիտութիւն լիցի ամենեցուն ձեզ, որ հայրն մեր հոգեւոր...*

2. *Թղ. 28ա. Այլ թուղթ տեառն մերոյ Գրիգորիսի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, գրեալ եպրոք նորին հրամանաւ՝ սրբոյն Ներսէսի ի Միջագետս Ասորւոց յԱմոյք կոչեցեալ նահանգին... Թէպէտ եւ աէրունական հրամանն...*

3. *Թղ. 32բ—36բ. Այլ բան սրբոյ Կիւրակոս վարդապետի (Երզնկացւոյ) առաջեալ կարգ եւ կանոնք յաւզգափառացս եկեղեցւոյ: ՅԱստուծոյ ամենակալէն օրհնութիւն եւ պահպանութիւն եւ ի նուաստ Կիւրակոս վարդապետէ ողջոյն եւ օրհնութիւնք ընդհանուր յամենայն հաւատացելոցդ ի Քրիստոս... Արդ գիտասջիք քրիստոնեայք... զի մարդս Բ. իրօք յարգայութիւնն Աստուծոյ կու ժառանգէ... Վչ. գրեալ գիրս զայս քարոզի եւ կանոնաց... զի եւ ծեր եմ եւ ոչ եմ կարող, եւս յայժ կու փախեմ ի բանութենէ յայլազգեաց առնս առ ձեզ գալոյ... ի ծերութեան այլեւս ի ձեզ բարեխօս լինի... Այս գիր ձեռին իմոյ ի նուաստ Կիւրակոսէ է, Հայոց էռատաւորչին գաւառէն. գրեցաք առ աստուածապաշտ ժողովուրդ զի սէր եւ հաւանի...*

4. *Թղ. 37ա—47բ. Այլ խրատ մեծն Կիւրակոսի վարդապետի ասացեալ յաղագս Ը. մարութեանց խորհրդոց (ախտից): Գլ. Ա. Զարմանալին բնութեամբ անօթն բնութեան Պօղոս գինջրուածս մարդկան երկակի տարորոշէ... Վասն որոյ եւ եւ իրրեւ ծանեայ զկնգիրս ձեր, պատուելի բարունապետ Ցովհանէս եւ որք միանգամ ընդ քեզ եղբարք, յայժ ուրախացայ... Արդ. Ը. են ամենայն խորհուրդք չարին...*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. *Թղ. 28ա. Եարի ընթերձողք, յորժամ զայս գիրս առեալ ձեռս ունիք ընթեռնլոյ, մեզ Հայր Միքայէլ յիշե-*

լոյ արժանի առնէք զնուաստ գծրգուրումեցի ասսկ Միքայէլս, որդի Մարտիրոսեան, որ մականուամբ Սրւախչի Սանոսեանց. եւ զուք յիշման յարժանի առնօղդ յիշեալ յինի՛ջեր առաջի անմահ գառին Աստուծոյ. որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

2. Թղ. 32բ. Ով բարեմիտ ընթերցողք. յիշեսջիք զմեղաւոր Միքայէլս...։

## 30.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՒՏԻ ԱՇԽԱՐՀԻՆ ԱՄԵՐԻԿՈՅ

Թ. 26: — 1753:

ԹՈՒՂԹՔ՝ 83: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20·7 × 15·5 հմ. — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ Թղ. 70ա—83բ: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ԳԻՐ՝ ճոտր.: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ պարզ: — ԳՐԻՉ՝ Յովի. Կեսարացի: — ՏԵՂԻ՝ Երուսաղէմ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1753: — ՀԻՆ ԹԻՒ՝ Լ:

Մատեանս է «Սկիզբն գտման Նորոյ աշխարհի, որ ասի Ամէրիգա, եւ Թուրքաւար բառիւ Ենկիտւնեա յորջորջեցեալ: Որում պատմարանքն այսու ստուգաբանութեամբ արտաձառեալ են, որք ստորեւ հետեւին»:

Թղ. 69ա. Ցիշատակարան Թարգմանողի փոքրիկ գրոցս:

Թարգմանուած է Թուրքերէնէ. Թարգմանիչն է «Կեսարացի Յոհաննէս ամենանուաստ սիրօղս բանի ի նպաստ մեղսամած հոգւոյ իմոյ... որ ի ՌՄԲ (1753) Թվին աս գրան սրբոյն Յակոբայ առաքելական աթոռոյս ամենայն Հայոց, ի սուրբ քաղաքս յԵրուսաղէմ. որոյ անարգիւն գոլով վէքիլ՝ Թարգմանեցի անյարմարարար»։

Թղ. 1ա. Ի Գրիգորէ վարդապետէ Այնցւոյ, ի միաբանէն Երուսաղէմայ անյիշատակ (ա՛յսպէս) Հայոց հիւրանոցին Համայ. յօղ" ամի Տեառն 1794:

## 31.

## ԱՄԻՐՏՈՎԼԱԹԻ ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ

Թ. 6: — 1724:

ԹՈՒՂԹՔ՝ 195: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 27·2 × 16·5 հմ.: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ ողորկ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ Թղ. 5բ. 191բ—195բ: — ԳԻՐ՝ ճոտր.: — ԳՐԻՉ՝ Սարգիս Սահէրթի: — ՏԵՂԻ՝ Երուսաղէմ եւ Հռոմ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1724: — ՀԻՆ ԹԻՒ՝ Զ:

Մատեանս է Ամիրտովլաթի Անգիտաց անպէտ։

1. Թղ. 1ա—4բ. Բառարան բժշկական բառից. անխորագիր. Այսաւս ճանկ. է Ասփրկոյ. Աչրխս. Աւֆիոն... Ա—Ֆ։

2. Թղ. 5ա—13բ. Անխորագիր. Յառաջաբան. Շնորհիւ եւ ողորմութեամբն... արարչին... գրեմք զդեղերուն անուանքն..

3. Թղ. 14ա—181բ. Դեղեր ի վերայ այբին. Այսաւսն, որ հաղէքն վարդուակ ասեն...

4. Թղ. 181բ. Ցիշատակարան այս գրոցս, որ զՀէքիմարանս չինեալ է բազում աշխատութեամբ...։

5. Թղ. 182ա—191ա. Ջանազան դեղագրեր. Տօմայի միսկ լաւ է եւ քաղցր. ող(ա)է | արտին նուագեյան...։

Թ. 2—4 հրատարակուած՝ Կ. Բասմաջեան, Ամիրտովլաթի Ամասիացւոյ Անգիտաց անպէտ. Վիեննա 1927։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 181բ, Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ շնորհարաշխի, որ ետուր տկարիս հասանել աստու կարողութեամբն իւրով, որ ասի գրոցս սկիզբն հէքիմարանի բժշկարանացն արուեստի, արանց իմաստնոց եւ գիտնականաց աշխատասիրաց աշխատեալ

*ամենայն գոյից զինութիւնն յայտնելով եւ զորակն եւ զօրութիւնն. եւ զներգործումն ի մարդկային բնութիւնս, զգործոցն զառողջութեան եւ զՓառաւորութեանն իմացմամբ իմանալով եւ փորձիւ ճանաչելով, եւ մեզ տկարացս եւ անիմաստիցս ծանուցումն առնելով, որ մեզ օգուտ եւ Միխիթարանք ի ձեռս մեր ունելով. եւ իւրեանց յիշատակ բարի, թէ որչափ բժշկապետքն աշխատեալ, զորս յառաջքն գրեալ եւ գտանուանս ի գիրս, վասն մեր Հայր մեղայս յիշելոյ եւ թողութիւն մեղաց խնդրելոյ, զոր ի Քրիստոս փորձս բարեաց պարգեւեսցէ իւրեանց աշխատանացն, եւ ողորմի ի մեւսանգամ գալստեան իւրոյ. ամէն:*

*Եւ ես տկարացեալս անձամբ, զառածեալս մեղօք միայն մեղայի եւ զգլխամբ աղաղակեմ առ Քրիստոս, խնդրելով զթողութիւն մեղաց իմոց եւ խնդրել ողորմութիւն ի բարերար կամաց իւրոց: Եւ ի ձէնջ հայցեմ մախթանօք ով որ հանդիպի սմա կարդալով եւ օրինակելով վասն օգտի յիշել զնուզոկիացի Սարգիս եպիսկոպոս, որ եմ Սահէթճի. եւ դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն:*

*Արդ եղեւ սայ յառաջագոյն սկսեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն սուրբ Յակոբայ. եւ այժմ եղեւ աւարտ սորայ ի սուրբ քաղաքս Հռոմ, առնելով ընդ իւ զՍիմոն որդեակն իմ ի թուոյ փրկչին ՌՉԻԴ (1724) յուլիսի ԻԵ: Եւ Հայոց թվին ՌՃՀԳ. յուլիսի ԺԴ. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

2. Թղ. 1ա. Վարի լուսանցքի վրայ, այլ գրով. «Յիշատակ է բժշկար|ան|ս այս սրբոյ Մ. Եգիպտացուն:

3. Թղ. 5ա. Յիշատակ է այս գիրքս տեառն Սարգիս վարդապետին Թոխաթեցւոյ եւ եպիսկոպոսին Ծննդոյ. ով որ կարդայ կամ օրինակէ, մի՛ով Հայր մերիւ զվերոգրեալն յիշէ. Թվին Քրիստոսի ՌՉԼԱին օգոստոսի ԺԸին:

Եկեղեցւոյն սրբոյն Մարիամու Եգիպտացւոյն.

## 32.

## ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԱՅ ՍԵԲԱՍՏԱՑՒՈՅ

Թ. 51. — 1766.

ԹՈՒՂԹՔ՝ 144: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×10·2 եմ.: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ սկիզբը եւ վերջը 7+7 թուղթ: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԳՐԻՉ՝ Գր. Կեսարացի: — ՏԵՂԻ՝ Կեսարի՞ա: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1766:

*Մատեանս է.*

1. Թղ. 1ա. «Համառօտութիւն ճարտասանութեան գիրքին ածիւ եւ վայելուչ օրինակաւ շարադրեալ աշխատութեամբ տեառն Մխիթարայ վարդապետին Սեբաստացւոյ աբբայ Հայր կոչեցելոյ... յամի Տեառն 1733 ի Վէնէտիկ:

Վջ. Թղ. 124ա. Եւ այսոքիկ սակաւքս համառօտապէս շարադրեցեալք բաւականք լիցին յաղագս ճարտասանականի արհեստին ի փառս Յիսուսի...»:

2. Թղ. 125ա—140բ. Թէոդոտոս վերատեսուչին Անկիւրայու ճառ ասացեալ յաւուր Ծննդեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ընթերցեալ ի մէջ ժողովոյն Եփեսոսի առաջի Ս. Կիւրղի: Պայծառափայլ եւ սքանչելի նիւթն այս յառաջիկայ տօնիս, պայծառափայլէ զի հասարակ փրկութիւն երեւ մարդկանց...: Վջ. Եւ ի մեզանէ հաւատացեալ Քրիստոսն զփոխարէն սորա զերկնից արքայութիւնն պարգեւեսցէ հաւատացողացս...:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. Թղ. 124ա. Արդ աստ գրեցեալ աւարտեցաւ գիրքս ճարտասանութեան ի թուականիս Հայոց ՌՄԺԵ (1766) ամին. ձեռամբ Կեսարիու զիւղէն յՆուքառացի հանգուցեալ տէր Յակոբի որդի փանաքի տիրացու եւ եթէ Գրիգորիս ի վայելումն Գրիգոր մեղրածորան վարդապետին... յիշման արժանի առնիցէք առ Տէր հանգուցեալ զՏէր Յակոբ զհայրն իմ եւ զմեղսալից Գրիգոր դպիրս...:

2. Թղ. 1ա. Ի Գրիգորէ վարդապետէ Այնեցւոյ, ի միաբանէ Երուսաղէմայ, յիշատակ Հայոց Հիւրանոցի Հռոմայ, յօգոստոսի ամի Տեառն 1797:

## 33

## ԺՈՂՈՎԱԾՈՅՔ

Թ. 24 — ԺԹ. դար

ԹՈՒՂԹ՝ 81 — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21.5 × 14.5 սմ. — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ 18 × 12 սմ։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ. կազմը բերել մը ճպճպած։ — ԳԱՏԱՐԿ՝ Թղ. 1—3ա, 81 — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ԳՐԻՉ, ՏԵՂԻ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ. հաւանօրէն ԺԹ. դարէ։ — Կողքին վրայ՝ կիձ ըեւ ժէ. կողքին ներսը՝ «Մարիամ Եգիպտացոյ. 83». Թղ. 3ա. Historia... son venuti in christianità No 24 in lingua armena

*Մատեանս է ժողովածոյք. ուր կան՝*

1. *Թղ. 3բ. Զրոյց եւ խրատք առաջի թագաւորացն եւ իշխանացն. զոր թարգմանեցին Դաւիթ կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լեզուէ։*

*Ցանուն Աստուծոյ ողորմածին։ Կայր խալիֆա մի ի Պաղտատ քաղաք, եւ անէին անուն նորա Աւփասալ Ազիզ։ Եւ էր մի եղեւ յաղթութեան իւրոյ եւ խաղաղ ի ժամանակն. եւ երեկ մարդ մի, եւ անէն զանուն նորա Դալի Փէրեհ, եւ ծառայ էած խալիֆային եւ ասէ. Ո՜վ հզար խալիֆայ. քաղաք մի կայ ի հիւսիսոյ կէսն, անուն նորա Պլլեծէ քաղաք. մտու ի ան քաղաքն են ան գեւքն, որ Սողոմոն ի կմերն էած եւ արճիճով գրեալ կարաւ եւ ժառանգէք։ Կոչեց խալիֆան զՄէլիք Մուսին եւ ասէ. Եկ գնայ գիտ զան գեւքն որ Սողոմոն գնդանել է...*

2. *Թղ. 15բ. Խաւսք Անդամայլունծին ընդ Քրիստոսի։ — Լուարուք հաւատացեալք եւ որ սիրողք էք Քրիստոսի. զի Տէրն մեր եւ արարիչն Աստուած իբրեւ զմարդ շրջեցաւ աշխարհի... իբրեւ եմուտ Քրիստոս ի քաղաքն Երուսաղէմ, անդ պատահեցաւ նմայ Անդամայլունծ մի...։*

3. *Թղ. 22ա. Պատմութիւն Մարիամ Ափառաւորանին եւ սքանչելեացն Աստուծոյ, զոր եցոյց ամենայն խոստովանողաց առ ... — Ցեւ կենդանութար ... եւ ... Տեառն մերոյ...*

4. *Թղ. 28բ. Դիր հանհանելոյ... — Թագաւոր մի կար եւ ունէր դուստր մի գեղեցիկ յոյժ. եւ ասէր հանհանելուկ ընդ կորրծերն եւ որ չի տար պատասխանի՝ հատանէին զգլուխն հրամանաւ թագաւորին։ Եւ էր բանն այս աղջկան. եւ էր խիստ գեղեցիկ... եւ յուեալ բան զայս որդի մի իշխանի ի հեռաստանէ...*

5. *Թղ. 33ա. (Պատմութիւն կամաւոր աղքատի) — Ի թագաւորութեան մեծին Թէոդոսի եւ հայրապետութեան Յոհաննու Ոսկեբերանի, էր ոմն տատանաձաղաչո ի քաղաքին Կոստանդինու պա(ւ)լսի. եւ էր մեծատուն յոյժ... եւ յանուն կնոջ նորա Թէոգոս...*

6. *Թղ. 40բ. Պատմութիւն Ալեքսիանոսի կամաւոր աղքատին Աստուծոյ։ — Այր մի էր ի Կոստանդինուպոլիս եւ անուն նորա Եփիմիանոս...*

7. *Թղ. 48բ—65ա. Պատմութիւն մեծ թագաւորին Զարմանազանա եւ որդւոյ նորին Յարմանի Աստանին փարուցն, ծննդեանն, ընդդեմն եւ մահուանն։ Աւգնեա Յիսուս Քրիստոս. ամէն։*

*Եղեւ մեծ թագաւոր մի յԱսորեստան,*
*Անուն թագաւորին էր Զարմանազան.*
*Այնէր շատ քաղաքաց հուքմ եւ հրաման,*
*Ունէր անթիւ հեծեալ եւ քաջ պահապան...*

*Թղ. 64, չորրորդ տողէն սկսեալ ակեղ նատրագիր ուրիշ գրչէ. հաւանօրէն զաղափար-օրինակին մէջ պակաս ըլլալուն՝ օրինակողը դատարկ թողուցած է տողեր, եւ երկրորդ մը լրացուցած, այսպէս նաեւ Թղ. 65ա, վերջին տողը։*

8. *Թղ. 65բ. Ոտանաւոր ասացեալ է Յրիկն որդի Թադվորչին, եղբայր որդի Դոգանայի ի վերայ իւր մեղացն, ի վարս բանդաւորաց։*

*Ցորժամ մահն մատենայ ու գրուցն գայ,*
*Ոչ ի ծեր կու խնայէ, ոչ ի մանուկ, ոչ յերեխայ...։*

9. *Թղ. 67ա. Նորին Յրիկին ասացեալ է։*

*Այս է համատիրը ծաղիկն*
*որ թափէ զմարդն ի մահու...*

10. Թղ. 69ա. Նորին Յիսկին տա-ղեալ է։

*Անձն իմ զինչ արարի ես զոյ,*
*որ ձայնդ ի գուրս զայ երակ...*

11. Թղ. 72ա. Նորին Յիսկին տա-ղեալ է։

*Մարգուն աայէ՞ն եւ պաւղն*
*ի վերուստ յորդ չի լինի եղած...*

12. Թղ. 73ա. անխորագիր։

*Է՞ Փարոք երբ ծախս մարգուն,*
*գորն ի բուն փորես նորայ նոր...*

13. Թղ. 74ա. (Վիճաբանութիւն—բանաստեղծ. ոտանաւոր մը 18 աշխարհ. ուր նշանակուած են Աստուծոյ եւ Մարգարէից անուն-ները)։

ա. (Պետրոս) Ով մարդ, որ՞ ծնեալ է ա-մենատուր Երրորդութիւնն, որ փրկեաց զքեզ ի նեղութենէ...։

14. Թղ. 78ա. Նշանք թէ ի՞նչ պատճա-ռանաւ խաւարի լուսինն կամ արեգակն։ — Տե՛ս եղ(ր)այր եւ ալդ(ր)է զմիտս եւ բաց զաչքդ, ի մէջ առ եւ մի զպերարս տուր անձեւ։ Տե՛ս զ՚ եփ նոր լինայի, թէ երկու եղջիւրքն սուր են՝ ամպն լաւ լինի եւ կակուղ...։

15. Թղ. 79ա. Այբուբենի 14 զաշտով, որ գրուած են տառերատուներն Յոյն, Յայն են. (Յոյն.) Ով եղբայր, լսա փա-ռաց ծագէ Աստուած ի վերայ քո...։ Վեր-ջաւորութեան թուղթ ինկած, ուր նշանակ գիտակ աստանէր յաւելեալ։

16. Թղ. 2բ. Երկու դեղագիր։
*Վասն ախտին որ հազմեց ձայն առէ...*
*Վասն փայծեղան որ հայէ...*

**ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.** 1. Թղ. 78բ. խառագիր.

*Ես եմ Աւգոստոս, Ազատէկի*
*մրաւխրեցայ ի յայս ամսիս,*
*փեռքան չարչ զայս ի յերկրիս,*
*յայսք արակ ազարմելի*
*եւ յայս անիմ Յիսուսի*
*Քրիստոս թագը արամ*
*ի մեռնայի, իմ մեղաց գիրս։*

2. Թղ. 81բ. այլ գրչէ. խառ։
*Ես Աստուծոյ եւ յանդիման*
*աէր ըՄատեանանի Թաս Զաքարիայի*
*ազան,*
*որ չաս մեղաք եւ յըեալ կամ,*
*որ ամենայն մաժ վայ ինձի առամ,*
*որ միայն ես եմ անարժան,*
*Աղամայ որդի երկրի վրան,*
*Վայ ինձ առաւօտ զատաստանի,*
*որ թէ յիշէ զիմ ամէն բան,*
*չունիմ ճաւապ կամ պատասխան,*
*Աստուած քեզ զիս անարժան*
*զաւեալ ի գաս յաջողակմեան։*

3. Թղ. 3ա.
*Ճ ազ. աչքէտին մարմի մատա ունիմ։*
*Ի ազ. ի Թաւաքի մատա ունիմ։*

## 34.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔԻՆ

Թ. 65 : — ԺԸ. դար :

ԹՈՒՂԹ՝ 76 : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10·5 × 8 հմ. — ՆԻՒԹ՝ թուղթ : — ԿԱԶՄ՝ խաւամարտեալ. ա-կոյր ինկած : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ սկիզբէն թուղթեր ինկած. Թղ. 1ա սակաւ ինչ վնասուած : — ԳԻՐ՝ բոլորգիր-շղագիր : — ԳՐԻՉ. ՏԵՂԻ. ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ : — Հին թիւ՝ ԽԹ :

1. Թղ. 1ա—31ա. Պատմութիւն Պղնձէ քաղաքի. սկիզբէն մէջէն թղթեր ինկած։ Ունի կաֆաներ։

2. Թղ. 31ա. Նախադրութիւնք խրա-տականք յաղագս Աղաւթից զոր արարեալ է տեառն Ներսէսի եպոր Պետրոսի Հայոց վերադիտողի։ — Աղաւթ հասարակաց քրիս-տոնէից... (վերջէն թուղթ ինկած)։ Հա-ւատով խոստովանիմ...

3. Թղ. 43ա. Պատմութիւն (Պատմութիւն) Թագաւորին. կաֆաներով. սկիզբէն թուղ-թեր ինկած. այժմ կը սկսի. «...հանապազ աղաւթս առնէր առ Աստուած եւ ասէր զայս ինչ...։

54ա—բ. Ջարատուք. Թղ. 55—76 պա-րապ են։

## 35.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՓՈՆՑԻԱՆՈՍԻ ՏԱՃԿԵՐԷՆ

Թ. 13: — 1798:

ԹՈՒՂԹ՝ 79 (էջահամարուած՝ 158): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25·2 × 18·8 հմ. — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտրագիր: — ԳՐԻՉ եւ ՏԵՂԻ՝ անյայտ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1798:

*Մատեանս է «Պատմութիւն Փոնցիանոս փատիշահն վէ սուլթանն վէ օղլու Դէօկղէտիանոսուն վէ եէտի իմաստունլարըն նաքլի տիր: Բիր վագիտտէ Հռոմայ մէմլէքէթինտէ....:*

*ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 79ա. Ի թուին Հայոց ՌՄԽԷին եւ մայիսի. Թ-ին, յաւ(ո)ւր Դ-ին կատարեցաւ օրն չարաթ:*

## 36.

## ՅԱԿՈԲԱՅ ԱՐԱՊԵԱՆ ԼՈՅՍ ՀԱՒԱՏՈՅ

Ի. 12: — 1769-1774:

ԹՈՒՂԹ՝ 620 (էջահամար 1240): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25·2 × 18·3 հմ. — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ Էջ 1—2. 3բ. 8բ. էջ 994էն ցատկած 998. էջ 1230—1236 դատարկ: — ԳԻՐ՝ նոտր: — ՆԿԱՐՔ՝ տպագիր. Էջ. 6բ Սուրբ Լուսաւորիչ. 8ն Sancta Trinitas unus Deus. ԳՐԻՉ՝ Յակոբ Արապեան: — ՏԵՂԻ՝ անյայտ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1769-1774: — Հին թիւ՝ Է:

*Մատեանս է «Գիրք լոյս հաւատոյ. յորում պարունակի յայտարարութիւն ամենասուրբ Երրորդութեան եւ մարդեղութեան բանին Աստուծոյ, այսինքն Որդւոյն Աստուծոյ. եւ մօր նորա ամենօրհնեալ եւ փառաւորեալ Ս. Աստուածածնի Մարիամու անարատ Կուսին: Հաւաքեալ եւ ի մի բերեալ թարգմանութեամբ իտալական գրեանց ի մերս բերեալ, աշխատութեամբ անարժան Յակոբոս Մեսրոբ Քեահեայ Արապեան արքեպիսկոպոսի Լամբրոնի եւ Տարսոնի Կիլիկեցւոյ... Եղեւ բովանդակ մատենիս այսորիկ յամի Տեառն 1769. վերջացաւ 1774, յաւուր տօնի սուրբ Մեսրոբայ:*

*Թղ. 4ա. Ա. սուրբ Մեծն Մեսրոբ վարդապետն:*

*Թղ. 7ա. Բան առ իմաստասէր ընթերցողս մերայնոց մեծի Յաբեթական զարմիս...:*

*Թղ. 9ա — էջ 1. Գիրք յաղագս գալով Հրէից կամ Եբրայեցւոց անաստուած եւ ասանց օրինաց եւ խարդախութեանց նոցա ատութեամբ, զոր զսուրբ Աստուածաշունչ տառն այլայլեալք են զի խափանեսցեն զնշանակութիւնս ամենասուրբ Երրորդութեան եւ այլոց:*

*Գլուխք Ա—Ճ. էջ 1—1223:*

*էջ 1225—1229 ցանկ գրքոյս:*

## 37.

## ՄԻՔԱՅԷԼ Վ-Ի ՍԱՆՈՍԵԱՆ ԿԱՐՆԵՑԻՈՅ ԶԷՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Թ. 32: — 1808.

ԹՈՒՂԹ՝ 129 (էջք 258): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20·7 × 14·5 հմ. — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ Թղ. 1: — ԳԻՐ՝ նոտր: — ԳՐԻՉ՝ Միք. Գ. Սանոսեան: — ՏԵՂԻ՝ Կուտինա: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1808: — ՀԻՆ ԹԻՒ՝ Խ:

*Մատեանս է «Գիրք որ կոչի Զէն ճշմարտութեան. շարադրեցեալ նեռ առաքելական միաբանութեան իւրում ի տէր Միքայէլ Գրիգորիոս ծայրագոյն վարդապետէ Սանոսեան Կար(ն)եցւոյ, ի կարգէ Քարոզողացն ամենասուրբ Ժողովոյն Տարածման Հաւատոյ.... Գրեցաւ յամի Տեառն 1808 եւ ի թուին Հայոց ՌՄԾԷին ի 20 օգոստոսի, ի Կուտինայ կամ ի Քիւթահեայ:*

*Թղ. 3ա. Յառաջաբանութիւն առ ճըշմարտասէրս: Հոս կու տայ հեղինակը իր կեանքէն հետեւեալ տեղեկութիւնները. «Նախ ի ծննդենէս սկսեալ մինչեւ ցերեսուն ամի հասակի իմոյ... կայր էր» (այսինքն ոչ-կաթողիկէ)։ 31ամեայ «եղէ ուղղափառ յԱխլցխոյ քաղաքի». իսկ 6 ամիս ետքը կ'ենթարկուի հալածանքի. «մտանելով ի բանտ եւ ի շղթայս. կրեցի յինն օր զբազում չարչարանս, զյափշտակութիւն ընչից եւ զաւուզանս բստ կարողութեան իմոյ մինչեւ ցվերջին նաքարակիտն իմ եւ ազատեցայ. Բայց թշնամիքն ուղղափառ հաւատոյս ոչ շատացեալ այնու՝ կրկին յարեան ի վերայ իմ իբրեւ վիշապք չարեաց, եւ կամեցան մատնել զիս անդրէն ի ձեռս անօրէն դատաւորացն եւ կամ բստ ինքեանց՝ ուրացուցանել զուղղափառ հաւատս իմ... անճար մնացեալ փախ ետու ի քաղաքէ ի քաղաք.. եւ այսպէս ամբողջ երկուց ամաց եօթն ինքնակալ տէրութիւնս շրջագայեալ՝ ժամանեցի ի մեծն Հռոմ. եւ նստայ անդ զերիս ամս առ ի ուսանել զհարկաւոր իրս քահանայական սուրբ կարգին ամենաբարձր հրամանաւ սուրբ Ժողովոյն Տարածման Հաւատոյ... Ս. Ժողովն «յանձն արար առ գերապայծառ արքեպիսկոպոսն Լէօվպոլսեցի Հայոց, զի նա ձեռնադրեսցէ զիս քահանայ ի վերայ մակագրի միսիոնարութեան նոյնոյ Ս. Ժողովոյն առաքելական...: Այնպէս արարին»: 36ամեայ կ'օծուի քահանայ. 2 տարի եւ 3 ամիս կը մնայ Լէօվպոլիս. «ուսայ զլատինականս: Բայց անդ եւս նախանձեալ ոմանք զկնի մահուան արքեպիսկոպոսին՝ փախուցին զիս անտի ի յԱրդեալ կամ բստ Լատինացւոց ի Դրանսիլվանիա, ուր գնացեալ ի քաղաքն Հայոց Եղիսաբեթուպոլիս՝ նստայ անդ հինգ ամ եւ կէս, լինելով նոցա քարոզիչ...: Ապա անտի եւս յարուցեալ հրամանաւ Ս. Ժողովոյն... գնացի ի Կ. Պոլիս եւ անդ մեծաւորք իմ եդին զիս առ ժամայն ի տուն միոյ առն բարեպաշտի, որ յայսմ ամի հանգեաւ ի Քրիստոս, ի 31 յուլիսի 1808, առ ի ուսուցանել զմանկունս նորին աստուածպաշտութեամբ. ուր ամենայն հանդարտութեամբ նստեալ գերիս եւ կէս ամս...: Իսկ այժմ որ կեամ ի մէջ 48 ամաց հասակաւ, հրամայեցին ամենայն մեծաւորք իմ, զալ ի քաղաքս Փռիգեայ՝ Կուտինայ, սակս միսիոնարութեան. Յորմէ տեղի կամ ժամանակ զտանելով [illegible]՝ ահաւասիկ սկսայ գրել ձեզ զայս ճըշմարտութիւնս»:*

*Էջ 15. Յառաջաբանութիւն առ հետագայ վիճաբանութիւնս:*

*Էջ 17. Յաղագս վիճաբանութեան: Գլ. Ա., վասն Բղխման Հոգւոյն սրբոյ:*

*Վերջին գլուխն է (էջ 228–256) Զ. վասն միութեան սուրբ կրօնիս եւ միաբանութեանն ընդհանուր քրիստոնէից Կ'աւարտի. «Եւ փրկչին համատարած աշխարհիս», շարունակութիւնը կը պակսի:*

## 38.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. Ի ԷՐԶՐՈՒՄՑՒՈՅ ՎԱՀԱՆ ՀԱՒԱՏՈՅ

Թ. 50: — 1745:

ԹՈՒՂԹՔ՝ 320 (էջք 640): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10·8 × 10 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — ԴԱՏԱՐԿ՝ Թղ. 1—5, 309—320: — ԳԻՐ՝ նոտր: — ԳՐԻՉ՝ անյայտ: — ՏԵՂԻ՝ Կ. Պոլիս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1745: — ՀԻՆ ԹԻՒ՝ ԼԶ:

*Մատեանս է «Վահան հաւատոյ ընդդէմ աղանդոց եւ մոլորութեանց հերձուածողաց. շարադրեալ ի Յոհաննու անիմաստ վարդապետէ Երզրումեցւոյ, բստ ճշմարիտ վարդապետութեան Հռոմէականի սուրբ Եկեղեցւոյն, ի մխիթարութիւն ուղղափառաց Հայոց. Յամի Տեառն 1745, ի 12 դեկտեմբերի... ի Կոստանդինուպոլիս:*

*ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 1ա ի գրոց տեառն տէր Օհաննեան Մխիթարի առաքելական միսիոնարի առ Արեւելք:*

*2. Թղ. 6բ. Զգիրքս զշարագրեալս յինէն, օրինակել ետու միում ումեք աշակերտին իմոյ, որ անհաւատարմաբար գրելով, զբազում տեղիս ապականեաց ի համաձայնութիւնս եւ ի հոլովս նոյն եւ այլն:*

## 39.

## ԳԻՐՔ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ

Թ. 48: — 1733:

ԹՈՒՂԹ՝ 24: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16·4 × 11: — ՏԵՍԱԿ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ Նոտր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ անյայտ: — ԺԱՄԱՆԱԿ 1733:

1. Թղ. 1ա. Յաղագս Նիկիոյ սուրբ ժողովոյն, որ է առաջին ժողովն. Գումարեցաւ ս. ժողովս յամի Տեառն ՅՃԷ... (Ա—Դ. ժողովք):

Յետ այսմ. գ. սուրբ ժողովոյս մինչ ի Թեմ. ամ. Թուղն Քրիստոսի բազում անգամ ժողովք եղեւ... Եւ ամենք գլխաւորական պատկերն ոչ ընդունէին որպէս Հայք զորս պատկերն ոչ ընդունէին ի սուրբ խաչից. եւ առաջնոյ պատկերս չարեն պատ–ոլըն եւ նշանոնս. ո՞չ...

2. Թղ. 2ա. Վկայութիւն սուրբ Աւետարանին (վասն գլխաւորութեան Պետրոսի) Վկայութիւն Հայոց ի նոյն:

3. Թղ. 4բ. Սուրբ Հարց առաջնոց ա–զօթք վասն չարչարանացն Քրիստոսի: — Աստուած որ վասն փրկութեան աշխարհի կամեցար ծնանիլ...:

4. Թղ. 5ա. Վկայութիւնք Մարգարէութեան, Երկուց բնութեանց, Քաղկեդոնի ժողովոյն ի նպաստ:

5. Թղ. 8բ. Յաղագս վկայութեանց սուրբ Գրոց (ի Հարց Հայոց), որ կայ Գծոփք եւ յարքայութիւն. (եւ քաւարան).

6. Թղ. 20ա. Յաղագս գլխաւորութեան Հռոմայ քահանայապետի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 21բ. այլ գրչէ. «Սա անարգս Անդրէասի որդի պարոն Դաւամիանոսին է. Տէր Աստուած եւ բարեանք իմաստութիւն տայ եւ եւս բանին աշխարհին պարգեւեսցէ եւ բարի վայելումն շնորհեսցէ. ամէն: Թվ. ՌՃՁԲ. սին ս (?) ... ժԸնին:

## 40.

## ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՀԱՅՍ

Թ. 64: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 56: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11·3 × 8·5: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ Նոտր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հին թիւ՝ ԽԸ:

Աստանօր է Վիճաբանութիւն ընդ Հայս, որք հաշտեցեն զԵւտիքէս եւ մերժեն զժողովն Քաղկեդոնի: Խորագիր չունի:

1. Յանուն Հօր... Հրամայեաց կարծանդամաքուր մարգարէն Եսայի ասելով, թէ Վա՜յ այնոցիկ, որք ասիցեն զչարն բարի եւ զբարին չար...: Արդ եթէ այդպէս է՝ հարկ եղեւ մեզ մեղադրել սիրով Հայոց եղբարց մերոց, թէ ընդէ՞ր ի վեր զպարապանութեամբ մերժէք զսուրբ ժողովն Քաղկեդոնի եւ զՏոմար Ս. Լեւոնի... (Այր ներկայացնէ Քաղկեդոնի ժողովին զաւանութիւնը): Եկեղեցւոյ այժմ ի քննել եւ արամադրել զդաւանութիւն Հարցն Հայոց... (Թղ. 14ա): Ապա մեք Յոյնք, որ ընդունիմք զՏումարն Ս. Լեւոնի եւ զսուրբ ժողովն Քաղկեդոնի, այսպէս խոստովանիմք որպէս հաւատայ սուրբն Ներսէս Կլայեցին...: Կատարի Թղ. 41ա Թերի թողով օրինակութիւնը. զատարկ Թղ. 41բ—48: Յաւարէն նէ թարգմանուած:

2. Թղ. 49ա (այլ գրչէ, 1751ին). Կերպ ուխտելոյ զմաքրութիւն կուսական. (Աղօթք.) Տէր Աստուած ամենակարող եւ յաւիտենական, Եւ...:

3. Թղ. 50բ. Կանոն եւ կերպ տեսանողութեան զանձն իւր ի ծառայութիւն սրբուհւոյ Աստուածածնին: Ընտրեա քեզ զմի տօն ի մէջ տօնից...:

4. Թղ. 56ա. Աղօթք Ս. Պետրոսի Աղեքսանդրացւոյն սա ի հայցել զալէրն Աստուծոյ զկնի Հաղորդութեան: Ի վեր քան զամենայն չնորհս զի զքեզ սիրեցեմ... (Երեք տող միայն. յարունակութիւնը չէ օրինակուած. Թղ. 56բ զատարկ):

## 41.

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻՈՅ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թ. 8: — 1728էն յառաջ:

ԹՈՒՂԹ՝ 238 (էջք 126 + 350), — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25·2 × 18 հմ: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն՝ 19 × 13.5: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ լաւ: — Պակասի Ա. էջ 123—126. Բ. 348—350: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ԳԻՐ՝ նոտր.: — Զարդագիրք կան Բ. մասին մէջ: Գրիչ (Բ. մասին) Յակոբ եպիսկոպոս: — ՏԵՂԻ՝ Հռոմ (*): — ԺԱՄԱՆԱԿ՝ 1728էն յառաջ. — Կողին ա. երեսին՝ Հին թիւ «Ը». կողին ներսը՝ «Քրիստոնէական վարդապետութիւն. 10. Մարիամ Եղիպտացու:

*Մատեանս է երկմասնեայ.*

*Ա. մաս, էջ 1—122 «Գիրք քրիստոնէական վարդապետութեան. ըստ որում գնի եւ Այբբենարան. ...շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ Աբբա-Հայր կոչեցելոյ: Եւ տպագրեցեալ... յամի Տեառն 1725 փետրվար 20:*

*Ուստի օրինակուած է տպագրէն:*

*Բ. մաս, էջ 1—350: Այս մասն ունի*

1. *էջ 1—231. Յաղագս աստուածային բազմապատիկ կատարելութեանցն, այս ինքն աստուածային ստորոգութեանցն: Ա. վիճաբանութիւն. յաղագս աստուածային գոյութեան եւ միութեան: Ա. խնդիր. Ա. Եզրակացութիւն՝ գոյ Աստուած է հիմն մերոյ հաւատոյս: Եւ ցուցանի յԱրիստոտէլէ բնական պատճառօք: Քանզի որ ինչ գոյ, կամ յինքենէ գոյ եւ անկախապէս յայլմէ, կամ կախապէս յայլմէ... :*

*Յաջորդ վիճաբանութիւնք են, Բ. Յաղագս երանելի տեսութեան: Գ. Յաղագս գիտութեանն Աստուծոյ: Դ. Յաղագս կամացն Աստուծոյ. Ե. Յաղագս ամենազօր երրորդութեան. Զ. Յաղագս աստուածային մարմնացութեան. Է. Յաղագս Հրեշտակաց:*

2. *էջ 232—252. Յաղագս փիլիսոփայից ասացեալ վասն հասարակարար մարդոյս կենցաղավարութեան ի մէջ մտաց. մտադրութիւն առնել եւ միտ ածել զօր մահուն իւրեանց. եւ հետեւիլ բարեացն:*

*Վասն երկիւղին Աստուծոյ: — Եթէ մեռանելոց իցեմ՝ այս հարկ է ինձ... (այլ եւ այլ վճիռք եւ խրատք)*

3. *էջ 256—283. Կրկին փիլիսոփայից ասացեալ է: Անցանէն ամք կենաց մարդկան. խոկ հեշտութիւնն ծնոյ յաւիտեան... (Այլ եւ այլ վճիռք, արձակ շարադրութեամբ)*

4. *էջ 252. Դամբ Ա. Աստուածածնին.*

*Յայս իմ վասն այն ի քեզ գիմէ*
*Նորոգեց ինձ գրեց կոչէ...*

*Տունք՝ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ*

5. *էջ 253. Գովասանութիւն սրբուհւոյ Աստուածածնին:*

*Յայս մեր ի քեզ է կենդանի*
*Նշանս մեզ աւետաց միշտ գու...*

*Տունք՝ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ*

6. *էջ 254. Վասն ննջեցելոց ի յաւուր տօնից զատկականի ասացեալ բանս:*

*Յայնժամ մեռեալքն ամենեքեան*
*Յառնեն եւ գան ի դատաստան...*

*Տունք՝* Յակոբ վարդապետ եւ եպիսկոպոսէ:

7. *էջ 284—287. Ոտանաւոր ասացեալ վասն առաքինեացն:*

*Յորժամ գոյցէ Տէր քո յայգոյդ.*
*Թէպէտ խնդրէ պտուղ ծառոյդ.*
*Ի թիւ արկեալ զհամար ծառոցդ.*
*Սահման պատէ քեզ բան գործոյդ...*

*Տունք՝* Յակոբ եպիսկոպոսէ է փոխադրեցեալ ասացեալ:

8. *էջ 287—291. Վասն բարեկէց կենցաղավարելոյ:*

*Աստուածային գրախտ անկեալ*
*Ծառ յաւելէն պտղաբերեալ.*
*Գեղծաղկեալ հոգով ծաղկեալ,*
*Ի յաստուածային զարդարեալ:*

*Տունք* Ա—Բ ՏԵՍ

9. *էջ 292—302. Խրատք վերջին օծման:*

*Առ այս էջ 291 կայ խրատս. «Յայս օրհնութիւնս ատրբ ձիթոյ իւղոյն միշտ եպիսկոպոսն միայն ինքն առնէ ի վերջն պատարագին, Մեծի հինգշաբաթի. առ ընդ իւր ունելով զ. է. քահանայս. եւ զատ յեպիսկոպոսէ զաւատին ոչ որ համարձակիցի(ի) օրհնել. եւ ապա բաշխէ զաւատն իւրոյ բոլոր եկեղեցեաց, առ ի օծանել զհիւանդս, բայց կանոնի վերոյ գրեալ ի կարգն վերջին օծման խորհրդոյն:*

*Քահանայն կատարելով զսուրբ խորհուրդս զայս։ Նախ պատրաստել հոգացէ սեղան ծածկեալ կտաւովք․․․։*

էջ 293—296. *Արարողութիւն վերջին օծման։ Եւ այսպէս սկսանի քահանայն. Տէր եթէ զշրթունս․․․ Աղօթքս սոյ. Տուր մեզ, Տէր Հայր սուրբ․․․։*

էջ 296—297. *Խրատ զգուշութեան պատկանաւոր վասն վերոյասացեալ արարողութեան վերջին օծման։ Արդ նախապէսարար գիտել արժան իսկ է․․․։*

էջ 298—302. *(Կանոն հոգեվարքի)։*

10. էջ 305—309. *Վասն Ս. Անտոնի արարեալ հրաշիցն պատմութեան։ Ի քաղաքի միում, յորում բնակէր Ս. Անտոն․․․։*

11. էջ 309—317. *Քարոզ վասն պահոց եւ փորձանաց սատանայի, ի բանն՝ Յայնժամ վարեցաւ Յիսուս․․․։ Վարդապետք ասեն թէ հաւատացեալքն․․․։*

12. էջ 317—322. *Նորին քարոզ ի բանն Սողոմոնի որ ասէ. Յիշեալ զփրկիչն քո յաւուր մանկութեան քոյ. Ի մէջ ամենայն կենդանեաց մարդս միայն է բանաւոր․․․։*

13. էջ 322—329. *Քարոզ վասն պաշտաման պատուհասի ի բանն Յովելեայ, Փող հարէք․․․ փոփոխական է մարդոյ բնութիւն․․․։*

14. էջ 331—332. *Սուրբ հօրն Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ է վասն չպահպանելոյ զքահանայս եւ զվարդապետս եւ զժողովուրդս։ Մթերիմ այդ եւ աղջամուղջ տրտմութեան․․․։*

15. էջ 332—336. *Կանոն վասն խոստովանութեան։ Գրեմք կանոն վասն խոստովանութեան, որ յԱստուծոյ մեզ բարի պարգեւեալ է․․․։*

16. էջ 337—338. *Օրհնութիւն ժամի Տեառն ընդ առաջի աւուրն։ Առաջնորդ կամ աւագերէցն զգեստաւորեալք․․․ Աղ. Ամենակարող եւ մշտնջենաւոր Աստուած․․․։*

17. էջ 338—341. *Օրհնութիւն ոստոց։ Ի Կիրակէի ծաղկազարդին նախ քան զպատարագն․․․։ Աղ. Ամենակարող եւ մշտնջենաւոր Աստուած․․․։*

18. էջ 342—343. *Աւրհնութիւն սեղանոյ. զոր չրջեցուցանեն առանց տաճարի։ Նախ լուանան խառնմամբ ջրոյն եւ ընդ գինին․․․։ Աղ. Տէր Աստուած ամենակարող․․․։*

19. էջ 344—346. *Աւրհնութիւն եկեղեցական զգեստուց։*

*Աւրհնութիւն Սկհի եւ Մաղզմայի։ Աւրհնութիւն Աղի եւ Ջրոյ։*

20. էջ 347. *Կերպ ներողութեանց զոր ԺԱ. Կղեմէս արքաղան փափն պարգեւէ․․․։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Ա. մաս, էջ 1. «Յիշատակ է Քրիստոնէական վարդապետութիւնս եւ փիլիսոփայութիւնս վասն հոգւոյ տեառն Յակոբայ Կոստանդնուպօլսեցւոյ եւ եպիսկոպոսի Ատանոյ առ սուրբ Մարիամ Եգիպտացին, որ է բնակարան ազգին Հայոց ի մեծն Հռոմ. որք հանդիպիք միով Հայր մերիւ ի մաքրափայլ աղօթս ձեր եւ դուք յիշեալ լինիջիք առաջի Քրիստոսի. ամէն։ Գրեցաւ յամի Տեառն ՌԷՃԻԸ-ին* (1728) *եւ ապրիլի ԺԵ-ին։*

## 42.

## ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Թ. 21: — ԺԸ. դար։

ԹԻՒՂԹ՝ 24: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21.3 × 15 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ թղ. 18բ—24: Թղ. 1 կիսով պատռած: — ԿԱԶՄ՝ թղթակազմ: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հին թիւ X.

*Մատեանս է «Յաղագս խոր(հրդոց եկեղեցւոյ) եւ ամենասուրբ (հաղորդութեան) քաղուածք ի բարոյական (աստուածաբանութենէ)»:*

*Թղ. 1ա—15բ. Հց. Քանի են խորհուրդք եկեղեցւոյ։ Պխ. Եօթն. այս ինքն Մկրտութիւնն, դրոշմն․․․։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 18ա. Յիշատակ է գիրքս տեառն Գրիգոր պատրիարքի Անդրիանուպօլսեցւոյ ի յեկեղեցին սրբուհւոյ Մարիամու Եգիպտացւոյն, որ եղաւ ի թւին 1744, յօգոստոսի 15։*

## 43.

## ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

Թ. 27: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 122: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21 × 13: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ չուածի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Կը պակսին 1—16 էջերը: Դատարկ էջ 253—260: — ԳԻՐ՝ Նոտր.: — ՏԵՂԻ, ԳՐԻՉ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

*Մատեանս է Հարցմունք եւ պատասխանիք ի վարդապետութենէն կաթողիկէ եկեղեցւոյ:*

## 44.

## ՀՐԱՀԱՆԳ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՑ

Թ. 20: — 1860:

ԹՈՒՂԹՔ՝ 50: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22 × 16: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ թղթեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ շղագիր, մատիտով գրուած:

*Մատեանս է «Հրահանգ դաւանութեան հաւատոյ:*

*Թղ. 1ա. Կ'ըսուի. «Խնդրեաց յինէն այսպիսի ինչ ձեռնարկ գործոյ Պետրոս վրդ.ն Ալթունեան, որ ապա եպիսկոպոս յէջմիածին, մինչ կայր տակաւին ի քառասունեան քահանայական կրթութեան, խօսելով ի գէմս լուսաւորչեան եկեղեցւոյ»: Այս կը պատահի 1830ին ի Սամաթիա Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, որուն առաջնորդն էր նա յայնժամ». Կը գրուի 1860ին: Գրողին անունն չէ յիշուած:*

*Թղ. 2ա. Հանգանակ առաքելոց, որ պարունակէ երկոտասան առածանս:*

*Կը յաջորդէ մէն մի հատուածին մեկնութիւնը:*

## 45.

## ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

Թ. 44: — 1780էն ետք:

ԹՈՒՂԹՔ՝ 20: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19·2 × 11·5 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ թղթակազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

*Մատեանս է (էջ 1—17բ) արտագրութիւն մը այն Հաւատոյ դաւանութեան, զոր հրատարակած է* Յովհ. Սկրօդերեան *լատիներէն թարգմանութեամբ եւ արտատպուած է 1780ին ի Լոնդոն, հայերէն եւ լատիներէն:*

*Թղ. 18ա.* Prieres que Nierses Patriarche des Armeniens fit a la gloire de Dieu, pour toute ame fidele a Jesus Christ. De l'ere chretienne 1170:

## 46.

## ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ ՏԱՃԿԵՐԷՆ

Թ. 57: — ԺԸ.—ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 30: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14 × 10 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ խաւաքարտեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ՝ թղ. 19—30: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

*Մատեանս է (թղ. 1ա—18բ) Դաւանութիւն վիրմէջ ուղղափառ վէ կաթոլիկ տինիմիզէ կէլէնյարէ:*

## 47.

## ՔԱՐՈԶԳԻՐՔ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՐՆԵՑՒՈՅ

Թ. 1 : — 1728 :

ԹԵՐԹՔ՝ 449 : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 37 × 24·3 հմ. : — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն : — ՆԻՒԹ՝ թուղթ ողորկ : — ԿԱԶՄ՝ կաշեպատ : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ : — Դատարկ՝ թղ. 1—2, 437—439, 443բ—479 : — ԳԻՐ՝ նոտր : — ԽՈՐԱԳԻՐՔ, ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ կարմիր : — ԳՐԻՉ՝ Յակոբ Կ. Պոլսեցի եպ. Ատանայի : — ՏԵՂԻ՝ (Հռոմ) : — ԺԱՄԱՆԱԿ՝ 1728 : — Կողին վրայ նիշ թիւ՝ Դ : Թղ. 2բ. «Մարիամ Եգիպտացւոյ թիւ 4» :

*Մատեանս է՝ Բանք եւ ճառք յաղագս աշխարհական անձից եւ սուրբ ապաշխարողաց, եւ տնտեսութեանց Մարիամու եւ սրբոյ Խաչին, շարադրեցեալ ի Խաչատրէ Էրզրումեցւոյ աստուածաբան վարդապետէ :*

1. Թղ. 3ա. *Բան առ Աստուած եւ առ սուրբս. Քանզի քեւ եմք, քեւ պահպանիմք... Բան առ ընթերցողս : Տեսանելով զմերայինս զոյ յոյժ յօժարս առ ճառս եւ բանս, մանաւանդ առ աստուածայինս, հաճոյ թուեցաւ ինձ զլինիլ բարոյական աստուածաբանութեան՝ ընձեռել նոցա, որոց փափաքինն : Եւ շարադրեցաք զճառս յաղագս աշխարհական անձից · ի միասին շարադրեցաք եւս յաղագս տնտեսութեանց սրբոյ խաչին եւ Աստուածածնի եւ սուրբ ապաշխարողաց :...*

*Բանք եւ ճառք... (որպէս ի վերոյ) :*

2. Թղ. 3ա. *Բան եւ ճառ յղ. Ա. Կիւրակէի Գալստեան : Եւ եղիցին նշանք յարեգական... (Ղուկ. ԻԱ) : Ծանուցանէ մեզ այսօր սուրբ Աւետարանն...*

3. Թղ. 6ա. *Բան եւ ճառ յղ. Բ. Կիւրակէին Գալստեան : Իսկ Յովհաննէս լուեալ ի բանտին... (Մատթ. ԺԱ.) · Այսօր յառաջադրի մեզ մեծագոյն խորհուրդ... :*

*Ընդ ամէնր 110 քարոզք · վերջինն է*

4. Թղ. 433ա—437ա. *Բան եւ քարոզ յաղագս Ընծայման Մարիամայ կուսին ի տաճարն : Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն ամբարձ կին մի... (Ղուկ. ԺԱ) : Երանեցեալ քարոզի ամէնօրհնեալ կուսն Մարիամ :...*

5. Թղ. 440ա—բ. *Նզովք եւ օրհնութիւն ի նոյնոյ Խաչատրոյ աստուածաբան վարդապետէ : Արդ զքարոզագիրքս ընթերցողացդ... ի վերջանալ քարոզիցս յօժարաբար ձօնեցից զմանս ընդհանրականս համառօտեալս խրատս... Վջ. օրհնութիւն Հօր... Ուսուցէ հանապազ ընդ ձեզ. Ամէն :*

6. Թղ. 441ա—442ա. *ցանկ բանից եւ քարոզից :*

*Խաչատուր Կարնեցւոյ Բանք եւ քարոզք տպագրուած են երկու հատորի մէջ, Վենետիկ 1710ին :*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 442ա. *Յիշատակ է Քարոզգիրքս յիշատակ վասն հոգւոյ տեառն Յակոբայ Կոստանդինուպոլսեցւոյ եւ Ատանու եպիսկոպոսին. առ սուրբ Մարիամ Եգիպտացին, որ է ընակարան ազգին Հայոց ի մեծն Հռոմ · որք հանդիպիք սմա եւ վայելէք ընթեռնլով, յիշեսջիք միով Հայր մերիւ ի մաքրափայլ աղօթս ձեր · եւ դուք յիշեալք լինիջիք առաջի Քրիստոսի · ամէն : Գրեցաւ յամի Տեառն ՌՃՀԷին (1728) եւ Ապրիլի ԺԷ ին :*

## 48.

## ՔԱՐՈԶՔ

Թ. 39 : — ԺԸ. դար :

ԹԵՐԹՔ՝ 117 : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19·5 × 14·3 հմ. : — ՆԻՒԹ՝ թուղթ : — ԿԱԶՄ՝ կաշեպատ : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ : — Դատարկ՝ թղ. 1—3, 31բ—34, 46բ, 58, 114բ—117 : — ԳԻՐ՝ նոտր-շղագիր : — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ : — Հին թիւ՝ 19 :

*Մատեանս է ժողովածոյ քարոզից · ուր կան ·*

1. Թղ. 4ա—31ա. *Քարոզ ի վերայ Յովհաննու մարգարէին : Եւ առեն գնա. Պատմեա՛ մեզ, վասն է՞ր են չարիքս այս մեծ...*

(Յովն. Ա. 8—10)։ Կարի յոյժ մեղադրելի է փախստական մարգարէն Յովնան...։

2. Թղ. 35ա. Հռոմայեցիք եւ Եգիպտացիք առաւել գիտունք։ Կարկեալ պատժանձեցի պղծաչուրթն բերանն Մանիքեցւոց. Աստուած արար զամենայն ստեղծուածս՝ գերեւելիս եւ զաներեւոյթս...։

3. Թղ. 45—66ա. Եւ եղեւ մրրիկ մեծ ի ծովուն. Յովնանու գլ. Ա.։ Ողորմելի նաւն ուր գտանի մարգարէն Յովնան, ծփայր ի ծովու...։

4. Թղ. 67ա—75բ. Քարոզ ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ, որ ի սուրբ գիրս կոչի քաղաք սուրբ, Նոր Երուսաղէմ եւ տուն Աստուծոյ։ (Ի բանն) Եկայք ելցուք ի տուն Աստուծոյ... (Ես. Բ. 3)։ Եկեղեցին Աստուծոյ նման քաղաքի կառուցելոյ ի վերայ ապառաժի եւ անշարժելոյ վիմի...։

5. Թղ. 77ա—114ա. Ի յայլում առեալ գրեցի։ Յաղագս խոտմանն աշխարհի։ Որպէս Յիսուս Քրիստոս է ճանապարհ, առ որ մեք պարտիմք ընթանալ... Ա—Թ գլուխք, բոլորն Թարգմանութիւնք ԺԸ. դարու, որպէս թուի։ Կողին վրայ փակցուած է պիտակ. «ԻՁ։ Քարոզգիրք, այս ինքն այլ եւ այլ ճառք հոգեւորք, կամ քարոզք քաղուածոյք ի վերայ զանազան նիւթոց։ Թարգմանեալ յիտալական գրոց. ձեռագիր Նորբ»։

## 49.

## ՔԱՐՈԶԳԻՐՔ ԳՐ. ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

Թ. 45։ — ԺԶ.—ԺԷ. դար։

ԹՈՒՂԹՔ՝ 334։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18·3 × 13·5 հմ։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ ճայճայած։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ գէշ։ — Թուղթեր ինկած. կարմրագիր խորագիրք անընթեռնլի, Նաեւ սեւգիր շատ էջեր։ — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ԳՐԻՉ. ՏԵՂԻ. ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ։

*Մատեանս է Քարոզգիրք Գր. Տաթեւացւոյ։*

1. Թղ. 1ա. Սկիզբէն թղթեր ինկած. մնացած է քարոզի մը վերջին մասը։

2. Թղ. 1բ. Խորագիրն անընթեռնլի։ Գիտելի է զի ծերն Սիմէոն երիս արձակումն խնդրէ ասա...։

3. Թղ. 3ա. Քարոզ Քառասնից. Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր եւ հաներ ի հանգիստ։ Շարունակութիւնը անընթեռնլի։

4. Թղ. 9ա. Ասացէք դստեր Սիոնի... Սիոն ամրոց էր Հրէաստանի...։

5. Թղ. 17բ. Նորին քարոզ Եշի. շար. անընթեռնլի։

6. Թղ. 24բ. Նորին Գրիգորի քարոզ Մեծի չարաթուն ի բանն Որպէս էր Յովնան ի փոր կիտին...։ Որպէս. Հրամայեաց Յովնանու...։

7. Թղ. 35բ. Նորին քարոզ Մեծի Յարութեան. ի բանն Ապա թէ Քրիստոս է մեռելոց...։ Եղեն ոմանք հերձուածողք...։

8. Թղ. 304ա—427բ. մանր բոլորգիր հատուածք յելից, ի Թուոց, Ղեւտականաց, Բ. Օրինաց, Թագաւորաց. շատ փճացած, ուստի դժուարընթեռնլի։

9. Թղ. 328ա—331բ. Երկսիւն կամ յուծմունք իմաստութեան գրոց. կամ քարոզ ի բանն իմաստութեան։

10. Թղ. 332բ. Երկսիւն մանր բոլորգիր. Նորին քարոզ վասն ողէվարին ի բանն որ ասէ. Հայէի ի բարձունս...։ Վարդապետք ասեն. յորժամ եկանէ հոգին։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Թղ. 331բ. Նոտրագիր. Գիրք յիշատակ է Մէլքիսէթ վարդապետին։

## 50.

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ՊՕՆԱՅ ՅԱՂԱԳՍ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Թ. 7։ — 1744։

ԹՈՒՂԹՔ՝ 163։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26·3 × 19 հմ.։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ սպիտակ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ։ — Դատարկ թղ. 1, 2, 5—10, 11բ, 87—91, 147—163։ — ԳԻՐ՝ Նոտրշագիր։ — ԳՐԻՉ՝ Վրթանէս եպ.։ — ՏԵՂԻ՝ Հռոմ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1744։ — Հին թիւ ԺԹ։

*Մատեանս է Յ. Բոնայի Յաղագս սրբագնութեան պատարագի։*

1-ա *թղ.* 2—4. *ցանկ գլխոց եւ հատուածոց։*

բ. *թղ.* 11ա. *Յաղագս սրբագնութեան Պատարագի. ընձեռութիւն աստուածախօսական. որ ներպարփակէ յինքեան զմարմնացումն մտադրարար ջերմեռանդօրէն եւ մեծարանօք պատարագելոյ։ Շարագրեցեալ ի վսեմագոյնեղէ քարտինալէն Յոհաննու Բոնա։ Թարգմանեցեալ ի հայկական բարբառ յամի Տեառն ՌՃՂԱ. ի փառս Աստուծոյ եւ յօգուտ քահանայից մերազնեաց։ Ի Լէօպօլիս Վարդան Յունանեան։ Գրեցաւ ի Հռոմ Վրթանէս ձեռնադրօղ եպիսկոպոսին ձեռամբ* 1742 *դեկտեմբերի ամսոյ։*

գ. *թղ.* 12ա. *Առ քահանայս։ Յաղագս կիրառութեան նպատակի այսր գրկանս նախազգուշացումն սակաւուք քեզ յայսմ ներածականում յառաջաբանութեան յուշ արարից...։*

դ. *թղ.* 13ա—86բ. *Գլուխ Ա. Նախագրեն իրք ոմանք յաղագս ինքեան սրբագնութեան պատարագին...։*

ե. *թղ.* 92ա—146բ. *Քարոզ յաղագս չարութեան եւ փնասու մեղաց (Ա—Զ. գլուխք կամ Քարոզք)։*

*Ա. Յաղագս թէ մեղքն անարգանք է Աստուծոյ։ Զարմանալի է եւ համանգամայն յոյժ ատելի պատմութիւնն այն...։*

*ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.* — 1. *Թղ.* 11ա. *Զգիրքս զայս շնորհեցի տէր Յուսէփ քահանային Էնկիւրեցւոյ յիշատակ հոգւոյ իմոյ թւին Քրիստոսի* 1744*ին։*

2. *Ձեռագրիս սկիզբը պահպանակ թղթի վրայ. վախճանեցաւ Երեմիայ վարդապետն* 1743 *մայիսի Ե. օրն Բշգի (երկուշաբթի)։*

## 51.

## ՅԱՂԱԳՍ ՊԱԿԱՍՈՒԹԵԱՆՑ

Թ. 29: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 49: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20·7 × 14·2: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ թղթեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ 1—2ա. 39բ—49բ: — ԳԻՐ՝ նոտր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ. ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հին թիւ ԻԹ: — Կողին ներսը՝ 38. Մարիամ Եգիպտացուն:

*Մատեանս է Յաղագս պակասութեանց որք պատահին ի մատուցման պատարագաց։*

*Թղ.* 2բ. *Քահանայն ընդ մատուցանելն զսուրբ պատարագն...։*

*Թղ.* 14ա. *Նախապատրաստութիւն Ս. Պատարագի: Նախ պատրաստել զինքն առ պատարագն:...*

*Թղ.* 14բ. *Յաղագս արժանաւորութեան քահանային ի Ս. Օգոստինոսէ. Ով վերապատուելի արժանաւորութիւն քահանայից...։*

*Թղ.* 15բ. *Թէ որքան ծանրարար մեղանչիցէ քահանայն... ի սրբոյն Ամբրոսիոսէ եւ ի Ս. Օգոստինոսէ.*

*Թղ.* 16ա. *Աղօթք նախ քան զխորհրդական խոստովանութիւն։*

*Թղ.* 17. *Աղօթք Ս. Թոմայի Աքուինացւոյն առ Հայրն Աստուած։*

*Թղ.* 18բ. *Աղօթք Ս. Ամբրոսիոսի արհիեպիսկոպոսի։*

*Թղ.* 25ա. *Աղօթք Ս. Թոմայի (յետ պատարագի)։*

*Թղ.* 26բ. *Աղօթք առ Աստուածորդին ի Ս. Բոնավենտուրայէ։*

*Թղ.* 28ա—36. *Օրհնութիւն Ջրի. Մախրոց. Տեառնընդառաջին մոմի. Դաստարակաց կամ Պաստառակալից. Գորփորալից. Գառան ի զատկին. Ոսկարեաց. Քահանայական զգեստուց։*

*Թղ.* 37ա—39ա. *Կանոն հանդերձեղէն սպաս օրհնելոյ։ Տանին յեկեղեցին առաջի բեմին...։*

*ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.* 1. *Թղ.* 2ա. *ստորեւ. «Սիմէօն արքեպիսկոպոս Գաղատիոյ»։*

2. *Ա. կողին վրայ պիտակ. «ԻԹ. Պատրաստութիւն պատարագի եւ Մաշտոց Թարգմանեալ ի լատինէ ի ձեռն Սիմէօնի արքեպիսկոպոսին Գաղատիոյ»։*

## 52.
## ԴՈՒՌՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Թ. 54: — 1702—1731:

ԹՈՒՂԹՔ՝ 72: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15 × 10: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի սպիտակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ թղ. 65բ—72: — ԳԻՐ՝ Նոտր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ. գրուած 1702—1731 տարիներու մէջ: — Հին թիւ ԼԸ: — Կողին վերսը՝ Մարիամու Եգիպտացոյ. 4:

*Մատեանս է երկմասնեայ.*

*Ա. Թղ. 1—49ա. Դուռն ողորմութեան Աստուծոյ. Նուիրեցեալ ամենապայծառ խօճայ Սահրատի որդւոյ պարոն Մուրատին ի Ստեփաննոսէ Ստեփանեան քահանայէ Կամենցոյ: Ցամի Տեառն 1702. եւ Հայոց ՌՃԾԱ. յուլիսի Բ. ի Վէնէտիկ: Ամենապայծառ պարոն: Ընդ անուամբ ազնուականութեանդ քո արժանապէս ի լոյս արտադրի...:*

*Արտագրուած է գրոցս 1702ի հրատարակութենէն:*

*Բ. Թղ. 49բ—63բ. Ջերմեռանդութիւնք առ երանուհի կոյսն Մարիամ Աստուածածինն յաղագս եօթանց աւուրց եօթներորդի: Վասն աւուր Կիրակէի. Ողջոյն քեզ, ով ամենասրբուհի կոյսն Մարիամ, որ ընտրեցար ի յԱստուծոյ ի մայրութիւն... (Կիր.— Շբ.):*

*Թղ. 62ա. Երգ սրբուհւոյ Աստուածածնին.*

*Ողջոյն քեզ ով աստղ ծովային,*
*Սրբուհի մայր Աստուածածին...*

*Թղ. 63բ. Թարգմանեցեալ ի Յոհաննէսէ վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ ի փառս մեծագոյնս Աստուծոյ. ի խնդրոյ Գրիգորի որդւոյ Նասիպ Ագուլեցւոյ:*

*Թղ. 64ա—65ա. Աղօթք վասն հնկից վիրացն Քրիստոսի:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. *Ձեռագրիս սկիզբը պահպանակ թղթի երկրորդ էջի վրայ. «Յիշատակ է այս գիրքս տեառն Սարգիս եպիսկոպոսին Թօխաթեցւոյ սուրբ Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցւոյն թվին Քրիստոսի ՌՉԼԱին օգոստոսին ԺԸին:*

## 53.
## ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԳԵՂԵՑԻԿՔ

Թ. 17: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 60: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22·2 × 15·7 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հին թիւ՝ ԻԳ:

*Մատեանս է Մտածմունք գեղեցիկք:*

*1. Թղ. 1ա. Մտածմունք գեղեցիկք, որք զմիտս մարդոյն ընդոստուցանեն ի սէր Աստուծոյ: — Տէր իմ վասն այն ստեղծեր զիս, զի սիրեցից զքեզ...*

*2. Թղ. 8ա. Յաղագս արժանապատուութեանց քահանայից սեռօրէն. — Խորհեցայ, թէ որքան վսեմապայծառք անուանք ի սրբոց գրոց եւ հարց՝ քահանայից առատրեցին.*

*3. Թղ. 22ա. Յաղագս նիւթոյ եւ տեսակի սրբագնութեան:*

*4. Թղ. 32բ. Յաղագս խոստովանութեան: Յաղագս որպիսութեան բարւոյ խոստովանութեան:*

*5. Թղ. 41բ. Ըստ շահավէտութեան վերջին օծման սրբագնութեան:*

*6. Թղ. 46ա. Յաղագս խորհրդոյ պսակին:*

*7. Թղ. 49ա—58ա. Աղօթք զանազանք:*

*8. Թղ. 58բ (ա՞յլ գրչէ մանր նոտր.) Աղօթք ամենասրբուհի Կուսին Մարիամու, թարգմանեցեալ ի լատին լեզուէ: Այր մի էր անապատական, պարկեշտ...:*

*9. Թղ. 60ա. Կանոնք վասն նոցա, որք գրեալք են այսմիկ ջերմեռանդութեան՝ բարի մահուան:*

*Կողին վրայ փակցուած պիտակի վրայ՝ ՃԻԳ: Մտածմունք ի ձեւ աղօթից յու-մեծել ի յետին բանասիրէ անհարթ չարա-գրեալ»։*

## 54.

## ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՒՈՐ

Թ. 47: — 1758է յառաջ:

ԹՈՒՂԹՔ՝ 12: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17·5 × 12: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ թղ. 1, 12: — ԳԻՐ՝ Նոտր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

*Տետրակս է «Կրթութիւն աւուր առանձնութեան Ցաղագս նախապատրաստութեան բարի մահուամբ մեռանելոյ»: Յամսեանն մի անգամ առնելի:*

***ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.*** 1. *Թղ. 1բ. Յովսէփս Աստղմանեան ստացայ* 1758 *մ.* 16։

2. *Թղ. 2ա. ի յուսանցս. ի Գրիգորէ վարդապետէ Ալնեցւոյ, ի միաբանէն Երուսաղէմայ, յիշատակ Հայոց Հիւրանոցին Հռոմայ. յօգ. ամի Տեառն* 1797։

## 55.

## ՏԵՏՐԱԿ ՔԱՒՈՒԹԵԱՆ ՏԱՐՒՈՅ

Թ. 49: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 16: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16·8 × 10·2: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ թղթակազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ թղ. 16: — ԳԻՐ՝ Նոտր.: — Հին թիւ՝ ՄԸ:

*Մատեանս է* Տետրակ Քաւութեան տարւոյն, այս ինքն Մեծ Յոբել(ե)անի:

*Թղ. 1ա. Առաջաբանութիւն. Ոչ փափագին ընդունել զներողութիւնս այս մեծ... (զանազան աղօթքներ):*

*Թղ. 3ա. Կայարան Ա. Եկեղեցի գլխաւոր Հայոց որ ի քաղաք է: Առաջի մեծ բեմի:*

*Թղ. 6ա. Ամենակարող եւ մշտնջենաւոր Աստուած ողորմեա ծառայի քո Փիոսի վեցերորդի փափին մերոյ...:*

*Թղ. 7ա. Կայարան Բ. առաջի սեղանոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ի գլխաւոր եկեղեցւոյ Հայոց։*

*Թղ. 7բ. Կայարան Գ. առաջի սեղանոյ սրբուհւոյ Մարիամայ եղբայրակցութեան յեկեղեցի գլխաւոր Հայոց:*

*Երգ. Ողջոյն քեզ աստղ ծովային...*

*Թղ. 8բ. Երկրորդ եկեղեցի Հայոց, որ է սրբոյ Խաչին։*

*Թղ. 11ա. Եկեղեցի Գ. Հայոց որ է սուրբ Աննայի.*

*Թղ. 13ա. Եկեղեցի Դ. Հայոց, որ է Ս. Յակոբայ Նիսիբեցի:*

*Թղ. 14բ—15բ. Երգ. Զքեզ Աստուած գովաբանեմք...:*

## 56.

## ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թ. 60: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 95: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11·7 × 7·5 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ 89—95: — ԳԻՐ՝ Նոտր.: — Նկարք տպագիր, Ներքեւ հայերէն. 2բ, 44բ, 65բ, 74բ, 83բ: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ 3ա, 45ա, 66ա, 84ա: — ԽՈՐԱՆ՝ տպագիր՝ 3ա: — ԶԱՐԴՔ՝ 4ա, 31բ, 41բ, 60ա, 82բ, 86ա, 88բ:

*Մատեանս է Աղօթագիրք, ուր կան.*

*Թղ. 3ա. Աղօթք Ս. Գրիգորի Նարեկացւոյ (քաղուածք մանր հատուածներով)։*

*Թղ. 75ա. Նախապատրաստութիւն առ սուրբ պատարագն։*

*Թղ. 84ա. Աղօթք զկնի հաղորդութեան։ Յոհաննու Ոսկեբերանի. Գոհանամ եւ մեծացուցանեմ. եւ այլ աղօթք Ս. Բենեդիկտոսի, Ս. Թովմայի Ագուինացւոյ. եւ այլն։*

*Գրիչ հաւանօրէն մին ի Մխիթարեան Հարց։ Տեղի եւ ժամանակ անյայտ։*

## 57.

## ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թ. 61։ — 1682էն յառաջ։

ԹՈՒՂԹՔ՝ 65։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11·2 × 7·4։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ լաթիներէն մագաղաթեայ թուղթ, վրան մանրանկար գինանշան (*)։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԳԻՐ՝ նոտր.։ — ԳՐԻՉ՝ Դոմինիկոս Ֆանեանա(՞)յ։ — ՏԵՂԻ՝ անյայտ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1682էն յառաջ։

*Մատեանս է Աղօթագիրք, ուր կան.*

*Թղ. 1ա. Արտաս յաղագս բարւոք խոստովանելոյ մեղս։ — Նախ քան զխոստովանելն պարտ է յաւուր յառաջ քննեալ զմեղսն...։ Կից Աղօթք խոստովանութեան եւ հաղորդութեան, Սաղմոսք, Հաւատով խոստովանիմ։*

*Թղ. 51բ—55բ. Արատք բարւոք երգոցս, Որդեակ ի տանէ ոսոխէ զօրմէ պատրաստ կացիր, հեռ առաւել ի կնոջէ լեզուանն... (մասամբ քաղուածք ի Ս. Գրոց։ Կան նաեւ ռամկօրէն առածներ.*

*Թղ. 54ա. Նուշ ու [illegible] ուտեմ ինչ ունիմ, երբ տան իմում դառնիճ կայ։*

*Նարինճ ու թուրինճն ի վերայ ծառին ով է տեսեր։*

*կնոջ անզգամի լեզուանն բերանոյ քաղցր զրոյց ով է տեսեր...)*

*Ի մանկութենէ իմմէ բազում աշխարհս շրջագայեցա, Հնդստան ու Աճէմիստան Քրդստան, Արապիստան եւ Տաճկաստան. Լեհաց հասա ի Ֆռէնկիստան. ի տան իմում բուսաւ մէկ կին անզգամ. ա՛յ խեղճ ու ողորմելի տէր* Կիրակոս *(ծածկագիր). այլ ճարն չի կայ. համբերա՛, համբերեա...։*

*Թղ. 56ա. Մախտանք առ Տէր Յիսուս Քրիստոս. Ով Տէր իմ Յիսուս Քրիստոս ծնեալ ես ի Հօրէ... (յօրինուած առթիւ անզգամ կնոջ)։*

*Թղ. 58. Մխիթարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որդեակ ոչ երբեք գթցես զպապանձութիւն...*

*Թղ. 61բ. Ընդդէմ ունայնից զատողութեանց մարդկանց... (Թղ. 58—65. կը թուի քաղուածք* Նմանութիւն Յիսուսի *գրքէն. Ա. կողին ներքը. «1682, Նոյեմբերի 9. Երգումն զորս երգուա...* Կիրակոս |||| *ծածկագիր)։*

## 58.

## ԳՐՔՈՅԿ ՈՐ ԿՈՉԻ ՄՏԱԾԱԿԱՆ

Թ. 66։ — 1729։

ԹՈՒՂԹՔ՝ 87։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 9·7 × 7·3։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԳԻՐ՝ նոտր.։ — ԳՐԻՉ՝ տէր Օհան։ — ՏԵՂԻ՝ Ճուրճով։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1729։ — Հին թիւ ԽՉ։

*Մատեանս է Գրքոյկ Մտածականի, ուր կան.*

1. *Թղ. 1ա. Աղօթք առ... Անունն Յիսուսի...։ Եկ, Տէր Յիսուս, եկ եւ հան զմեզ ի մր(ր)կաց աշխարհիս...։*
2. *Թղ. 3ա. Յաղագս մատնութեան Յուդայի։*
3. *Թղ. 7ա—39ա. Մտածութիւն ի վերայ չարչարանացն Քրիստոսի։*
4. *Թղ. 39բ. Աղօթք առաւօտեան։*
5. *Թղ. 46բ—58ա. Մտածութիւն յղ. մահուան, դժոխոց, Անառակի։*
6. *Թղ. 58բ—71. Նշանակութիւնք խորհրդոց Ս. Պատարագին եւ Չարչարանաց Տեառն (Աղօթքներ)։*
7. *Թղ. 71ա. Հինն խնդրուածք... յաղագս բարեպէս մեռանելոյ...*

8. Թղ. 76ա—80բ. Լիթանեայք Ս. Ստեփաննոսի Նախավկային եւ Ս. Գրիգորի Լուսաւորչի:

9. Թղ. 81ա. Երգ առ հայրն մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.

Ի քէն հայցեմք արտասու[ալի] եղով
սուրբ Հոգս առ քեզ պաղատելով,
առաջի քո ծունր դնելով,
զօրհնութիւն ի քէն խնդրելով...:
Տունք՝ ի Մանուկէ երգս ասացեալ:

10. Թղ. 83բ. Երգ Յարութեան Տեառն. Անճառելի Բանդ հայրական ալէլուեա. ալէ": Անեղակից գոլ անսահման...

11. Թղ. 84ա. Այլ երգ Մարիամայ եւ Որդւոյն Տեառն.

Քոյին փառք պատիւ. Տէր մեր յարակայ:

12. Թղ. 84բ. Երգ Ծննդեան Տեառն

Մանուկ ծնաւ ի Բեթղեհէմ,
Ուստի գրեծոյ Երուսաղէմ...:

13. Թղ. 86ա. (այլ գրչէ).
Աստուածածին կոյսն Մարիամ

կայր այր (առ) խաչին իւրոյ միածնին...

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 85բ. Շնորհօք... Աւարտեցաւ գրկուկս որ կոչի Մտածական. եւ ըստ թուաբերութեան Հայոց ՌՃՀԸ (1729), մայիսի Ը. ի երկիրն Մաճարաց ի գիւղաքաղաքն Ճուրճով ընդ Միգլուշն եւ գծագրութեամբ տէր Օհանի Աճակեան: Արդ աղաչեմ զքեզ, ով բաղձալի ընթերցողք գիտքբատեսակ մատենիս մի մոռասջիք զվերոյ գրեալս յիշել առ Տէր ի մաքրափայլ յաղօթս քո...:

## 59.

## ԱՂՕԹԱՏԵՏՐԻԿ

Թ. 67: — 1727:

ԹՈՒՂԹ՝ 132: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10 × 6 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի ոսկեդրուագ: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ 1—3ա. 126—132: — ԳԻՐ՝ Նոտր.:

Մատեանս է Աղօթատետրիկ, ուր կան.

1. Թղ. 4ա. Աղօթք կամ մտածութիք զանազանք յաղագս Չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: — Աստուած, որ վասն փրկութեան աշխարհի կամեցար ծնանիլ...

2. Թղ. 27ա. Լիտանիա Աստուածածնի. Կից աղօթքներ:

3. Թղ. 37ա. (Լիտանիա) Պաղատանք առ Անունն Յիսուսի:

4. Թղ. 45ա. Աղօթք երանելոյն Թովմասու Աքուինացւոյ: — Շնորհեա ինձ, ողորմած Աստուած, զոր քեզ հաճոյք են...:

5. Թղ. 51ա. Այլ աղօթք եւ. Թովմասու Աքուինացւոյ նախ քան զընթերձումն. Արարիչ անճառելի:

6. Թղ. 53ա. Աղօթքներ փորձութեան. — Ով քաղցր Տէր Յիսուս Քրիստոս...:

7. Թղ. 64—184. Աղօթք Խոստովանութեան, Հաղորդութեան:

8. Թղ. 98ա. Լիթանիա որ է պաղատանք առ վերապատուելի խորհուրդն:

9. Թղ. 123ա. Աղօթք յառաջ քան զպատարագն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ. 1. Թղ. 127բ (էջ 248). Գրեցաւ Աղօթատետրիկս ի Քրիստոսի փրկչի ՌԷՃԻԷ (1727) եւ ի Հայոց թուոյն ՌՃՀԶ. եւ փետրվար ամսոյ հինգն, ձեռամբ անիմաստ Յակոբ եպիսկոպոսի Կոստանդնուպոլսեցւոյ:

2. Թղ. 3բ. Յիշատակ է Մտածական աղօթից դրգուկս վասն հոգւոյ տեառն Յակոբայ Կոստանդնուպոլսեցւոյ եւ եպիսկոպոսին Ատանոյ, առ սուրբ Մարիամ Եգիպտացին, որ է բնակարան ազգին Հայոց ի մեծն Հռոմ, որք հանդիպիք սմա՛յ եւ վայելէք ընթեռնլով յիշեսջիք միով Հայր մերիւ ի մաքրափայլ աղօթս ձեր եւ դուք յիշեալք լիջիք առաջի Քրիստոսի: Գրեցաւ յամի Տեառն ՌԷՃԻԸին եւ ապրիլի ԺԱին:

## 60.

## ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թ. 59: — ԺԷ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 168: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12·4 × 9: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ թղ. 161բ—168: — ԳԻՐ՝ Նոտր.: — Ա. ԿՈՂԻՆ ՆԵՐՍԸ՝ Մա(րի)ամ Եգիպտացու թիւ 91:

*Մատեանս է Աղօթագիրք. կը պարունակէ.*

1. Թղ. 1ա. *Յորժամ ի մէջ նեղութեանց իցես՝ ասայ զԱղօթս... Անսկիզբն Հայր Աստուած յաւիտենական...:*

2. Թղ. 3բ. *Խրատք աղօթելոյ, յորժամ անկանիս ի մէջ փորձանքի:*

3. Թղ. 6ա—17ա. *Խրատ Սիրաքա որդոյ Եսուա իմաստնասիրի: Գլ. ԺԷ. Թիւն ԻԹ. Ողորմութիւն առն իբրև գգրոշմիկ ընդ ինքեան...:*

4. Թղ. 18ա. *Խրատք վասն բարւոք խոստովանելոյ զմեղս իւր: Նախ քան զխոստովանութիւնն խորհեաց ի քեզ...*

*Կից Աղօթք Խոստովանութեան և Հաղորդութեան:*

5. Թղ. 26ա—53բ. *Տէր ամենակալ Աստուած Արարչամու...: Կից՝ Սաղմոսք ապաշխարութեան և Հաւատով խոստովանիմ.*

6. Թղ. 54ա. *Լիթանիա Ս. Աստուածածնի և այլ աղօթք:*

7. Թղ. 62բ. *Լիթանիա ամէնից սրբոց. և այլ աղօթք.*

8. Թղ. 73ա. *Լիթանեայք վասն մեռելոց. և այլ աղօթք:*

9. Թղ. 87բ. *Ջերմեռանդութիւն առ եօթն վէրս գլխաւորս ամենասրբուհւոյ կուսին Մարիամու:*

10. Թղ. 89ա. *Ջերմեռանդութիւն առ եօթն խնդութիւնս, որովք զմայլի սրբուհին մեր յերկինս:*

11. Թղ. 96ա. *Ներսիսի Կլայեցւոյ... Նորոգող տիեզերաց... Կից շարականք ապաշխարութեան, և այն:*

12. Թղ. 147բ. *Սաղմոս(ք) Աւետարանին (քաղուածք Սաղմոսարանէ):*

13. Թղ. 151բ. *Քաղուածք յեսայեայ, յԱւետարանաց:*

14. Թղ. 157ա. *Երք ննջեցելոց: Աստուած անեղ անժամանակ... Հայր անսկիզբն...:*

*ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Վերջին կողին ներսը. Ես Թոխաթցի տէր Կիրակոսիս ծնընդեանն իմում թվին հայկազանց ՌԾԵում* (1606) *է: Ա. կողին ներսը.* Libretto... *ինչպէս Թ. Տ. Հոսկայ կնիքն մ՛ալ* † *և* EUNTES. IN. UNIVERSUM. PRAEDI-CATE. EVANG. OMNI. CREAT. *շրջանակի մէջտեղ Յիսուս դարձած առաքեալներու:*

## 61.—62.

## ՋԵՐՄԵՌԱՆԴ ՏՈՒՎԱԼԱՐ

Թ. 62—63: — 1810:

ԹՈՒՂԹՔ՝ 39 (էջք 78): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11·3 × 9: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ (Թ. 62 վերի դրսի անկիւնը մկնակեր): — ԳԻՐ՝ Նոտր.:

*Մատեանս է Աղօթագիրք իտալերէնէ թարգմ. Թուրքերէնի:*

*Թղ. 1. Ջերմեռանդ տուվալար սուրբ Աստուածածինէ հաֆտանըն հէր կինինիւ իչին: Թալեանճատան Թիւրքճէյէ Թերճիւմէ օլունտու սուրբ Աստուածածինին իզէ-Թինէ: Սէնէ* 1810, *Նոյեմր.* 20 (*Թ.* 62՝ *Նոյեմր.* 21):

*Թ.* 62, *էջ* 54. *գրուած է. «Անտոն Հասունն»:*

## 63.

## ՏՕՆԱՑՈՅՑ

Թ. 30: — ԺԲ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 135 (էջք 246): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20·5 × 16 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ թղ. 1—2, 246: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ հատածներու սկզբնատառք՝ կարմիր: — ԳՐԻՉ. ՏԵՂԻ. ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հին թիւ ԽԱ.

*Մատեանս է Տօնացոյց եւ Աւետարանացոյց ըստ ուղղափառաց Հայոց: Դեկտ. ԻԴ. Ճրագալոյց Ծննդեան Տեառն...:*

*Էջ 241. «Զգծագրօղս մի մոռանայք ով եղբայր սիրելի միով Հայր մերիւ յիշել, եւ դու յիշեալ լիցիս.*

## 64.

## ՏՕՆԱՑՈՅՑ

Թ. 31: — 1768:

ԹՈՒՂԹՔ՝ 108 (էջք 202): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21·3 × 16: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ թղ. 1—4, 103—108: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ սկզբնագիրք հատուածոց՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ Յոհաննէս որդի Ծիրիկի: — ՏԵՂԻ՝ Էլիզապէթ քաղաք Հայոց: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1768: — Հին թիւ՝ ԻԲ:

*Մատեանս է Տօնացոյց ըստ ուղղափառաց Հայոց (տե՛ս Թ. 63):*

*Էջ 202. Գրեցաւ Տօնացոյցս ձեռամբ անարժան տիրացու Յոհանէս ո. Հ. Ծէրիկի որդւոյ. ի տունձէ Քոսայ Ահակեան: Ցամի Տեառն 1768. մարտի 17. ի Էլիզապէթ Հայոց քաղաքն: Արդ ով վայելօղ կամ ուսացօղ մի մոռանայք զգծագրօղս միով Հայր մերիւ եւ ողջունիւ յիշել, զի եւ դու յիշեալ լիցիս ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Թ. 1ա. 1768.* ex Libris R. D. Marcelli...

## 65.

## ԷՖԻՄԵՐԴԷՍ

Թ. 53: — 1731էն յառաջ:

ԹՈՒՂԹՔ՝ 28: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15·6 × 10·2: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշի սպիտակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ թղ. 23—27: — ԳԻՐ՝ Նոտր.: — ՍԿԶԲՆԱՏՈՂՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ ՏԵՂԻ. ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ. 1731էն յառաջ: — Հին թիւ՝ ԼԷ:

*Մատեանս է Էֆիմերդէս, անխորագիր. կը սկսի.*

*Թղ. 1ա. Թուական Քրիստոսի 1698, 1726, 1754, 1782: Արդ կարգեսցուք աստ զմշտնջենաւոր տարեկան փոփոխութեանց զուշակումն....*

*Թղ. 18ա. Մշտնջենաւոր գուշակումն սակս հողմոց եւ եղանակաց տարւոյն յամսէ ամիս: Յունուար առաջին օրն ցուցանէ զօդ եւ զեղանակ... (Յունվ.—Դեկտ.):*

*Սկիզբը պահպանակ թղթի Բ. էջի վրայ. «Յիշատակ է այս գիրքս տեառն Սարգիս վարդապետին Թոխաթեցւոյ եւ եպիսկոպոսին Ծննդոյ՝ եկեղեցւոյն Մարիամու Էկիպտացւոյն: Թվին Քրիստոսի ՌՉԼԱին, Օգոստոսի ԺԲ.ին:*

## 66.

## ՀԱՄԱՌՕՏԱՐԱՆ ՀՌՈՄԷԱԿԱՆ

Թ. 9: — ԺԷ.—ԺԲ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 21: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26 × 19: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ [illegible] — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — Դատարկ թղ. 1բ, 19—21: — ԳԻՐ՝ Նոտր.: — ԳՐԻՉ. ՏԵՂԻ. ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ

*Մատեանս է «Համառօտարան Հռոմէական ի վճռոյ սրբազանի ժողովոյն Թրիտէնթինոյ վերանորոգեցեալ եւ Փիոսի Հինգե-*

*բորգի այլ եւ Կղեմայ ութերորդի մեհագունից հայրապետաց հրամանաւն, նախ ի լոյս ածեցեալ։ Իսկ այժմ վերստին Ուրբանոսի ութերորդի փափին հեղինակութեամբն վերածանաչեցեալ, հանդերձ ժամակարգութեամբն կարգեցելովք յԱլէքսանդրէ եօթնեբորդէ. եւ այլովքն բնաւիւք, թէ չարաչարեցելովք, եւ թէ ծիսիւ յաւելեցելովք, ի Կղեմայ ԺԷ մինչեւ ցայս օր։*

*Թարգմանեցեալ ի գաղափարէն տպագրելոյ ի Վէնէտիկ. Նիր տպարանում Կուկերիլեանց յամի Տեառն ՌՄՀ։*

*Թղ. 2ա. Փիոս եպիսկոպոս ծառայ ծառայիցն Աստուծոյ, առ ի մշտնջենաւոր յիշատակ իրացս։ — Զոր պահանջէ ի մէնջ փոստն (*) Հովուականի պաշտաման...։*

*Թղ. 5բ. Ի պատճէնարանէ վճռոց սրբազանի գումարին ծիսից ստորագրեցելոյս այսոքիկ պատկանին առ Համառօտարանն Հռոմէական.* Breviarium Romanum*ի, այն է Հռոմէական Տօնացոյցի կարգաւորութեան մասին որոշմունք։*

*Թղ. 1ա. ստորեւ. «Պ. Տեառն Յոհաննու Ալաբեանց, յամի Տեառն* 1751։

## 67.

## ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՒԱՔՈՒՄՆ ԼԱՏԻՆ ԲԱՌԻՑ

Թ. 35։ — ԺԹ դար։

ԹՈՒՂԹ՝ 230։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20·6 × 14·6 սմ.։ — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կազմը թուլացած, տեղ տեղ խոնաւութիւն կրած։ — ԳԻՐ՝ նոտր–շղագիր։ — Թղ. 1ա կիսախորանիկ։ — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ։ Սկիզբը պահպանակ թուղթի վրայ կնիքս. Քահայ. Դպրոց. Roma Po. Coll. Armeno։

*Մատեանս է «Հատընտիր հաւաքումն լատին բառից»։ Կը սկսի.*

A. *Նախադրութիւն, որ խնդրէ զհոլովմն բացառական եւ յարի անուանց յաւելոյ ի բաղաձայնից. Ի. առ ի, յ. առ յ. առ, ընդ, բստ, վասն, զ. ի մէջ, հետէ, յորմէ հետէ, բաց ի, զկնի, քան յառաջ, քան չորք, ի ձեռն։*

Aboctor, *վարիչ, վտարակ, հոտակապուտ, խաշնադող, խաշնավար. եւ այլն։*

*Կ'աւարտի՝* Zygostates. *գիլգաստատ.* Zythum. *գարօղի։*

*Նմանով պատրաստուած լատ.-հայերէն բառարան։*

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

**ՔԱՀԱՆԱՅԱՊ. ԼԵՒՈՆԵԱՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

**Ի ՀՌՈՄ**

**Pont. Leoniano Collegio Armeno, Roma**

Հռոմի Քահանայապետական Լեւոնեան Հայ վարժարանը (Pont. Leoniano Collegio) հիմնուած է Լեւոն ԺԳ. պապը 1883ին մարտ 1ին Benigna hominum parens համառօտագրով (breve)։ Տրամադրուած է առ այս Վարժարանին Ս. Նիկողայոս Տոլենտինացւոյ հոյակապ եկեղեցին եւ անոր կից շէնքը։

Վարժարանը ունի համեստ Գրադարան մը Հայերէն եւ օտարալեզու գրքերով։

Գտայ այս տեղ 1935ին 46 Հայերէն ձեռագիրներ, որոնք ցիրուցան դետեղուած էին տպագիր գրքերու շարքին։ Աջակցութեամբ Դպրոցիս կղերական աշակերտներուն մի հաւաքեցի այդ ձեռագիրները, դասաւորեցի մեծութեան կարգով, թուարկեցի եւ ցուցակագրեցի։

Հրատարակութեանս մէջ ձեռագիրները դասաւորուած են ըստ բովանդակութեան եւ նոր թուահամարներով. առընթեր նշանակուած նաեւ հին թիւը։

Այս ձեռագիրներէն 17 առաքուած են Տրապիզոնէն «ի գրեանց Տ. Յովհաննէս Գիւրջեան (Կիւրեղեան), 1860»։

4 ձեռագիր եկած են Ս. Մարիամ Եգիպտացւոյ Հիւրանոցի Գրադարանէն։

Մնացեալ 25 ձեռագիրներու մասին չգտայ որ եւ է տեղեկութիւն։

Ձեռագիրներս մեծաւ մասամբ ԺԸ/ԺԹ դարերէն են։

Հնագոյններն են.

Թ. 1 Աւետարան 1371.
Թ. 2 Աւետարան 1384.
Թ. 3 Ճաշոց 1302.
Թ. 4 Ճաշոց 1230.
Թ. 5 Մաշտոց 1683։
Թ. 6 Շարակնոց ԺԴ/ԺԵ.
Թ. 7 Շարակնոց ԺԴ/ԺԵ.

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ

| Նոր Թ. | Հին Թ. | Մեծութիւն | Գիր | Ժամ. | Գրիչ | Քաղաք | Բովանդակութիւն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 7 | 24,2 x 17 | բոլոր | 1371 | Անտոն | Կեղի | Աւետարան |
| 2 | 6 | 25,5 x 17,6 | „ | 1384 | Ստեփանոս | Ղրիմ | „ |
| 3 | 1 | 36,6 x 30,3 | „ | 1302 | Տիմոթ քհ. | Փերուժ | Ճաշոց Երուսաղեմական |
| 4 | 2 | 34 x 25 | „ | 1230 | Գրիգոր | Երզնկա | Ճաշոց Հայագիր. |
| 5 | 29 | 18 x 11,7 | „ | 1683 | — | Տաթեւ | Մաշտոց |
| 6 | 22 | 21,5 x 17,5 | նոտր | ԺԹ | — | — | Կանոն Միւռոնօրհնէքի եւ քահ. ձեռ- |
| 7 | 41 | 14 x 9,8 | բոլոր. | ԺԴ/ԺԵ | — | — | Շարակնոց նադրութեան |
| 8 | 46 | 12,9 x 8,8 | „ | „ | Յովհ. եպ. | — | „ |
| 9 | 13 | 23 x 15,6 | նոտր | ԺԹ | — | — | Յովհ. Պատմաբանի Պատմ. Հայոց |
| 10 | 17 | 22 x 15,5 | շղագիր | „ | — | — | „ „ |
| 11 | 16 | 21 x 16,2 | նոտր | 1796 | Մանուկ | Կ. Պոլիս | Մեկն. Յայտնութեան՝ Անդրէի |
| 12 | 15 | 22,7 x 16 | „ | 1826 | Յովհ. Կիւրեղ | Տրապիզոն | Խորհրդածութիւնք Ներս. Լամբրոնաց. |
| 13 | 28 | 19,5 x 14 | „ | ԺԹ | — | — | Սովորութիւնք Եբրայեցւոց |
| 14 | 14 | 24 x 17,5 | „ | 1828 | — | Տրապիզոն | Տարեգրութիւն Եկեղեցւոյ |
| 15 | 3 | 27,8 x 18 | „ | ԺԹ | — | — | Աստուածաբանական Վիճմունք |
| 16 | 4 | 27 x 18,3 | „ | 1838 | — | Արթուին | Ընդդիմաբ. ընդդէմ Նոյեան ճշմարտ. |
| 17 | 5 | 26 x 18,6 | „ | ԺԸ/ԺԹ | Մելքոն | Արթուին | Յաղագս անձայն բացարձակ կատարել. |
| 18 | 8 | 24,2 x 18 | „ | 1782 | — | — | Աստուածաբանութիւն Շարմէնի |
| 19 | 9 | 24,5 x 18,3 | „ | 1823 | Հ. Գ. Սրապեան | — | Թ. Դարմեան. Ընդհ. Աստուածաբան. |
| 20 | 10 | | „ | 1823 | — | — | „ |
| 21 | 11 | | „ | 1823 | — | — | „ |
| 22 | 12 | 24,7 x 18 | „ | 1815 | — | — | Յայտնի ապացոյց |
| 23 | 18 | 22 x 15,5 | „ | 1281* | — | — | Հայելի ազդեցութեան |
| 24 | 26 | 20 x 11,7 | „ | 1825 | — | — | Գործածութիւն Խոստովանահարց |
| 25 | 27 | 19,2 x 15 | „ | 1728* | — | Աստանպոլ | Ստ. Ռօշքա. Բարոյական աստուածա- |
| 26 | 39 | 14,9 x 10,2 | „ | 1829 | Յովհ. Կիւրեղ. | Սամաթիա | Բարոյական խնդիրք բանութիւն |
| 27 | 31 | 18 x 12,7 | „ | ԺԹ | — | — | Հռոմէական Վարդապետարան |
| 28 | 37 | 16,9 x 10,4 | „ | „ | — | — | Բացատրութիւն քրիստ. Վարդապետ. |
| 29 | 43 | 14,5 x 10 | „ | 1824 | — | Տրապիզոն | Համառօտութիւն գիտութեան |
| 30 | 44 | 13,8 x 8,5 | „ | 1825 | — | „ | Տեսարան չորից վերջնոց |
| 31 | 42 | 14,5 x 9 | շղագիր | 1850* | — | — | Հայելի Վարուց |
| 32 | 19 | 23 x 14 | նոտր | ԺԹ | — | — | Քարոզք Աղուհացից |
| 33 | 20 | 23 x 18 | „ | „ | — | — | Քարոզգիրք |
| 34 | 30 | 19,5 x 13,5 | „ | 1850* | — | — | Վկայութիւնք |
| 35 | 40 | 4,5 x 9,4 | „ | 1827 | Յ. Է. Ն. | Կ. Պոլիս | Պարտէզ հոգեւոր տանկ. |
| 36 | 23 | 20,7 x 14,5 | „ | ԺԸ | — | — | Աղօթագիրք |
| 37 | 24 | 21,2 x 14 | „ | „ | — | Հռոմ | Աղօթամատոյց |
| 38 | 38 | 17 x 11,8 | „ | ԺԹ | — | — | Հաղա քիթապ |
| 39 | 40 | 13,2 x 9 | „ | 1704 | — | — | Տաղարան |
| 40 | 32 | 17,3 x 10 | շղագիր | 1850 | Յովհ. Կիւրեղ. | Տրապիզոն | Պարտիզպանութիւն |
| 41 | 33 | 17,3 x 11,5 | „ | 1840 | „ | „ | Ախորժալուրք |
| 42 | 34 | 17,7 x 11 | „ | 1841 | „ | „ | „ |
| 43 | 35 | 16,5 x 10,1 | „ | 1941 | „ | „ | „ |
| 44 | 36 | 16,9 x 115 | „ | 1841 | „ | „ | Պատմութիւն ախորժելի |
| 45 | 25 | 20 x 15 | նոտր | 1724 | Մինաս | Ադրիանուպոլ | Բառագիրք Երեմիայի |
| 46 | 21 | 22 x 16 | շղագիր | ԺԹ | — | — | Բառագիրք բնական եւ արուեստական իրաց |

## 1. (68)

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թ. 7: — 1371:

ԹՈՒՂԹՔ՝ 244: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24,2 × 17 հմ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ վնասուած լուսանցքէն. ցեցակեր. մասամբ պատռած՝ թղ. 70ա, 238, 239, խոնաւութիւն տեսած, տեղ տեղ մկնակեր: Պատարկ թղ. 64բ, 111բ, 188: — ԳԻՐ՝ բոլորգիր: — Կիսախորան՝ թղ. 1ա, 112ա, 189ա: — Ունի լուսանցազարդեր եւ զարդագրեր: — ԳՐԻՉ՝ Անտոն. ՏԵՂԻ՝ Կեղի: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1371:

*Մատեանս է Աւետարան. սկիզբէն ինկած են Համաբարբառք. ցանկք եւ Նախագրութիւնք:*

1. *Թղ. 1—64ա Մատթէոս.*

2. *Թղ. 65—110ա, սկիզբէն ինկած թուղթեր. այժմ կը սկսի Ա. 10էն:*

3. *Թղ. 111ա—187բ Ղուկաս:*

4. *Թղ. 189ա—242ա: Ընդ մէջ 241/242 թուղթերու թուղթ մ'ինկած, անոր հետ սկիզբը «Իրք կնոջն չնացելոյ» հատուածին:*

**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ.** *Թղ. 242բ—244բ, որ բռնուած է շատ լայնաբար. «Տէր Աստուած ահաւոր եւ սքանչելագործ, սահման սիրոյ եւ խաղաղութեան... ամէն. Ի յամս հայկազեան թուաբերութեան տումարին, յոբում էր թիւ համարոյ թուականին թորգոմեան տոհմին ՊԻ. աւարտագործեալ եղեւ սուրբ կենսատու աւետարանս... (Թղ. 243բ) զոր իմ անարժանի եւ անպիտանի եւ սուտանուն գրչի Անտոնի, որ տեսի զաւրինակս գովելի եւ անսղալ վկայեալ ի բազմաց... եւ գրեցի զսա... ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Նշանին եւ այլ բազմահաւաք սրբոցս որ կան ի քաղաքիս որ կոչի Կէղի:*

*Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ Աւետարանիս, զմեղապարտ գծողս եւ զնկարօղ եւ կազմաւղ սորա զԱնտոն եւ զծնողսն իմ եւ զվարդապետն յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր...»:*

## 2. (69)

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թ. 6: — 1384:

ԹՈՒՂԹՔ՝ 320: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25.5 × 17.6: — ՆԻՒԹ՝ թուղթ. թղ. 9—10, 19—20 մագաղաթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: Մագաղաթեայ պահպանակ 4 թուղթ (նախնաբար 2 թուղթ միջին մեսրոպեան Աւետարանի մը. Մարկ. ԺԳ. 3—ԺԴ. եւ Յովհ. Գ. 32—Դ. 11): — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ. տեղ տեղ ցեցակեր ի լուսանցս, յատկապէս թղ. 246—327: Պատարկ թղ. 2ա, 320բ: Ընդ մէջ 8/9 թուղթ ինկած. գլուխք Մատթէի սկսեալ Ա գլխէ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԽՈՐԱՆՔ՝ թղ. 2բ—7ա: — ՆԿԱՐՔ՝ թղ. 9բ Մատթէոս ոսկի եւ բազմագոյն. թղ. 10բ Մարկոս. 160բ. Ղուկաս, 256բ. Յովհաննէս: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ 10ա, 101ա. 161ա, 257ա ոսկեգոյն, ծաղկագիր: — ԶԱՐԴԱԳԻՐՔ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ բազմաթիւ: — ԳՐԻՉ՝ Ստեփաննոս որդի Նատեթի: — ՏԵՂԻ՝ Ղրիմ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1384:

1. *Թղ. 2բ. Թուղթ Եւսեբեայ առ Կարպիանոս. եւ Համաբարբառք:*

*Մատեանս է Աւետարան.*

2. Թղ. 7բ. Նախադրութիւն Մատթէի եւ Ցանկ գլխոց. Թղ. 9ա Համաձայնութիւն չորից աւետարանչաց:

3. Թղ. 10ա. Մատթէոս:

4. Թղ. 98բ. Նախադրութիւն, Գլուխք, Մարկոս:

5. Թղ. 156բ. Յարուցեալ Յիսուս առաւօտուն միաշաբաթուն — որ երթայր զհետ նոցա:

6. Թղ. 157բ. Նախադրութիւն, Գլուխք, Ղուկաս:

7. Թղ. 254բ. Նախադրութիւն, Գլուխք, Յովհաննէս:

8. Թղ. 326. Իրք կնոջն շնացելոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. Թղ. 326բ–328ա. Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Աստուածային ծագումն մշտնջենածաւալ լուսոյն ի սուրբնս ծագելով. լուսաւորէ՛ ա[զ]համարակ զամենայն զգալիս: Իսկ լոյս ծայրական՝ ծանեաք զպատգամ պատուիրանի՝ աւետեն, բաց ա՛յնմ պատուիրանք տեառն լոյս եւ խրատ, յանդիմանութիւն եւ կեանք: Եւ լոյս են հրամանք տեառն ի վերայ երկրի, յուսուցանել զարդարութիւն բնակչաց երկրի: Բայց աւաղ՛ լուսաւորէ զմե՛ր իշխանականս՝ աւետարա՛նս, ա՛յս ինքն՝ աւետիք կենաց: Վասն զի ի քաղցու կերակրէ՝ եւ ի ծարաւոյ արբուցանէ՝ իբրեւ յորդեակս զթոյ: մեծամեծայ՝ ա՛հ հարկանէ, եւ զպղծուս սփռէ՛. ճանապարհորդաց՝ ընդ առա՛ջ ելանէ եւ յառաջնորդական բարերարոյ: Կրաւնաւորաց քաջալերութի՛ւն, եւ միանձնացելոց ամո՛ւր ապաստանի: մանկանց դաստիարա՛կ եւ ծերոց մխիթարութիւն. մեռելոց յո՛յս յիշատակի: Դարձեալ կոչի աւետարա՛ն. զի ամա՛ւ հին եւ անշարժ չարիքն քակեցա՛ն: անէծք աւրհնայն ի միջո՛յ բարձան: մահու ջիրք հատա՛ն. մեղք լուծա՛ն, երկնից կամարքն փեղեկեցա՛ն[1], անհետ ճանապարհն Ադենայ մարդակուտո՛ր աւազակին բացա՛ն:

[1] Գրուած փեռակացան, ա ուղղուած է.

մարդիկ ընդ հրեշտա՛կս խառնեցան, եւ ամենեքեան ուսեա՛լք յաստուծոյ եղեն: Արդ[2] լուսափայլ մարգարտի, փափագելով եղծոլ, քահանա՛յս աստուածամերձ եւ առաքինազարդ՝ Գրիգո՛ր կոչեցեալ՝ ստացաւ զսա՝ զաւակ ի Սիոնի, եւ ընտանի յիշատակի երկնաւոր, ուրախութիւն եւ լոյս հոգւոյ, եւ պսակ եւ փառք եւ յիշատակ գենի մահու: Արդ ո՛վ քահանայք աստուածասէրք՝ յորժամ ընթեռնուք եւ լուսաւորիք յաւուրս տաւնից տարեկանաց, անմոռաց յիշմամբ յիշեցէք յաղաւթս զյառաջագոյն շնորհազարդ քահանայն զԳրիգոր, համե՛ստ կենակցա՛ւ իւրով (անուան մը համար բաց տեղ) եւ զդուստր իւր զՀաղբբմիկ՝ զհրաժարեա՛լն յաշխարհէ: Նա՛ եւ զհայրն իւր զՅովաննէս զփոխեալն ի Քրիստոս, հանդերձ ամենայն փոխեցելովք, քահանայի՛ւք եւ աշխարհականովք. եւ զհոգեւոր եղբայրն իւր զՅովաննէս՝ զքրտնաջան վաստակաւորն. որ աստարելայ մասն ինչ ի գինս աւետարանիս: զի աղաւթիւք ձերովք գրեսցի՛ն ի գիրն կենդանականն. եւ յերեւումն յամեցելոյ փեսային երկնաւորի ընդ աջո՛յս դասեսցին. աղաւթիւք եւ բարեխաւսութեամբ ամենայն սրբոց: ամէն: Բայց գրեցաւ տառս աստուածախաւս. ի քաղաքս Ղրիմ. յեպիսկոպոսութեանն տէր Ստեփաննոսի արհի առաջնորդի. եւ յաթոռակալութեանն ամենայն հայաստանեայց տեառն Յովհաննիսի ուղղադաւան եւ բարեփա՛ռ հաւատոյ: ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զաւրավա՛ր աւգնականի: ի թուականութեանս հայկազնեայ ՊԼԳ. Ձեռամբ մեղսամակարդ եւ մեղաւոր հողոյ Ստեփանոս գրչի. ընի՛ր քահանայից պարտականի: եւ զհայրն իմ զՆասե՛ր ժողովա՛ն գրիչ մայրն իմով, եւ զեղբայրն իմ, զՍեւեռին գրիչ եւ զՅովաննէս հրաշագո՛րծ մեղանաւոր. եւ զԳրիգոր եպիսկոպոս Խաչատեայ զաւակի, քուերքն իմով, որ են այժմ ի մեծ ժողովն: զի թերեւս հանդիպեսցին աղաւթիւք ձերովք ողորմութեանն Աստուծոյ: յայնմ աւուր որ բանք ապաքին եւ գործք թագաւորեն. Յիշեսջիք զարձեալ ի պատկանաւոր աղաւթս ձեր զորդեակն իմ զՅոհա՛ննէս նորընծայ քահանայ, որ աշխա–

[2] Գրուած այսր սրբագրուած մ:

*տեցաւ յոսկի եւ ի ծաղիկ սրբոյ աւետարանիս։*

2. *Թղ.* 328*ա. Արդ՝ այսմ վերջի ստացօղի եւ քրիստոսադաւան սուրբ աւետարանիս ցանկացօղ եղեալ ծառայս Աստուծոյ եւ սուրբ աւետարանչացս, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու եւ ամենայն սրբոց երկնաւորացն եւ երկրաւորացս, մղտեսի Սափարչաս որդի՝ Մարտիրոսին։ Որ ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց։ Զի ետու զանցաւորն եւ առի զյաւիտենականն։ Ըստ տեառն հրամանին որ ասէ՝ Մի գանձէք ձեզ գանձ յերկրի։ որ ցեց եւ ուտիճք ապականեն։ Այլ գանձեցէք ձեզ գանձ յերկինս՝ որ ոչ ցեց եւ ուտիճք ապականեն։ Դարձեալ ուր գանձք ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին։*

*Դարձեալ ետու զսուրբ աւետարանս ի նորաշէն սուրբ ուխտն յանուն ամենասուրբ փրկչին՝ ի Պոնտոս քաղաքի Տրապէզ կոչեցելոյ։ Ի հայրապետութեանն տեառն Պաւղոսի. ի թագաւորութեանն Յունաց Կիր Ալեկսի. եւ որդոյ նորին Կալօիանին. եւ ի թագաւորութեանն Վրաց յազգէն Բագրատունեաց, ընտրեալ քաջ եւ յաղթող տղայ հասակաւ թագաւորութեանն Ալէքսանդրի։*

*Շինեաց հոգեւոր հայրն մեր եւ բարեպաշտ եւ քրիստոսադաւան խօճայ Ստեփաննոսն ըղվանքս զսուրբ Ամենափրկիչն յիշատակ իւր եւ համեստ կողակցին իւր Մելքիոյ խաթուն, եւ հաւրն իւրոյ պարոն Ամիրպէկին, եւ ամենայն արեան մերձաւորաց. եւ ի յարեւշատութիւն որդւոյ Նոր պարոն Մկրտչին։ եւ զաւեւրն Նոր Հասուտայ խաթունին. եւ սիրելի փեսային խօճայ Ամիր Շամշատինին։ եւ որդւոյ նորին Խաչատրին։*

*Աղաչեմ զձեզ ով կրօնաւորք եւ քահանայք կարդացօղք սուրբ Աւետարանիս՝ յիշման արժանի արարէք զմեղուցեալ ծառայս զմղտեսի եւ զանարժան* [329*ա*] *զՍաֆարչաս. զհայրն իմ զՄարտիրոսն եւ զծնօղակութ հօրեղբայրն իմ զՍարգիսն։ եւ զմայրն իմ բզՄէլքոսայ խաթունն զփոխեցեալսն առ Քրիստոս։ զքոյրն իմ զԱղութ*[3] *խաթունն։ եւ զքաւրոչ որդին իմ զՖախրատինն. եւ զայլ ամենայն արեան մերձաւորս զկենդանիս եւ զհանգուցեալս. ամէն։ Եւ Քրիստոստու հասարակ յիշողացդ՝ եւ յիշեցելոցդ ողորմեսցի ամէն։ Գրեցաւ յիշատակարանս ի յաստուածապահ քաղաքս ի Կաֆայս ի թվ. ի Հայոց ՊՀԻ։ Փետրուար ամսոյ Գ։ Ըղմեղաւք ելի* զՍտեփաննոս (*ջնջուած անուն մը եւ այս գրուած*) *զինդրող բանի՝ զմիջնորդ եւ զյորդորիչ սուրբ աւետարանիս յիշեսջիք միով տէր ողորմայիւ։ Եւ աստուած որ առատն է ի տուրս բարեաց յիշեսցէ՝ զձեզ յիւր միւսանգամ գալստեանն, ամէն։*

3. *Թղ.* 1*ա* (*չղագիր*).

*Գրչատուն եղբարց։*

1839, *մայիս* 1

*ի Տրապիզոն.*

*Գրեցաւ ի դպրատան Պօնտոսի Հայոց կաթօլիկաց ի ձեռն պարոն Կիւրեղեան տիրացու Յովհաննէսին որդւոյ իշխանապէտին ի սոյն քաղաքի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, ի թագաւորութեան օսմանեան տէրութեան սուլթան Մահմատի եւ ի քահանայապէտութեան սրբոյն աթոռոյն Հռովմայ տեառն Գրիգորոսի եւ հայրապետութեան սրբոյն աթոռոյն Յիսուս փրկչին Կոստանդնուպօլսոյ տեառն Պօղոսի Մառուշ կոչեցելոյ եւ ի պատրիարգութեան տեառն հայր Կարապէտի Եսայեան եւ յառաջնորդութեան տեառն Յովհաննու Ղարա Կիւրեղեան իմաստասէր վարդապէտի, եւ ի վարժապետութեան ի սոյն դպրատան տիրացու Պօղոսի Անոյշեան. ուսանին յայսմ դպրատան ի սոյն ժամանակի մանկունք ութսուն եւ հինգ. տասն ի նոցանէ դասատու քերականութեան եւ հինգն պարապեալ յուսումն հռետորականին. եւ այլքն յայլ եւ այլ գիրս սարթափին։*

Dio mio

[3] Գրուած զԱղաւթ, ուղղուած ու։

## 3. (70)
## ՃԱՇՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԵԱՆ

Թ. 1 : — 1302 :

ԹԵՐԹ՝ 231 : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 38.6 × 30.3 հմ : — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ 27.7 × 21 հմ. : — ՆԻՒԹ՝ հաստ ողորկուած թուղթ : — ԿԱԶՄ՝ դեղնաւուն կաշեպատ : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, բայց ունի բորի կողմեր. թղ. 227—231, ստորին լուսանցք բորբոս ցեցակեր. 1—2, 230—231 ստորին լուսանցքն նորոգուած. թղ. 69 կիսով պատռած, նորոգուած, բայց անգիր : Թուղթեր ինկած 2՝ սկիզբէն, 1՝ ընդմէջ 69/70, 1՝ ը. մ. 79/80, 3՝ ը. մ. 93/94, 1՝ ը. մ. 99/100 եւ 211/212 : Դատարկ թղ. 77բ : — ԳԻՐ՝ մանր խոշոր բոլորգիր : — ԿԻՍԱԽՈՐԱՆԻԿ մը թղ. 25ա : Կան հնատիպ լուսանցազարդեր տեղ տեղ : — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ ցանցառ : — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՒ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ կարմիր : — ԳՐԻՉ՝ Տիմոթ քահանայ : — ՏԵՂԻ՝ Փերուժ : — ԺԱՄԱՆԱԿ՝ 1302 : 1617ին ուղարկուած Հռոմ, Ս. Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցին :

*Մատեանս է* Երուսաղէմեան ճաշոց : *Սկիզբէն ինկած են 1 եւ 2 թերթերը, այն է 21 թուղթ. այժմ կը սկսի Թղ. 1ա. «քանզի արդար էր եւ ոչ (կամէր) առակել զնա» (Մատթ. Ա. 19) : Եւ երանեն յեկեղեցին եւ ասեն զերեկոյին պաշտաւնն. յարեան ի նոյն* (եւ այլ գրչէ) *զհակումն. եւ ի հակմանէն ընթեռնուն ընթերցուածքս ԺԲ. Եւ նախ ասի Սաղմոս. Կց. Յիշեա տէր զԴաւիթ : Ընթերցուած (Ծ)ննդոց սկիզբն. Ի սկզբանէ արար Աստուած զերկինս... Վջ. Թղ. 231ա—բ. Վեցերորդ Կիրակէին առաւաւտուն. Աւետարան ըստ Ղուկասու. Եւ յասել ամանց զոտանաւրէն... Գաղատացի ասաց. ի Կո(ղ)ոսացւոց թղթոյն. Զգոյշ լերուք, մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ... Ալէլուիա. Աւետարան որ ըստ Մատթ. իսկ փարիսեցիքն իբրեւ լուան ... զի ասէք, որ երդնու ի տաճարն չէ ինչ.* հոս կ'աւարտի ձեռագիրս :

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. Թղ. 197բ. Փառք համագոյ եւ միաւանական Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն :*

*Յամի ՉԾԱ* (1302) *Հայոց թուականի յանկ ելեալ աւարտեցաւ աստուածախաւս մատեանս, որ կոչի ընթերցուած, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի լուսաւորութիւն մանկանց Սիովնի : Բայց արդ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի եւ անարժան քահանայի Տիմոթի, ի խնդրոյ պատուական քահանայի Յակոբա յաշխարհիս Իտալացւոց ի քաղաքս որ կոչի Փերուժ, ընդ հովանեաւ սրբոյ աւետարանչիս Մաթէոսի : Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տառիս ուսմամբ կամ ընթերցմամբ, յիշեսջիք ի մաքուր աղաւթս ձեր զմեղապարտ գրիչս զՅակոբ, զմեղաւորս տանս Հայոց : Նաեւ զպատուելի քահանայ զԹորոս եւ զեղբայրն մեր Վարդան եւ զայլ միաբան եղբայրութիւնս եւ որք աշխատել են ի սմա. եւ որ յիշէ եւ ողորմի ասէ, գտցէ զողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ :*

*2. Վերջին կողի ներսի երեսին վրայ.* Questo libro e stato scritto nel anno secondo l'Armeni 751 et del sig. et a. 1617 sono apunto 315 anni. *Ասոր տակ նոյնը հայերէն, նոտարագիր՝*

*Գրեցաւ գիրքս ի թվն Հայոց ՉԾԱ. որ այժմ ԳՃԺԵ տարի է որ է ՌԿԶ. փառք Աստուծոյ. Յիսուսի Քրիստոսի.* mano di Thimoteo sacerdote Armeno.

Եղագիր՝ *Տոմինկոս Եակոբոս Մարոթոս յարքեպիսկոպոս Մարադլէսիս :*

Այլ գրչէ նոտր. *Սուրբ Մարիամու Եգիպտացւոյն :*

Codice di Lezionario scritto Roma sopra. l'Anno Armeno 751, (a cui corrisponda l'Anno del Sig. non già 1617, come sopra, ma sibene 1302) trasportato da dalla chiesa di S. Matteo Vangelista di Perugia a S. Maria Egiziaca di Roma dopo esser si mancati colà gli Armeni. Ed il Notatore dicendo sopra, che quasi do notata erano anni 315. Sa questi aggiungiamo all'Anno Armeno 551, l'anno 1066, della traslazione, cioè l'An. del Sig. 1617.

Ա. Կողին Ներսը. Evangelij et epistole si legono l'anno nel uffitio delli Armeni. No. 30.

*Այս եւ նոյնանման յիշատակագրութիւններէն կը տեսուի թէ ձեռագիրս, որ կը պատուէր Փերուճի Ս. Մատթէոս եկեղեցւոյ մէջ. 1617էն յանձնուած է Ս. Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցւոյն. եւ ընդունած է Թ. 30։*

## 4. (71)

# ՃԱՇՈՑ ՀԱՅԱԴԻՐ ԵՒ ՀՌՈՄԱԴԻՐ

Թ. 2։ — 1230։

ԹՈՒՂԹՔ՝ 250։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34 × 25։ — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, 25.5 × 17.3։ — ՆԻՒԹ՝ թուղթ. նորոգուած թուղթերը՝ մագաղաթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ ընդհանրապէս. թղ. 1—2 վերին եւ ստորին լուսանցքները եւ մասամբ բնագիրը ցեցակեր. թղ. 46—49, 130—139 մագաղաթ։ Սկիզբէն 7 թուղթ ինկած։ — ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր. նորոգուած մասերն սովորական բոլորգիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ հնատիպ. գունաւոր։ — ԳՐԻՉ՝ Գրիգոր։ — ՏԵՂԻ՝ Սրգնկա. Կապոսի վանք։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1230։ Ա. կողի ներսին կողմը լատին լեզուով մագաղաթ մը փակցուած։

*Մատեանս է* Գրիգորիս Վկայասէրի եւ Կիրակոս վարդապետի պատրաստած ճաշոց գիրք։

Հայադիր։ *Սկիզբէն 7 թուղթ ինկած, այժմ կը սկսի...։ յուարուց գրանս այս փրկութեան...* (*Գործք Առ. ԺԳ. 27*)։

*Բ. Նորին (Նաւասարդի) Թ. Սրբոց Աստուածածնայ. Սղմ. Ե. Տէր որպէս զին. բանից։ Պաւղ. ի Կորն ընթ. Ցամենայն ժամ զմահն Յիսուսի...։ Ալէ. Սղմ. Ի. Տէր զաւր. քում։ Աւետ. Մատթ. Աչաւասիկ ես առաքեմ...։*

*Թղ. 127ա.* Գրիգորիս Վկայասէրի Յիշատակարանը. *Այս ինչ կայ ի գիրս. եւ այս է Յիշատակարան տաւնից տէրունականաց եւ սրբոց Աստուծոյ...։*

*Թղ. 127բ—128բ.* (Յիշատակարանն Կիրակոս վարդապետի). *Ես Կիւրակոս տրուպ գիտնական...։*

*Այս երկու յիշատակարանները հրատարակուած են այլ եւ այլ անգամներ. վերջին անգամ Հանդ. Ամս. 1952, էջ 321—522 = Ակինեան, Մատենագրական հետազօտութիւններ. հատոր Ե. (Վիեննա 1953), էջ 208—209։*

*Հռոմադիր։ Թղ. 149ա. Յունուարի Ա. Սրբոյն Բարսղի եւ Գրիգորի Նիւսացւոյ եւ Եփրեմի։ Սղմ. ՃԼԱ. Յիշեա Տէր զԴ... կց. Քհք քո զ...*

Վերջ՝ *257ա. Նորին (Դեկտեմբեր) ամսոյ ԻԹ. Յակոբու առաքելոյ եւ Յովհաննու աւետարանչի։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ. 1. Թղ. 258ա. (Ձեռագրին նորոգման ժամանակ արտագրուած բնագրէն). Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Բայց դրեցաւ աստուածային զանձս ի տաւնախմբութիւն սրբոց մարտիրոսաց, ի թուականութեան Հայկազեան տումարի. ՈՀԹ. ի յեսան սուրբ Լուսաւորչիս յանապատիս որ կոչի Կապոսի. հրամանաւ պատուական քահանայիցն Վարդանայ եւ Սարգսի, որ են ի պաւառէն Եկեղեաց, ի գեղջէն որ կոչի Իւրիա։ Եւ զմտաւ ածեալ զճգնութիւն սրբոց մարտիրոսացն եւ զսէր սրբոցն զերկիւղ ամենայն կարեաց ի բաց մերժեցաք եւ ստացաք զսա մեզ ի ժառանգութիւն եւ յիշատակ ամենայն զարմից մերոց։ Արդ աղաչեմք զամենեսեան որք աւգտիք ի սմանէ, ուսանելով կամ կարդալով, կամ աւրինակաւ, յիշեսջիք ի Քրիստոս, որ աղաւթիւք սրբոց մարգարէից, առաքելոց եւ մարտիրոսաց, ողորմեսցի եւ թողութիւն շնորհեսցէ Վարդանայ եւ Սարգսի, եւ հաւր եւ մաւր իւրեանց, Սոսթանիսի եւ Աղզկանն եւ հոգեւոր զաւակացն Աթանասի եւ Յովսեփայ քահանայից եւ պատանեկին Յուսկանն։ Յիշեա Քրիստոս Աստուած ի քո արքայութեանդ*

զՎարդան եւ զՄարգիս, զԳրիգոր եւ զԳէորգ հարազատ եղբարք, եւ զքոյրեր մեր զՃիկնացն եւ զԿանացն եւ զփեսայնին մեր զՄնքնատիոս եւ զԹիոդոս եւ զԱփանէս խնամին մեր։ Տէր Յիսուս ողորմեա զրելոցս ի սմա եւ թողութիւն շնորհեա սոցա, եւ ինձ Միխիթարայ, որ զսակաւ յիշատակս գրեցի․ ողորմեա Տէր եւ քեզ փառք յաւիտեանս ամէն։

2. Թղ. 45բ. Ով աստուածասէրք եւ աստուածապաշտք որ ժողովեալ էք կատարել զտաւն պայծառակերպութեանն Քրիստոսի, յիշեսջիք զԹշուառականս զԳրիգոր գրող, բարի յուսով եւ սիրով. եւ ասասջիք. Քրիստոս քո սուրբ պայծառակերպութեամբդ ողորմեա. եւ որք զմեզ յիշեն. եւ քեզ փառք այժմ յաւիտեան։

3. Թղ. 126բ. Գրիգոր ամենաթշուառ գրիչ զամենայն ժողովեալքս աղաչեմ, մեղաց թողութիւն խնդրեցէք ի սուրբ Երրորդութենէն ինձ եւ իմոցն. եւ ձերաոցն։ Քրիստոս զձեզ յիշէ. իւր ողորմութեամբն։

4. Թղ. 257բ (բոլորգիր). Լեւոն շնորհաւքն Աստուծոյ եւ աւգնականութեամբն նորին թագաւոր ամենայն Հայոց, որդի հանգուցեալ արքային Հեթմոյ, վասն խնդրոյ Յոհաննիսի քահանայի, պարգեւեցաք զժամագիրքս զայս իւր եկեղեցւոյն սուրբ Մատթէոսի աւետարանչի, որ է ի Փերուժ քաղաք, ի յիշատակ մեր եւ նախնեացն մերոց։ Ի թվականութեանս Հայոց. ՉԻԲ։

5. Ասոր տակ յետին գոթիկ գրով յիշատակագրութիւն մը։

6. Աւելի վար. Յիշեսջիք եւ զիս զՀեթում Նուաստ սարկաւ. ով սուրբ ընթերցողք եւ զեղբայրն իմ զՂուկաս քահ. եւ զԱւշին սրկ. եւ որք յիշէքդ յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

7. Թղ. 258բ. Աղաչեմք յիշել ի Տէր եւ զվերջին ստացողք գրոցս զորբանեալ զքահանայքս զՅակոբ ձերունին եւ զԲասիլ զհոգեւոր որդին իւր զվերատեսուչք տանս Փերուժի եւ սպասաւորք սուրբ առաքելոյն եւ աւետարանչին Մաթէոսի։ Յիշեցէք եւ զծնողացեալ կրանաւորն Յրանց զկայմով եւ զնորոգող գրոցս։ Յիշեցէք եւ զգրող սակաւ յիշատակիս, եւ զամենայն եղբայրութիւնս ի բարին Քրիստոս. եւ Աստուած յիշելոցս եւ յիշողացդ առ հասարակ ողորմեսցի։

8. Թղ. 258ա մագաղաթեայ. զանազան գրերով յիշատակագրութիւններ.

Յանուն Աստուծոյ Մայտ Արգրին որ արար ողորմութիւն ի սուրբ Մաթէոս սկի մի ու զէկնէր. Քրիստոս արասցէ իր բարի հատուցումն։

Յակոբ Նոտարն, որ արար զսուրբ Մաթէոս իր ազգնացն չորրորդ բաժնին ժառանգ. Քրիստոս զնա արասցէ յաւիտենից կենացն ժառանգորդ։

Մունալա Բաղէթ զործն որ զգեաւին էրէտ ի սուրբ Մաթէոս. Քրիստոս նմա տա զերկիրն կենդանեաց։

Անձրուց փանդանն, որ էրէտ գ։ ժ։ լիվր ի սուրբ Մաթէոս չէնքն. Քրիստոս նմա տա տեղի հանգիստ։

Ճերն ու իր հայրն Պէթ ու մայրն Լիզա, որ ավին պատարագի մամ։ Քրիստոս զնոսա լուսաւորէ։

Կօլն որ բէրին վասն իւր հօգոյն բէրնմ քախցու։ Քրիստոս նմա արքուցանէ բաժակ կենաց։

Պէյլօ մարքաթանիթ, որ էրէտ. Գ. լիւր։ Քրիստոս նմա ողորմեսցի։

Օրմանն էրէտ։ Ժ։ լիվր։ Քրիստոս արասցէ նմ(ա) քաղցր դատաստան։

Դաւնա Աւրրէթան. եւ Տէր ողորմեսցի նմայ։

Ֆրանց փուքալէր (?)։ Գ։ լիվր։ Ժե. սաւլ ողորմութիւն երէտ։ Աստուած իւր հոգոյն առնէ ողորմութիւն յաւուրն աներեկի։

Ես Աննէս։ Մսեր Պաչմին. մատուցա Մելտին ու Ճուանէս որ տուաք սկի ի սուրբ Մաթէոս. որ լինի(ն)ք մասնակից աղաւթից եւ պատարագաց։

Պիունտուլայի. ողորմի Աստուած իր հոգ(ոյն). չաւլին թողել է. ԻԵ. սաւլ։

*Թղ. 259ա. Մսէր ձուան Դեւոս կատա-լեր ձեզ աղաւթին անձին է։*

*Մանրագիր.* Epistole et evangelij quotidiani per tutto l'anno.

*Միջակ գրով այլ գրչէ.* Codice Lezionario di Rito antico Armeno dell' Offizio, e Messa di tutto l' Anno, del pugno, come pare, di Gregorio Patriarca II, morto nel 1105, il quale lo arriche di più Santi con le rispettive Lezioni, prendendoli dalla chiesa Greca. E questo Codice il Re Armeno Leone III. di Cilici lo ha dedicato alla Chiesa Nazionale di S. Matteo Vangelista degli Armeni di Perugia a Richiesta di D. Gioanni l'A. 1279, come nel suo monumento posto sul penultimo foglio. Mancati poi gli Armeni in detta citta, è stato mandato a Roma con altri Codici.

*Ասոր տակ, առանձին թղթի վրայ գրուած եւ կպցուած, նոր շղագիր (կը թուի Վենետիկի Մխիթարեան Հայր մէկէն). Հ. Մ. Աւգերեան առած է ձեռագիրս։*

*Վրիպակ է կարծիքս. նախ զի յետկայս մատենիս գոյ թուական գրութեան սորա* 1220 (կարդա՛ 1230) *ՈՀԹ. Երկրորդ՝ զի այս է գրիչ սորա, եւ այլ յօրինիչ, սակայն համանունութիւն նոցա տեղի տայ շփոթութեան։ Եւ երրորդ՝ զի Գրիգորս այս յօրինիչ եւ կարգաւորիչ ընթերցուածոցս ոչ է Վկայասէրն առաջին՝ որ մեռաւ յամին* 1105, *այլ երկրորդն Վկայասէր, եղբայր Շնորհալւոյն՝ որ եւ Գրիգոր Գ. որ մեռաւ յամին* 1165։

## 5. (72)

## ՄԱՇՏՈՑ

Թ. 29։ — 1683։

ԹՈՒՂԹՔ՝ 207։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18 × 11,7. — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ. հնացեալ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ Ա թերթը ինկած։ Թղ. 1 պատառոտուած, թղ. 2—4 խոնաւութենէ վնասուած։ — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐ եւ ԶԱՐԴԱԳՐԵՐ կան։ — ԳՐԻՉ՝ անյայտ։ — ՏԵՂԻ՝ Տարե։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1683։

*Ատեանս է Մաշտոց, որ կը բովանդակէ.*

1. *Թղ. 1ա. այժմ կը սկսի Դրոշմի խորհուրդէն։*

2. *Թղ. 6ա. Կանոն Նշան աւրհնելոյ։ Ասէ Տր. Խորհուրդ անձառ...*

3. *Թղ. 9բ. Կանոն հանդերձ Հարսանեաց օրհնել։ Եւ ասեն երրորդ ժամն (զԳանձս) Խաչանշան դրոշմամբ նշանաւ պարակրական փառօք զարդարեալ... (տուեք՝ Խաչատուր ՌՃՀՈՇԱ (Թղ. 9բ—10բ)։ Թղ. 14ա. Փեսային եւ հարսին խրատն եւ քարոզն այս է. ի ժամ հարսանեաց քարոզէ եւ ասէ. Զինչ որ առաքեալքն եւ հայրապետքն գրել են Կանոնքս, այսօր ձեզ յայտնի կանեմ առաջի Աստուծոյ...։ Թղ. 17բ. Խրատ զգուշութեան զոր տացէ քահանայն հանդերձելոցն առաւել ասնել կանխաւ... Գիտասջիք, որդեակ, որ հանդերձեալ էք կապել ընդ միմեանս յծով օրինաւոր ամուսնութեամբ...։ Թղ. 25բ. Եւ ասեն զերգս աւրհնութեան պսակին.*

*Ամենազօր տէր թագաւոր թագաւորաց. Թագաւորիս մեր զգեցոյ հանդերձ փառաց...։*

4. *Թղ. 36ա. Կանոն պսակ վերացուցանելոյ։*

5. *Թղ. 37բ. Կանոն հազորդ տալոյ.*

6. *Թղ. 41բ. Կանոն մեծաթաղն (մեռելաթաղի). յորժամ զամենայն ննջեցեալսն ի Քրիստոս յուղարկեն։*

7. *Թղ. 56ա. Գանձ թաղման ննջեցելոց. Մինդ ի յէէն, բանդ ի սկզբանէ... (Տուեք՝ Մանվէլս)։*

8. *Թղ. 59բ. Ողբ ննջեցելոց. Ով քահանայք եւ վարդապետք աստուածաբանք...։*

9. *Թղ. 60ա. Կանոն Այգալացին։*

10. *Թղ. 65բ. Կանոն եւթն աւուրն։*

11. Թղ. 72ա. Կանոն Տղայ թաղելոյ:

